ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԵՂԲԱՐՔ ԹԱԴԷՈՍԵԱՆՆԵՐԻ

ՀԱՅԵՐԻ
ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ

ԺԹ դարում

կամ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՁՈՐՈՐԴ ՇՐՋԱՆԸ

ԳՐԵՑ

ԵՂԻՇԷ ՎԱՐԴԱՊԵՏ ԳԵՂԱՄԵԱՆՑ

Протоіерей Егишэ Гегамянцъ. Освободительное движеніе армянъ въ XIX стол.

Перепеч. изъ журнала „Овитъ"

ԳԻՆՆ Է 70 ԿՈՊ

ԲԱԳՈՒ

Էլեքտրա-տպարան Ն. Ա. Երևանցևանի

Электро-тип. Н. А. Эриванцова, Баку.

1915

9(47-925)
Դ 42

ՀԱՅԵՐԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ԺԹ ԴԱՐՈՒՄ

(ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՁՈՐՈՐԴ ՇՐՋԱՆԸ)

Ա.

Եկատերինա Բ.-ը 1783-ին ի պաշտօնէ Վրաստանը ընդունեց Ռուսիոյ հովանաւորութեան ներքոյ, իսկ 1801-ին փետրուարի 16-ին Պաւէլ կայսրը ի պաշտօնէ Վրաստանը միացրեց Ռուսիայի հետ։

Միացման հանդէսին Սիօնի մայր եկեղեցումներկայ գտնուեցաւ նաև, 6 օր առաջ Թիֆլիզ ժամանած, Արղութեան Յովսէփ կաթողիկոսը։

Սիօնի տաճարի հանդէսի հետեւեալ օրը, այդ միացման առթիւ, մի այլ հանդէս էլ հայոց Վանքի մայր եկեղեցում հայոց կաթողիկոսը կատարեց այնպիսի շուքով ու փառահեղութեամբ, որ մինչև այդ օրը դեռ տեսնուած ու լուած չէր Թիֆլիզում։

Վրաստանին տիրելուց յետոյ ընակաւալ Ռուսիան պիտի աշխատէր հետզհետէ տարածել իր իշխանութիւնը և ընդլայնել իր սահմանները և հաւիւ Անդրկովկասին, ուր ռուսական այդ քաղաքականութեանը նպաստող առաջին և գլը-

խաւոր տարրը ներկայանում էին հայերը, ինչպէս որ Պետրոս Մեծի և Եկատերինա Բ.-ի ժամանակի փորձերը ցոյց էին տալ։

Ուստի և 1801 թ. յունուարի 23-ին Վրաստանի կառավարիչ Կնօրինգին տուած հրովարտակումը Պաւել կայսրը պատուիրում էր «աշխատել մօտենալ Հայաստանին առևտրական յարաբերութեան միջոցաւ և ի նկատի ունենալ ձեռք բերել այդ երկիրը բարեհաճ համաձայնութեամբ։

Իսկ Վրաստանի միացումից 7 ամիս յետոյ, այն է 1801 թ. սեպտեմբերի 12-ին նոյն Կնօրինգին տուած հրովարտակում Աղեքսանդր կայսրը գրում էր. «Ձեր առանձին աշխարհութեանն ենք յանձնարարում գրաւել հայոց ազգին ամեն տեսակ փայփայանիով»։

«Այս ազգը ամենայուսալի տարրն է մեր ազգայնութեան ոյժը միացնելու և միևնոյն ժամանակ քրիստոնէութեան արտաքին կապը ամրապնդելու։ Ուստի մենք բարեհաճում ենք պատուիրել Ձեզ, որքան կարելի է էջմիածնի հայոց կաթողիկոսական վանքը Ձեր հովանաւորութեան ներքոյ ունենալ և նրա գլխի հետ բարեկամական յարաբերութիւն պահպանել» *)։

Բ.

Կնօրինգին տրուած այս հրահանգից ճիշտ մի տարի յետոյ, այն է՝ 1802 թ. սեպտեմբերին նրան յաջորդ նշանակուեցաւ իշխան Ցիցիանովը,

*) Акты, т. I, եր. 436.

թէև ազգաւ վրացի, բայց Մոսկուայում ծնուած և երիտասարդութեան ժամանակից՝ տաճիկների, լեհերի և պարսիկների դէմ մղուած պատերազմներին մասնակցած լինելով՝ յայտնի գեներալ էր դարձել և իշխանութեանը սիրելի, առաւելապէս իր զինուորական փորձառութեամբ և ժիր ու գործունեայ բնաւորութեամբ։ Սակայն միւս կողմից՝ Իշխան Ցիցիանովը շատ անձնասէր, հըպարտ, տաք և յանդուգն մարդ էր,—յատկութիւններ, որոնք թոյլ չէին տալիս նրան պարտ ու պատշաճ լրջութեամբ վարել Վրաստանի կառավարչապետի փափուկ և պատասխանատու պաշտօնը։

Վրաց թագաւորազունների հետ նա սկսեց շատ խիստ ու կոպիտ ձևով վարուել և բռնի կերպով աքսորել նրանց։ Վրաց թագաւորական ցեղին Իշխան Ցիցիանովը «օձի ծնունդ» էր անուանում և ոչ մի առիթ ձեռքից չէր փախցնում նրանց վիրաւորելու և նուաստացնելու համար։

Ցիցիանովի այդ տեսակ վարմունքի հետեւանքներից մէկն էլ այն եղաւ, որ վրաց Մարիամ թագուհու դաշոյնին զոհ գնաց գեներալ Լազարևը, որին Ցիցիանովը հրամայել էր անկողնուց թագուհուն բռնութեամբ դուրս հանել աքսոր քշելու համար։

Թագաւորազունների և վրացիների հետ ունեցած վարմունքիցը լաւ չէր Ցիցիանովի վարմունքը պարսիկների և նրանց խաների հետ։ Եւ

վերջիններս, որոնք Պատեմկինի ժամանակից սկսեալ հետզհետէ այն մտքին էին յանգել, որ իրենց համար աւելի ձեռնտու է Ռուսիայի հպատակը լինել, քան շահի,—Իշխան Ցիցիանովի զոռոզ, ինքնահաւան և վիրաւորական վերաբերմունքը տեսնելով շարունակ՝ իրենց միտքը փոխեցին և սրտերը դէպի Պարսկաստանը ուղղեցին՝ գաղտնի կերպով զրգռելով իրենց հաւատակիցներին ռուսաց դէմ և ներքին շփոթութիւններ յարուցանելով։

Իշխան Ցիցիանովի վարմունքի մասին ճիշտ գաղափար կազմելու համար՝ բաւական է առաջ բերել մի փոքրիկ կտոր այն նամակից, որ նա գրել էր մի յայտնի խանի. «Քո հոգին՝ շան հոգի է, իսկ խելքդ՝ իշի խելք... Սպասում եմ, որ իմ կօշիկները քո արիւնով լանամ» *)։

Իր այդ վարմունքը և անսանձ լեզուն էր պատճառը, որ Իշխանը ինքը ևս զոհ դնաց Բաղուի խանի դաւաճանութեանը՝ հէնց այդ քաղաքի իր անունը կրող փողոցում, ուր այժմ նրա կոթողն է կանգնեցրած։

Մահմեդական խաներից ոչ պակաս ռուսաց դէմ զրգռել սկսեցին իրենց ժողովրդին նաև վրաց թագաւորական տան այն անդամները, որոնք Ցիցիանովի հալածանքներից խոյս տալով ոմանք Իմէրէթիա էին փախել, ոմանք էլ հայրենի լեռներին ապաւինել։

*) Акты, т. II, № 1414.

Կախէթիայի մէջ անկարգութիւններն աշկարայ սկսած էին, իսկ ուրիշ վայրերումն էլ խուլ տրտունջները գնալով շատանում և բարդւում էին։ Դժգոհութիւնը ընդհանրանում էր։

Ռուսաց սակաւաթիւ զօրքի մասերն երբեմն այս կողմն էին ուղարկւում, երբեմն այն կողմը, բայց բացի այն, որ դրանից մի առանձին օգուտ չէր լինում խաղաղութեան համար, այլ նաև զօրքերն իրենք էլ էին տանջւում ու նեղանում անդադարաշարի կարի սակաւութիւնից։

Այժմ դառնանք իշխան Ցիցիանովի վերաբերմունքին դէպի հայերը։

Գ.

Վերևում մենք տեսանք, որ Պաւէլ և Աղէքսանդր կայսրները յատուկ հրովարտակներով հրահանգում էին Կնօրինգին սիրաշահել և փայփայել հայերին և նրա հոգևորականութեանը՝ ի դէմս Էջմիածնի կաթողիկոսի։

Նոյնպիսի հրահանգ տուեցաւ Աղէքսանդր կայսրից և Կնօրինգի յաջորդին —իշխան Ցիցիանովին, որին կայսրը պատուիրում էր թէ՝ «հայերը իբրև վաճառական ազգ և Ասիայի այս մասի ամբողջ առևտուրը իրենց ձեռքումն ունենալով արժանի են ձեր յատուկ ուշադրութեանն ու պաշտպանութեանը, որովհետև Պարսկաստանում հարստահարութեան ենթակայ լինելով անտարակոյս նրանցից շատերը կը հաստատուեն Վրաստանի մէջ, երբ համոզուեն, որ մի բարե-

կարգ տէրութիւն է ապահովում նրանց» *)։

Բայց կայսերական այս հրահանգն իշխան Ցիցիանովը ոչ միայն չէր կատարում, այլ նաև դէպի հայերը ատելութեամբ լցուած՝ ամեն տեսակ վիրաւորանք հասցնում էր նրանց թէ բանիւ և թէ գրով։

Նա իր պաշտօնական թղթերի մէջ երբեմն հայերին անուանում էր «յիմար»։ երբեմն «երկչոտ», երբեմն «ջհուդ» **)։

Հայերի մասին եղած հարցերին նրանց համար վնասակար ընթացք էր տալիս։ Նրանց օրինական պահանջները չէր կատարում։ Մինչև անգամ կառավարութեան համար հայերին վնասակար ազգ էր համարում ***)։

Եւ չնայած այս ատելեան անվստահութեան ու ատելութեան դէպի հայերը՝ իշխանը հարկ եղած ժամանակ շարունակ օգուտ էր քաղում Անդրկովկասեան հայերի մեծ և փոքր ծառայութիւններից։

---

*) Акты, Բ. եր. 9:

**) Акты, Բ. №№ 70 և 667:

***) 1804-ին Ցիցիանովը 2 ամիս Երևանի բերդը պաշարելով ձեռնունայն յետ դարձաւ՝ իր հետ տանելով էջմիածնի ամբողջ զարդերը, անօթները, ակնեղէնները։ 1805-ին էլ գէներալ Նէվէտայեվը Ցիցիանովի պակասը լրացրեց։ Այս կրկին կողոպուտների մանրամասնութիւնը տես իմ «Պատմական քաղած»-ի Բ. պրակի 73—74 և 77—80 երեսները։ Նոյնպէս և «Պատմական նիւթեր» յօդուածը «Հովիւ» 1909 № 43.

Իսկ երբ որ վերևից պատուիրում էին Ցիցիանովին կառավարութեանը ծառայութիւն մատուցանող հայերին պարգևի առաջարկել,—նա իր առաջարկութիւնները այնպիսի հոգով ու ձևով էր անում, որ առաջարկուողները ոչինչ չէին ստանում։

Եւ դեռ մասամբ էլ նուաստանում էին կառավարութեան աչքում *)։

Իբրև ապացոյց իշխան Ցիցիանովի տարդի վարմունքին դէպի հայերը՝ յիշենք մի երկու դէպքեր։

Դ.

Արղութեան Յովսէփ կաթողիկոսի անակնկալ մահը մեծ հարուած եղաւ ռուս քաղաքականութեան համար։

Նրա օգնութեամբ կառավարութիւնը մրքումը դրած ունէր տիրանալ հայոց Մայր Աթոռին և առհասարակ Արարատեան աշխարհին։

Ինքը՝ կաթողիկոսը ևս այդ բանը իմանում էր։ Եւ մեծայոյս էր, որ Արարատեան աշխարհը պարսից ձեռքից դուրս գալուց յետոյ, ուր ուրեմն ինքը կը տեսնի անկախ Հայաստանը և «հայ ազգի ոսկեդարը», ինչպէս որ կրկնում էր միշտ։

Արղութեանին փոխարինող մի այլ եպիսկոպոս, թէև անհամեմատ նուազ արժանիքով, այդ միջոցին միմիայն Դաւիթն էր, Յովսէփի կուսակիցն ու մտերիմը։

---

*) Акты, Բ. №№ 71, 386:

Այդ էր պատճառը որ ռուս արքունիքը, զանազան քաղաքական և բռնի միջոցներով, կարողացաւ նրան կաթողիկոսացնել։

Բայց յետոյ՝ տեսնելով հայ ազգի մէջ յառաջացած յուզումներն՝ ստիպուած եղաւ Դաւիթին փոխարինել Դանիէլով։ Եւ այդպիսով առաջ բերեց «Դաւիթ-Դանիէլեան» տասնամեայ անցքերն *)։

Այդ անցքերից մեծապէս տուժեց նախ և առաջ հայ ազգը։ Եւ ապա երկրորդաբար ինքը՝ ռուս կառավարութիւնը։

Որովհետև այն ամեն ծառայութիւններն, ինչ որ Յովսէփ կաթողիկոսը կարող էր մատուցանել կառավարութեանը՝ Արարատեան հայերին զրգռելու, կամ ցոյցեր անելու, կամ գաղթելու և այլն,—այժմ այդ ծառայութիւնները անելու ստիպուած էին ռուս զօրապետները նորանոր և յարմարաւոր գործակալներ, ագէնտներ որոնելով և գտնելով հայերի մէջ։

Իշխանի Ցիցիանովի բաղդից՝ Թիֆլիզի հայերի առաջնորդ Յովհաննէս արքեպիսկոպոս Գէղարքունիքը արդէն յայտնի էր իր ռուսասիրութեամբ և Դանձակի տակ ռուսների և պարսիկների մէջ մղուած ճակատամարտում ռուսներին

---

*) «Դաւիթ-Դանիէլեան» անցքերի մանրամասնութեան անփոփումը տես իմ «Պատմ. քաղուածների» Բ. պրակում։

մատուցած ծառայութիւններով թէ անձամբ և թէ Աշտարակցի երիտասարդ Ներսէս աբեղայի միջոցաւ։

Անաւասիկ այդ Յովհաննէս արքեպիսկոպոսին իր ձեռքի տակ ունենալով՝ իշխան Ցիցիանով Երևանի հայերից կարողացաւ երկրորդական աշխարհիկ ազնուներ ճարել և նրանց միջոցաւ այս ու այն գործը կատարել տալ։

Այդ տեսակ գործերից գլխաւորն էր այն ժամանակ աւերուած ու ամայացած Վրաստանը, ևս և Լօռին շէնացնել Երևանցի գաղթականներով։

Այս ծրագիրը գլուխ բերին իշխան Ցիցիանովի ազնուականները, որոնց մէջ ամենից գործունեայ երևեցաւ Կաճկաճեան ազգանունով զինուորական պաշտօնեան։ Եւ ահա ԺԹ. դարու սկզբից խանի հպատակ հայերը փոքրիկ խմբերով սկսեցին սահմանն անցնել թագնաբար։ Եւ այդ հոսանքը հետզհետէ սաստկանում էր։

Այսպէս՝ 1804 թուականում 2000 գերդաստանից բաղկացած մի խումբ հայեր պատրաստուեցան դարձեալ սահման անցնել, սակայն իրենց հետապնդող պարսիկների ձեռքից ազատուելու համար՝ որոշեցին անցնել Ղարսի կողմերը՝ Տաճկաստանում։

Այս բանը Ցիցիանովի հաշին չէր գալ։ Ուստի նա Գեղարդակրին Փամբակ ուղարկեց, որպէսզի յորդորէ փախստական հայերին ոուսաց կողմն անցկենալու։

Այսպէս էլ եղաւ։

Ցիցիանովը նրանց տեղաւորեց Լօռուայ վիճակում։

Քիչ յետոյ՝ 1000 տուն նորից եկան այնտեղ։ Իսկ 1805-ին Երևանի Մեացած հայերն ևս կամեցան գաղթել։

Իշխան Ցիցիանովը փութաց Յովհաննէս արքեպիսկոպոսի միջոցաւ յորդորել նրանց, որ շուտով իրենց ցանկութիւնը գլուխ բերեն։

Ահա թէ ինչ էր գրում իշխանը Գեղարքակրին. «Ձեր գերապատուութեան ջերմեռանդութիւնը գիտենալով խոնարհաբար խնդրում եմ շտապել այստեղ ուղարկելու Երևանի հայերին, որոնց իւրաքանչիւր գերդաստանին կը հրամայեմ տալ պատրաստի տուն, այգի և արտ, որ կարծեմ նրանց համար խիստ շահաւէտ պէտք է լինի, միայն թէ նրանք չլինեն ոչ վանքերին, ոչ մելիքներին, ոչ իւզբաշիներին պատկանեալներից, այլ ազատ գիւղացիներ, ինչպէս, օրինակի համար, Գեղարդի բնակիչներն են։ Իսկ այստեղ նրանք Մեալու են առաջուայ կարգադրութեան համաձայն, այսինքն հարկերը երեք տարի շնորհուած կը լինին և ոչինչ ծառայութիւն նրանցից չի պահանջվի։ Իսկ երեք տարուց յետոյ՝ նրանք կը պարտաւորին նշանակուած հարկը վճարելու։ Բայց խնդրում եմ շատ շուտով ուղարկեք, որպեսզի կարողանան այս իսկ աշնան երկիրը վարել գալ տարուայ համար» *)։

*) Акты, Բ., եր. 625։

Այս խոստումներից հրապուրելով մի խումբ հայեր, 1000 դերդաստանի չափ փախան Փամբակի նահանգը Մելիք-Աբրահամի և իւզբաշի Գաբրիէլի առաջնորդութեամբ։

Զ.

Վերջիններս իրենց Փամբակ հասնելն իշխան Ցիցիանովին յայտնելով խնդրում էին շտապել Երևանի մնացած հայերի օգնութեանը հասնել և նրանց ևս օգնել այս կողմն անցնելու *), իսկ իրենց թոյլ տալ, որ մինչև այն ժամանակ Փամբակի կողմերում բնակուին։

Ցիցիանովը քաջ գիտենալով, որ այդ հայերը չեն կարող այլևս Երևան վերադառնալ, միւս կողմից անպօր լինելով այն միջոցին Երևանի նուաճումը իրագործել, մի նոյն ժամանակ իր դրութիւնը ծածկել ջանալով և վերջապէս ցանկանալով այդ աշխատասէր երկրագործներին քանդուած Վրաստանում ունենալ, այլ ոչ Փամբակում՝ մելիք Աբրահամին և Գաբրիէլ իւզբաշու նամակին պատասխանեց ահա թէ ինչ ձևով։

— «Ձեր նամակը ստացայ և ահա պատասխանում եմ, փոփոխամիտ հայեր, ախտաւորուած պարսկական հոգւով, — այժմ դուք մեր հացի վրայ եկաք յուսալով թերևս գնելու այն, բայց ևս

*) Երևանի խանը կամեցաւ հայերին Պարսկաստանի ներսի կողմը քշել, որպէսզի Ռուսից ազդեցութիւնից նրանց հեռացնէ։ Հայերը չենազանդեցան և փախան։

հիմիկուանից ձեզ յայտնում եմ, որ եթէ ձեր բերած գերդաստանները այս իսկ աշնան չվարեցին այնքան երկիր, որ հետևեալ տարին կարելի լինի առատութեամբ հաց ծախել, այն ժամանակ խմացած կացէք, որ հետևեալ գարնան նրանց կը քշեմ ոչ միայն դէպի Երևան, այլ նոյնիսկ դէպի Պարսկաստան, որովհետև Վրաստանը պարտաւոր չէ ձրիակերներին կերակրելու։

«Եւ որովհետև,—շարունակում է իշխանը,—դուք ինձանից օգնութիւն էք խնդրում Երևանում մնացած հայերի համար, որոնք կորչում են անհաւատների ձեռքից, ուստի ես ձեզ հարցնում եմ. արդեօք մատնիչները արժանի՞ են պաշտպանութեան։ Թող կորչին նրանք շանն նման. նրանք արժանի են այս վիճակին, որովհետև անցեալ տարի, երբ ես ռուսական անպարտելի զօրքերով պաշարել էի Երևանի բերդը՝ կարեկցութեան արժանի այդ անձինքը բռնել էին Նարին-Ղալան և կարող էին ինձ յանձնել։ բայց չյանձնեցին» *)։

Այսպիսի գժնեայ պատասխանից յետոյ՝ իշխան Ցիցիանովը շարունակ Երևանի և նրա շրջակայ հայերին գաղթեցնելով շէնացնում էր Վրաստանը և Լօռին **)։

---

*) Акты, Բ. եր. 627։

**) Ցրնթացս 1804 և 1805 տարիների Երևանի կողմերից Վրաստան և Լօռի գաղթեցրած հայերի մանրամասնութիւնները տես Акты, հատ. Բ. եր. 211, 276, 615, 628, 696, 867 եայլն։

Իսկ այդ հազարաւոր հայերը, բացի այն, որ իրենց ունեցած չունեցածից զրկուեցան, այլ նաև ցրուից ու քաղցածութիւնից, եւ և երկարատև մաշիչ տենդից հայեր ջնջուեցան։ Իսկ նոյն թուականներում (1804 և 1805) տեղի ունեցած ժանտախտը գաղթականների $^1/_4$ մասի կեանքը խլեց։

Այնուամենայնիւ դարձեալ հայերն էին, որ Ցիցիանովի բանակին ճանապարհ էին ցոյց տալիս, նրան վառօդ ու պաշար հասցնում, նրա համար լրտեսութիւն անում, նրան նեղ դրութիւնից ազատում, նրան աշակից հայ կամաւորների խմբեր կազմակերպում և այլն, և այլն։

Եւ հէնց այս պատճառաւ, այսինքն Ցիցիանովին մատուցած այսքան ծառայութիւնների համար էր, որ նոյնիսկ Ռուսիոյ հովանաւորութեան տակ մտած պարսիկ խաներն ևս իրենց հերթում սկսեցին գաղտնի ու յայտնի կերպով տանջել, չարչարել իրենց կալուածներում ապրող հայերին։

Լ.

Իշխան Ցիցիանովին յաջորդեցին նոր կառավարչապետներ։ Դրանք Կովկաս գալիս էին թէև ամենալաւ ցանկութիւններով, սակայն միանգամայն անծանօթ երկրին և դրութեանը։ Այդ էր պատճառը, որ կառավարչապետների շուտ-շուտ փոփոխմամբ՝ ազգաբնակութեան դրութիւնը չէր բարւոքում և մտքերը չէին խաղաղում։

Ժողովուրդը աւազակներից տառապում էր, ցրտից կտտրւում և հիւանդութիւններից հալ ու մաշ լինում։ Բայց դրանցից աւելի ազգաբնակութիւնը տառապում էր ստորին պաշտօնեաներից, նոյն իսկ նրանց չարագործութիւններից։

Դրանցից առաջանում էին ապստամբական շարժումներ և ուրիշ անկարգութիւններ, որոնք յաճախ շատ նեղ տեղն էին լծում ռուս զօրքին, որոնք փոքրիկ խմբերով ցրւած էին երկի ամեն կողմը։ Պէտք է ասել սակայն, որ ժողովրդի ցոյցերն ու արած անկարգութիւնները իշխանութեան դէմ չէր, այլ միջին և ստորին պաշտօնէութեան դէմ, որոնք ի չարն էին գործադրում բարձրագոյն իշխանութեան տւած իրաւունքները։ Եւ այդ պաշտօնէութեան նկատմամբ էր, որ ցուցարարները գանգատւում էին մարկիզ Պաուլուչի կառավարչապետին ասելով թէ՝ «մենք խնդրեցինք ռուս թագաւորի հովանաւորութիւնը և Աստուած պարգևեց մեզ այն։ Սակայն նրա ծառաների անարդարութիւնն ու խըստութիւնը՝ կատարելապէս յուսահատեցրին մեզ *)։

Ցուցարարներն ու ապստամբները, նամանաւանդ պարսիկ խաները, որոնց երմօլով կառավարչապետը սկսել է շատ հուպ տալ վերջերումը, լոկ գանգատով չէին բաւականանում այլ անդադար պարսից կառավարութեան հետ թաղուն յարաբերութիւն էին անում՝ նպատակ ու-

*) Акты, Ե. № 97.

նենալով ռուսական հովանաւորութեան տակից դուրս գալու։

Աղա Մահմէդ խանի արշաւանքից յետոյ՝ Ռուսիոյ մահմէդական տարրը առհասարակ չէր կարող հաշտ աչքով նայել ռուսական իշխանութեան տարածելին ու հաստատելը Անդրկովկասում։ Եւ միշտ առիթի էր ման գալիս այս կամ այն կերպով վերականգնել նախնի մահմէդական տիրապետութիւնն ու իշխանութիւնը։

Այդպիսի առիթներն էլ պակաս չէին։

Նապոլէօն առաջինի հռչակը Եւրոպայում, Ֆրանսիայի դեսպանների զրգռութիւնը և Անգլիայի գաղտնի ենտրիգները՝ արծարծում և սընուցանում էին Անդրկովկասեան մահմէդական ազգաբնակութեան տենչութիւնը դէպի ռուսները։

Սակայն երբ Նապոլէօնը Ռուսաստանից ամօթահար յետ դարձաւ 1812 թւականում և երբ պարսից և ռուսաց մէջ յաճախակի տեղի ունեցած ընդհարումները միշտ յօգուտ ռուսների էր վերջանում,—այն ժամանակ ահա պարսիկ կառավարութիւնը բարւոք համարեց հաշտուել ռուս կառավարութեան հետ։

Այդ հիման վրայ 1813 թ. հոկտեմբերի 12-ին Գիւլիստանի դաշնագիրը կնքուեցաւ, այն պայմանաւ, որ կուռդ երկու կողմի ձեռքներին մնան այն երկիրները, որոնք նրանց իւրաքանչիւրի տիրապետութեան տակն են գտնուում մինչև դաշնագրի կնքումը։

Այս հիման վրայ՝ Ռուսիայի սեփականութիւն համարուեցան Ղարաբաղի, Գանձակի, Շէքիի, Շիրվանի, Դէրբէնդի, Ղուբայի, Բաքուի և Թալիշի խանութիւնները։ Նոյնպէս և ամբողջ Դաղստանը, Վրաստանը, Իմէրէթիան, Գուրիան, Մինգրէլիան, Աբխազիան։ Նոյնպէս և Կովկասեան գծի և նոր սահմանագլխի մէջ ընկած տեղերը։

Սակայն դաշնագրի կնքումից յետոյ նոր սահմանի որոշումը ձգձգուեցաւ երկու կողմից էլ։ Որովհետև պարսիկները մտադիր էին իրենցից խլած երկրի գոնէ մի մասը յետ վերցնել, իսկ ռուսները մտադիր էին էլ աւելի առաջ գնալ։

Այս պատճառաւ սահմանի որոշման առթիւ տեղի ունեցած բանակցութիւններն երբեմն սուր կերպարանք էին ստանում, և նոյնիսկ փոքրիկ ընդհարումների հասնում սահմանապահ զինուորների մէջ երկու կողմից։

Ուր ուրեմն Նապոլէօնի փախուստը Էլբա կղզուց և Նիկողայոս Առաջին կայսեր թագաւորութեան նախնթաց օրերում տեղի ունեցած, այսպէս կոչուած, «զեկտեմբերեան» շարժումները Ռուսաստանում՝ սիրտ տուին Պարսկաստանին Ռուսիային պատերազմ յայտարարելու։

Այսպէս ահա սկսուեցաւ 1826—1828 թ. ռուս-պարսկական պատերազմը։

Եւ հէնց այդ պատերազմով էլ «հայկական հարցը» մտաւ իր չորրորդ շրջանի մէջ։

Ը.

«Հայկական հարցի» չորրորդ շրջանի կազմակերպողը և ղեկավարը եղել է Աշտարակցի Ներսէս արքեպիսկոպոսը,—վերջերում կաթողիկոս։

Տակաւին արեղայ եղած ժամանակ՝ Ներսէսը ջերմ մասնակցութիւն ունեցաւ «Դաւիթ-Դանիէլեան» կուսակցերին իբրև վերջինիս կուսակից։ Եւ քիչ գործ չկատարեց յօգուտ նրա—Դանիէլի կաթողիկոսանալուն, ինչպէս որ որոշել էր ռուս կառավարութիւնը։

1803 թ. երբ իշխան Ցիցիանովը Գանձակը պաշարել էր՝ երիտասարդ Ներսէսն էր նմանապէս, որ Գեղարդակիր Յովհաննէս արքեպիսկոպոսի ձեռքի տակ՝ այս ու այն ծառայութիւնն էր անում ռուս բանակին։

Ապա՝ Դանիէլի մահանից յետոյ՝ 1809 թուականում Ներսէսը աւելի գործօն դեր խաղաց Եփրեմին կաթողիկոսացնելում, որ նոյնպէս որոշել էր ռուս կառավարութիւնը։

Իր այս երեք գործերով երիտասարդ Ներսէսը ապացուցեց իր ընդունակութիւնը և էջմիածինն ու հայ ազգը պարսկական լծից դուրս բերելու ջերմ ցանկութիւնը։

Ներսէսի այդ յատկութիւնները շատ և շատ ձեռնտու էին այն ժամանակ ռուս քաղաքականութեանը։

1814 թուին Ներսէսը նշանակուեցաւ Վրաստանի հայերի առաջնորդ և հաստատուելուց յե-

ՀԱՅԿԱԿԱՆ

տոյ՝ անմիջապէս ռուսաց հպատակութիւն ընդունելով՝ սկսեց աւելի եռանդուն կերպով գործել յօգուտ ոչ միայն եկեղեցու և իր հօտի, այլ նաև ռուս քաղաքականութեան, ինչպէս վկայում է ժամանակի կուսակալ Բոիշչեր կայսեր գրած մէկ թղթում, որով միջնորդում էր Ներսէսի վեղարի համար բոիլեանդ խաչ, որ և տրուեցաւ։

«Ներսէս արքեպիսկոպոսը դէպի ինքն է գրաւում,—գրում է կուսակալը,—սահմանակից Պարսկաստանում և Տաճկաստանում ապրող իր դաւանակից հայ ժողովրդին։ Եւ շատ դէպքերում նա մեծ օգուտ է տուել այս երկրի գործերին՝ իր հաւատարմատարների միջոցաւ ամենաճիշտ տեղեկութիւններ հայցնելով ինձ արտասահմանում տեղի ունեցած անցքերի մասին և Վրաստանի թշնամիների դիտաւորութիւնները խափանելով» *)։

Թ.

Ինչպէս յիշել ենք՝ 1826 թւի պատերազմը պարսիկները սկսեցին։ Եւ սկսեցին առանց յայտարարելու։

Յուլիսի 16-ին նրանց բանակը յանկարծակի յարձակուեց Փամբակի և Շորագեալի սահմանապահ և սակաւաթիւ ռուսական վաշտերի վրայ և սկսեց անողորմաբար ջարդել նրանց։

*) Акты, Б. № 523։

Եւ որովհետև այդ վաշտերը, ամենամեծ մասամբ, զետեղված էին հայկական գիւղերում, ռուս զինուորների հետ հայերն ևս, մինչև անգամ կանայք ու պատանիները, քաջութեամբ զիմադրելով ընկնում, սրախողող էին լինում պարսիկներից։

Այսպէս Փամբակի և Շորագեալի բազմաթիւ և ծաղկած հայ գիւղերը միքանի օրում անմարդաբնակ աւերակների վերածուեցան։ Այդ աւերակներն ու մօտակայ դաշտերը հայերի դիակներով լցուեցան։

Փախստականների մի շատ աննշան մասը հազիւ հազ իր շունչը Ջալալ-Օղլիում և Գարգառի գիւղերում կարողացաւ առնել։

Փամբակի և Շորագեալի գլխին այս զուլումը բերողը Հասան խանն էր, —Երևանի սարդարի եղբայրը։

Ժ.

Հասան խանի հետ միաժամանակ պարսկական մի այլ բանակ, 60,000 հոգով, Աբբաս Միրզայի առաջնորդութեամբ՝ Ղարաբաղի վրայ էր յարձակուել, Շուշի բերդին տիրելու։

Ճանապարհին պատահած սակաւաթիւ ռուս պահակների հետ՝ տեղական հայերին ևս կոտորելով ու նրանց տները այրելով *) վերջապէս

*) Այդ միջոցին էր, որ պարսիկները Տաթևի վանքը կողոպտեցին և աւերեցին և վանահայր Ներսէս եպ.-ին Գաւրիլ տանելով խեղդեցին։

Աբբաս Միրզան եկաւ բերդը պաշարեց, ուր ամբացած էր գնդապետ Ռէու

Թիֆլիզում եղած ռուս զորքի քանակը 3,000 հոգու էլ չէր հասնում։ Իսկ Աբբաս Միրզան բացի իր սեփական բանակից, իրեն աջակից և օգնական ունէր Անդրկովկասեան ամբողջ մահմեդական ազգաբնակութիւնը, որ աշկարայ ոտքի էր կանգնել և ապստամբութեան դրօշակ պարզել։

«Ղարաբաղի այս ապստամբութեան ժամանակ,—գրում է կուսակալ Երմոլովը,—տէրութեան յոյսը մնացել էր միմիայն հայոց վրայ, որպէս կրօնակիցներին»։

Իսկ հայերին շարժողը այդ ժամանակ Ներսէս արքեպիսկոպոսն էր, որ Երմոլովի խնդրանօք մի ընդհանուր շրջաբերական ցրուեց 1826 յուլիսի 20-ին, որով յորդորում էր հայերին՝ դիմադրել պարսիկներին և յուսադրում էր նրանց ասելով, որ եկել հասել է ժամը, երբ հայերը «պիտի տեսնեն Արարատեան աշխարհի և հայոց ազգի ազատութիւնը։ Հասել է ժամը, երբ Մայր Աթոռը պիտի վերականգնէ իր վաղեմի անկախութիւնը, ոտքի կանգնեցէք, հայոց քաջեր, թօթափեցէք պարսից լուծը, ուրախացրէք ալեզարդ Մասիսն, մի անգամ արիւնով ներկեցէք հայրենի հողերը և ապա ապրեցէք ազատ։ Ժամ է արդէն, ծն անդը, այժմ կամ երբէք»։

Այս շրջաբերականը, նմանապէս Ներսէսի մասնաւոր նամակներն այս ու այն քաղաքի ազդեցիկ հայերին՝ ունեցաւ իր ազդեցութիւնը։ Եւ

սպասածից աւելի սրտապնդեց և ոգևորեց հայերին։

Ի արիւնէ Ներսէսի այս ծառայութեանը՝ Թագաւոր կայսրը 1827 փետրուարի 2-ին մի հրովարտակ ուղարկեց Ներսէսին, որով նրան և նրա հօտին յայտնում էր «զկատարեալ բարեհաճութիւն Մեր և հաւատարմացուցանել զնոսա (հայերին) կայսերական բանիւ Մերով թէ յարատեւել ունին առ նոսա յատուկ ողորմութիւն Մեր։

«Զորչափ ժամանակ տեսցէ անյողդողդ հաւատարմութիւն ազգի Ձերոյ, որ գտեալն է զյուսալի տեղի ապաւինի ընդ հովանեաւ Գահին Ռուսիոյ, հարկ համարեսցուք Մեք հոգ տանել անքուն վասն բարեպաշտութեան նրա և անդորրութեան»։

Այս հրովարտակը հայերէն թարգմանութեան հետ Ներսէսը տպագրել տուց այսպիսի վերնագրով «Հոչակ ողորմութեան Ինքնակալի և Կայսեր ամենայն Ռուսաց Նիկողոսի Առաջնոյ առ ազգն Հայոց, որ ի Վրաստան» և հազարաւոր օրինակներով լցրուեց ազգի մէջ։

ԺԱ.

Կայսերական այս հրովարտակին անմիջապէս հետևեցաւ Բարձրագոյն կարգադրութիւն հայկական ռազմիկ գունդ ևս կազմելու։

Այս առթիւ Վրաստանի գօրքերի գլխաւոր հրամանատարը 1827 մայիսի 24-ին մի կոչ հր-

բատարակեց, որտեղ գրում է հետեւեալը՝ «անցեալ տարի՝ պարսից զօրքի մեր սահմանի վրայ յարձակելու օրից ի վեր՝ հայերը ցոյց տին կատարեալ քաջութիւն թշնամու դէմ, զրկանքների և թշուառութիւնների մէջ անդրդուելի համբերատարութիւն, անսահման անձնուիրութիւն դէպի քրիստոնէական կրօնը և օրինակելի հաւատարմութիւն դէպի ռուսական գահոյքը,--ուստի Թագաւոր կայսրը իր ողորմած ուշադրութիւնը դարձրեց իրեն հաւատարիմ հայերի վրայ։ Եւ թէպէտ թշնամոյն խորտակելու համար ռուսաց զօրքն էլ բաւական է առանց կողմնակի օգնութեան, սակայն Նորին Մեծութեանը հաճելի թւեցաւ, որ իրեն քաջ զօրքերի բանակում այստեղի հայերից մի առանձին գունդ ևս կազմի։

«Հայեր,--այսպէս է վերջանում կոչը,— ձեր եռանդը վարձատրութեան արժանի է, մեծ կայսեր ուշադրութիւնը ձեր վրայ է դարձած. դուք կունենաք ձեր զօրամասերը, ձեր սեփական դրօշակները, ձեր զէնք կը տրւի ձեր հարստահարւած եղբայրների մէջ խաղաղութիւնը հաստատելու համար, ձեր ընտանիքի կեանքը ապահովելու համար, կայսեր ողորմութեանը արժանանալու և հայրենիքին պաշտպանելու համար»։

Այս կոչին մեծ ոգևորութեամբ ձայն տին հայերը և համաձայն հրահանգի՝ ձեռաց կազմակերպուեցաւ հայոց զօրքը առանձին-առանձին բատալիոններով։

Ամեն մի բատալիոն ունէր՝

շտապ-օֆիցէր	1
կապիտան	2
շտաբս-կապիտան	2
պօրուչիկ	4
պօդպօրուչիկ	4
դանձապահ	1
ադիւտանտ	1
զուռնաչի	4
թմբկահար	4
ունտեր օֆիցէր	80
զինուոր	800
սայլապան	40

Այս գնդերը հետևակներ էին, որոնց կազմակերպողն եղաւ Ներսէս արքեպիսկոպոսը։ Գրիգոր եպիսկոպոս Մանուչարեանցն էլ 500 հոգուց բաղկացած մի հեծելազունդ կազմեց Ղարաբաղի հայերից.

Եւ ահա այս հետևակ ու հեծեալ հայ զինդերն էին, որ 1826—1828 թ. պատերազմի տեւողութեան մէջոցին անզնահատելի ծառայութիւններ մատուցին ռուսաց զէնքի յաջողութեանը։

Հայ հոգևորականութեան և հայ զինուորութեան այդ օրինակը մեծապէս շարժեց և հայ ազգաբնակութեանը առհասարակ։ Ամեն մի հայ մարդ՝ մեծ թէ փոքր տղամարդ թէ կինար-

ժատ,—ամենքը, ամենքը անխտիր իրենց ձեռքից եկած ծառայութիւնը և օգնութիւնը չէին խնայում ռուսներից, ինչպէս որ արդարացի կերպով վկայել է «Վէրք Հայաստանի» գրքի հեղինակը իր այս տողերով՝ «Ինչ որ պարսից կուի ժամանակ հայք արին, Աստծուն է յայտնի։ Թէ մարդ չիմանայ, քարերը վկայութիւն կը տան։ Հալբաթ որ մէկ արդար, անաչառ մարդ վրաստանու պատմութիւնը կը գրի, էն ժամանակը կերևի, թէ հայք ինչ արին, ինչ հաւատարմութիւն են ցոյց տուել տէրութեանը, ինչ արիւն են վերածել»...

ԺԲ.

Հայ ժողովրդի ընդհանուր համակրանքը դէպի ռուսները, նա մանաւանդ հայ հոգևորականութեան և երիտասարդութեան պաշտօնապէս զինուելն և ռուս զինուորների շարքի մէջ մտնելն, ինչպէս որ սպասելի էր, ընդհանուր գայրոյթ առաջ բերեց մահմէդական թէ բանակի և թէ՝ ազգաբնակութեան մէջ։ Կատաղութիւնն ու վրէժխնդրութիւնը՝ գնալով ստստկացան և խժդժութիւններ չմնացին, որ պարսիկները չգործէին հայերի վրայ, առաւելապէս անպաշտպան և անզէն գիւղերի վրայ։

Վերևում մենք տեսանք թէ ինչպէս 1826 թ. Փամբակի և Շորագեալի բազմաթիւ և ծաղ-

կած հայկական գիւղերն, մի քանի օրում, անմարդաբնակ աւերակների վերածուեցան։

Նոյն վիճակին ենթարկուեցան, 1827-ին նաեւ Դեղիջանի ձորի շրջակայ հայ գիւղերը։ Նոյն բաղանիին եւ նոյն վիճակին ենթարկուեցան Ղարադաղի հայկական գիւղերն։

Աւելի վատթար եղաւ Արարատեան դաշտի գիւղերի վիճակը, որովհետեւ մինչդեռ Ներսէս Աշտարակեցու առաջնորդութեամբ Բենկենդորֆի զօրավարի բանակը գալիս էր իբրեւ թէ այդ գիւղացիներին ազատելու,—բանից դուրս եկաւ, որ դաշտի վրայ տարածուած բոլոր հայերին պարսից կառավարութիւնը բռնութեամբ Արաքսի միւս ափն է անցկացրել՝ քանդելով նրանց գիւղերն և ոչնչացնելով նրանց պաշարը։ Պարսիկները, հարկաւ, չէին մոռացել դատարկել նաեւ Էջմիածնի հացի ամբարներն և մթերեզէնների շտեմարաններն։

Բացի դրանից՝ գիտնալով որ ռուսները Երեւանի վրայ գալու պատրաստութիւն են տեսնում,—պարսիկները նախօրօք արգելած էին դաշտի հայերին իրանց աշնանային և գարնանային ցանքսերն անելու, որպէս զի ռուսները պատրաստի հաց չուտեն հնձելու։

Եւ արդարև երբ ապրիլի 9-ին Ներսէսը Բենկենդորֆի բանակի հետ՝ Երեւանի դաշտը մտաւ,—փոխանակ իր յուսացած առատ հացի ու մթերքների տեսաւ ամայացած ու կո-

զոսլուած հայկական զիւղերի՝ ազէկտուր, անմարդարնակ աւերակները ևեթ *)։

Դարձեալ յուլիսի 7-ին երբ պարսիկները Արաս Արադ բերդը ռուսներին յանձնելով՝ իրենք հեռացան՝ ճանապարհին «բորբոքեալ անհնարին զայրացուկս սրտի ակամն կողոպտել, խանդել եւ հրձիգ առնել զգնակարանս հայոց, որք փախուցեալ թագչէին յերեսաց կատաղութեան նոցա»։

Դարձեալ՝ Երևանի եռամեայ պաշարման ժամանակ՝ բերդից դուրս գտնուած հայերը «մընան առհասարակ տարագիր յօտարութեան և ի սարս և ի ձորս սահմանաց Օսմանցոց», — գրում է ինքը՝ Ներսէսը։

ԺԳ.

Բայց ինչ էլ որ լինի՝ վերջապէս 1828 թ. փետրուարի 10-ին Թիւրքմէն չայի հաշտութեան դաշնագիրը կնքուեցաւ, որով Երևանի և Նախիջևանի խանութիւնները անցան ռուսներին։

Պէտք էր յուսալ, ուրեմն, որ պատերազմական գործողութիւնների վերջանալով ժողովրդի տառապանքներին ևս վերջ կը տրուի։

Դժբաղդաբար այդպէս չեղաւ։

---

*) Այդ միջոցին էր, որ Ներսէսը Բիւրականցի Յովհաննէս Ասլանեան ազգանունով երիտասարդին էջմիածին ուղարկեց իր գալուստը խմացնելու։ Պարսիկները բռնեցին Ասլանեանին քիթը կտրեցին, մէկ աչքը հանեցին և լեզուն կտրելով կիսաշունչ զիակը դաշտի մէջ ձգեցին։

Թիւրքմէն շայի դաշնագրի 15-րդ յօդուածով Ատրպատականի բոլոր բնակիչներին իրաւունք էր արուում, յընթացս մի տարուայ, ազատաբար պարսից երկրից անցնել ռուսաց նորանուաճ գաւառները։ Նրանց թոյլ էր տրուում նըմանապէս՝ դուրս տանել կամ ծախել իրենց շարժական գոյքը։ Իսկ անշարժ կալուածները ծախելու մի տարի ժամանակ էր նշանակուած։

Դաշնագրի այդ յօդուածը խմբագրուած էր յատկապէս հայերի համար։

Հէնց դաշնագրի այդ յօդուածի տրամադրութեամբ էլ՝ Պասկեվիչը՝ անմիջապէս՝ ձեռնարկեց պարսկահայերի գաղթեցուցմանը՝ զօրավիգ եւ աջակից ունենալով Ներսէս արքեպիսկոպոսին։

Բայց նախ քան գաղթականութեան մանրամասնութեան մէջ մտնելը՝ տեսնենք թէ ինչ եղաւ հայոց զօրքը հաշտութիւնից յետոյ։

ԺԹ.

Հայոց զօրքի մասին ահա թէ ինչ է գրում ականատես զօրավար Մուրավեովը, «պատերազմի դաշտում նրանք ցոյց տուին, որ կատարեալ զինուորներ են։ Իսկ Օրդուբադից յետ մղելիս՝ նրանք պարսից հետ կռուում էին զարմանալի քաջութեամբ»։

«Այս նոր զօրքերը ամենամեծ յոյս էին տալիս՝ ժամանակին սրանցից մեծ գնդեր (корпуса) կազմելու փոխարինելու համար ռուսներին, որոնք կլիմայի պատճառաւ՝ կոտորուում էին։

Սակայն իշխանութեան անհոգութիւնից լաւ կերպով սկսած այս գործը՝ վատ վերջով վերջացաւ։

Մեր գօրքի հետ միացած հայոց առաջին վաշտը՝ հետզհետէ մեծացաւ պարսից բանակից մեզ մօտ փախչող հայ սարբազներով և Երևանի խանի հպատակ հայերով։ Նրանք հաւատարմութեան երդում տալով մտան իրենց ազգակից զինուորների շարքը և մեզ հետ համահաւասար քաջութեամբ կռուում էին։

Երբ Երևանը առնուեց՝ այս զինուորներին միանգամայն առանց հսկողութեան և ուշադրութեան թողեց զինուորական նոր իշխանութիւնը, որ Երևանում նստած ամենևին չէր էլ մտածում հայ զինուորների մասին։ Նրանց ոչ շոր էին տալիս, ոչ ոռճիկ, եւ որ գլխաւորն է, նրանց մարդասէր չէին դնում, հեռները չէին խօսում, նրանց չէին պատրաստում ապագայ գործի համար։ Մինչդեռ,—ինչպէս ինձ քաջ յայտնի է,—նրանց հետ լաւ վարուելով և նրանց վրայ ուշադիր լինելով նրանք պատրաստ կը լինեն ամեն բան տանելու և երեխայի նման հնազանդելու»։ Ճիշտ է փախչողներ եղան, որոնք հետզհետէ շատացան, բայց մեծամասնութիւնը՝ մնաց։ Իսկ հաշտութիւնը կայանալիս՝ երբ այս զինուորները տեսան, որ իրանց դարձեալ բաց չեն թողնում հարմաձայն իրենց եւ իշխանութեան մէջ եղած պայմանի,—այն ժամանակ նրանք, օրինական ճանապարհաւ, իշխանութեանը դանդատեցին։

Բայց չսանալով ոչ մի պատասխան եւ մեծ նեղութեան մէջ գտնելով՝ ստիպուած եմ թողնել իրանց պաշտօնը եւ գնալ Թիֆլիզ»։

«Հայ զինուորների այս վարմունքը անշուշտ ապստամբութիւն պէտք էր համարել։

Ուստի նրանց բռնուեցին և գվարդիայի գնդի մէջ տեղաւորեցին հսկողութեան տակ, ուր ես պատահեցայ նրանց։

Ինձ տեսնելիս՝ նրանք շատ ուրախացան, սակայն ես հետները չխօսեցայ, երկիւղ կրելով մի գուցէ պատահարար նրանց մէջ մը այնպիսի միտք ծագի, որ անհամապատասխան լինի իշխանութեան հայեացքին։

Այս զինուորների վրայ բնութիւն նշանակուեցաւ. որի հետևանքը, սակայն, ինձ անյայտ մնաց։ Զիմացայ նմանապէս թէ այդ զինուորների վերջն ինչ եղաւ։ Այսքանս յետոյ լսեցի, որ այդ զինուորների ապստամբութիւնը՝ վերացրել են Ներսէսին, որին ամեն մի բանում յանցաւոր էին դուրս բերում։

Եւ այսպէս ահա հէնց սկզբից քանդուեցաւ այն օգտակար ձեռնարկութիւնը, որ կարելի էր գլուխ բերել Վրաստանում»։

Այժմ դառնանք գաղթականներին։

ԺԵ.

Երևանի և Նախիջևանի խանութիւնները, — որոնց Հայկական նահանգ անունը տուեցաւ,—

ռուսաց ձեռքն անցաւ դրեթէ բոլորովին անմարդաբնակ, աւերակ ու ամայի դարձած։ Հարկաւոր էր շէնացնել, ժողովրդով լեցնել։ Իսկ այդ ժողովուրդը լինելու էին պարսկահայերը,—նրանք, որոնք պատերազմից առաջ՝ պարսիկներից քշած հեռացրած էին Արարատեան դաշտից. նմանապէս և նրանք, որոնք մշտապէս Պարսկաստանումն էին բնակւում։

Այդ ժողովրդով, այդ «աշխատասէր, հլու և մեզ կրօնակից ժողովրդով անհրաժեշտ է լեցնել այս ամայացած երկիրը»,—գրում էր ինքը Պասկևիչը դուքս Դիբիչին *)։

Իր այս նպատակը իրագործելու համար՝ Պասկևիչը դիմեց Ներսէս արքեպիսկոպոսի օգնութեանը, որ՝ ինչպէս ասում են՝ գրկաբաց ընդունեց Պասկևիչի առաջարկութիւնը։

Պետերբուրգից էլ Պասկևիչը բերել տուց Լազար Աբիմիչ Լազարեանին,—Լազարեան յայտնի տոհմից, որ թէև 28 տարեկան հաղիւ կար, բայց արդէն զնդապետի աստիճան ունէր։

Պասկևիչը նրան Թաւրիզի քաղաքապետ նշանակելով՝ դաղթականութեան գործին գլուխ և ղեկավար նշանակեց, տալով նրան օգնական ենթագնդապետ Մովսէս Երկայնաբազուկ-Արղութեանին և միքանի այլ հայ օֆիցերների։

Ներսէսը իր հերթում դաղթականութեան գործը գլուխ բերելու համար՝ իր կողմից նշա-

*) Акты, VII, № 561.

նակեց Եպովքեան Ստեփան եպիսկոպոսին, Ղարաբաղցի Նիկողայոս վարդապետին և միքանի ազդեցիք քահանաներին։

Աւասիկ այդ հոգևոր և աշխարհական ազենտներին յանձնարարեցաւ, որ շրջելով ողջ Պասկաստանում, հայերին գաղթեցնել տան։ Ինքը Լազարեանը ևս առաջին անգամ շրջագայեց Մարաղայում, Սալմաստում և Ուրմիայում գործին լաւ և արագ ընթացքը տալու համար։

Դրանով էլ չբաւականանալով Լազարեանը մի կոչ ևս հրատարակեց պարսկահայերին, որով հրաւիրում էր նրանց գաղթել Նորանուաճ երկիրը, «որտեղ ձեր բարեկեցութիւնը կը կարգաւորէք,—ասած է կոչի մէջ,—և այժմեան ձեր կրած չնչին զոհողութիւնների փոխարէն հարիւրապատիկ վարձատրութիւն կը ստանաք»։

— «Շտապեցէք ուրեմն, ժամանակը թանկ է։ Ռուսաց զօրքերը շուտով Պարսկաստանի սահմաններից կը հեռանան, այն ժամանակ կը դժուարանայ ձեր գաղթումը և այնուհետև,—վախեցնում է Լազարեանը,—մենք չենք կարող երաշխաւորել ձեր ապահովութիւնը *)։

ԺԶ.

Այս կոչը, կոչից էլ առաւել՝ Լազարեանի հոգևոր և աշխարհիկ ազենտները փառաւոր կերպով գլուխ բերին գործը՝ է որ յորդորանքով, է

*) Собр. актовъ, մասն II, եր. 166։

որ սպառնալիքով և է որ գրաւելով ու խոստումներով *)։

Որովհետև ժողովուրդը թողեց իր եկեղեցիները, իր տները, իր պտղաբեր պարտէզներն ու այգիները, իր մշակած դաշտերը, իր դուքաններն ու արհեստանոցները, ամենը, ամենը,— փոխելով այդ ամենը մի անյայտ ապագայի հետ։

Ոչ պարսից կառավարութեան ագենտների յորդորները, ոչ Աբբաս Միրզայի առանձնայատուկ հոգացողութիւնքը, ոչ նրա պաշտօնական և անպաշտօն բողոքները ռուսաց ագենտների ապօրինի և բռնի գործողութիւնների նկատմամբ,—չկարողացան հայերի արտագաղթը խափանել։

---

*) Պարսկահայերը և նրանց սրտացաւ ղեկավարները Լազարևանի այս խոստումները հաւած իւղի տեղ ընդունեցին։ Մինչդեռ տեսէք թէ այդ խոստումներին ինչպէս վերաբերեցան ներստորականները։ Ահա Լազարևանի սեփական վկայութիւնը Պակևիչին ներկայացրած տեղեկագրում՝ «Ատրպատականում բնակւող բազմաթիւ Նեստորականներից,—առանձին իմն ջանք թափելուց յետոյ,—հազիւ հաղ ես կարողացայ 100 տուն գաղթեցնել։ Շատ ջանք թափեցի, դրամական մեծամեծ նպաստներ խոստացայ՝ բոլորին գաղթեցնելու, բայց ապարդիւն։ Գաղթեցրածս 100 տան համար երկու ազդեցիկ մելիքներին նշանաւոր գումար տուի։ Գալով միւս Նեստորականներին,—նրանք դրականօրէն յայտնեցին, որ երբէք տեղերիցը չեն շարժւիլ, մինչև որ ռուսաց կառավարութիւնը լիովին և կանխիկ չը-վճարէ Ատրպատականում ունեցած իրենց անշարժ կայքերի արժէքը»։

Ամենամեծ եռանդ ցույց տուց նամանաւանդ

Ներսէս արքեպիսկոպոսը, որի հրահանգի զօրութեամբ՝ առաջին դպրոցներ հանդիսացան պարսկահայ ժողովրդի հովիւները—քահանաները, որոց սպառնում էին կարգալոյծ անել, եթէ արհամարհեն հոգևոր բարձրագոյն իշխանութեան պատուէրները։ Իսկ հոգևոր բարձրագոյն իշխանաւորը այդ ժամանակներում Ներսէս արքեպիսկոպոսն էր, որ հրաժարուած Եփրեմ կաթողիկոսից արտօնուած էր կաթողիկոսական պաշտօն վարելու։

Ներսէսի եռանդի մասին մի փոքրիկ գաղափար կազմելու համար՝ ես բաւական եմ համարում հետևեալ փաստը արձանագրել։

Սալմաստի ս. Բարդուղիմոս վանքի վանահայր Իսրայէլ եպիսկոպոսը դպրոցականութեան հակառակ կանգնեց և արձակ համարձակ յորդորում էր ժողովրդին տեղներիցը չշարժուել։

Ներսէսը անմիջապէս զիմելով Պասկևիչին գրեց—«Համաձայն պատրիարք կաթողիկոսի ինձ տուած իշխանութեանը հայոց բոլոր հոգևոր գործերը կառավարելու համար, ես խնդրեցի զօրավար գեներալ-մայոր Զաւչավաձէին, որ գրէ Խոյի բերդապետին՝ յիշեալ Իսրայէլ եպիսկոպոսին զինուորների խիստ հսկողութեամբ ուղարկել Էջմիածնի վանքը հոգևոր դատի ենթարկելու, և այս դէպքում ամենևին չքաշուել նրա աստիճանն անպատուելուց»։

ԺԷ.

Պէտք էր կարծել, որ այդքան եռանդով հայ ժողովրդին Պասկասանից դուրս բերել ուող Պասկեիչը որքան և իցէ պատրաստութիւն կը տեսնի՝ ինչպէս նրանց տեղ հասցնելու, նոյնպէս և այնտեղ նրանց տեղաւորելու համար։

Ոչ այս և ոչ այն

Գաղթականների թիւը 8249 տուն էր կամ 45,000 հոգի։

Դրանց մինչև սահմանագլուխը հասցնելու համար Պասկեիչը Լազարեանին տալ էր ընդամենը 25,000 ռուբլի։

2000 ոսկի կամ 6000 ռուբլի էլ Լազարեանը Թիֆլիզի հայ վաճառականներից էր ստացել։

Եւ ահա մի այդպիսի չնչին գումարով 45,000 հոգի գաղթականներն անբնակայելի նեղութիւններով ու տառապանքներով, մաս առ մաս, Արաքսն անցնելով՝ մտան ռուսաց սահմանը, որտեղից այն կողմը նրանց առաջ տանելու, նրանց խնամելու և տեղաւորելու հոգսն ու պարտաւորութիւնը յանձնուած էր մի «ժամանակաւոր կառավարութեան», որի անդամներից մէկն էլ Ներսէս արքեպիսկոպոսն էր։

Այդ կառավարութեան գործունէութեան մասին մի գաղափար տալու համար՝ ես այստեղ գնում են Լազարեանի իրեն նամակը յանուն Պասկեիչի։

ԺԸ.

«Շտապում եմ զեկուցանել Ձեր պայծառափայլութեանը, որ գեներալ Պանգրատեվի ինձ գրած թղթերով հաստատւում են այն լուրերը, որ ինձ հասած էին Արաքսն անցնող հայերի դրութեան մասին։ Հաստատւում է, որ Նախիջեւանի և Երևանի գաւառներում հայի մեծ պակասութիւն կայ և տեղական իշխանութիւնը ոչ մի օգնութիւն չէ կարողանում հասցնել մինչև անգամ այն 700 տուն հայերին, որոնք Մարաղայից գաղթեցին։ Այս գերդաստանները թողին ամեն ինչ և ամենից շուտ գաղթելով, չկարողացան իրենց հետ վերցնել մինչև անգամ իրենց սննդեան համար հարկաւոր հաց։

«Իմ դրութիւնը ծանր է,—շարունակում է Լազարեանը։ Ցայսնի է, որ գաղթականներին օգնելու գործը յանձնուած է Երևանի «ժամանակաւոր կառավարութեանը», որից ես ոչ մի տեղեկութիւն չունիմ և չգիտեմ ինչ անեմ։

«Եթէ գաղթականութիւնը դադարեցնում՝ ձեր կամքին հակառակ շարժած կը լինեմ։ Իսկ եթէ փութացնեմ գլուխ բերելու, սոսկում եմ, որովհետև այս թշուառ գերդաստանները, որ ամեն բան զոհելով մեզ հետևեցին, դաժան սովին զոհ կը դառնան։

«Իմ կարծիքով միակ ելքը այն է, որ մենք դրամական նպաստը շատացնենք, որպէսզի գաղթականները կարողանան հարկաւոր թւով կեն-

զանկներ գնել՝ իրենց հացերը բեռնելու համար։ Իսկ հաց այստեղ շատ կայ և շատ էլ էժան է։

«Այս անհրաժեշտ է զոնէ ձմեռայ համար, այսինքն մինչև նոր հունձը։

«Դժբաղդաբար ես դրամական նպաստն էլ չեմ կարող տալ, որովհետև Ձեր նշանակած նըպաստադրամից ես միմիայն 8000 ոսկի (24,000 ռ.) եմ ստացել։ Դրանիցն էլ, ըստ Ձեր կարգադրութեան, 1500 ոսկի (4500 ռ.) Թաւրիզի բնակիչներին եմ բաժանել։

«Մօտս մնացած գումարը բաւականութիւն չի անում ոչ թէ գաղթականներին օգնելու, այլ նոյնիսկ տեղներից շարժելու, եթէ մինչև անգամ ընդունելու լինինք, որ նորանստ մեր երկրում, սրանց համար ամեն ինչ պատրաստ կը լինի։

ԺԹ.

Լազարեանից և նրա օգնականներից ստացած այսպիսի բովանդակութեամբ նամակները ստիպեցին Պասկևիչին № 937 գրութեամբ դիմել,—ի՞նչ էք կարծում, ում,—Ներսէս արքեպիսկոպոսին մեղադրելով, թէ նա ինչու սկզբում առատօրէն խոստանում էր գաղթականների ծախքը հոգալու՝ առանց արքունի գանձարանին ծանրութիւն պատճառելու, իսկ հիմայ չէ օգնում։

«Եւ որովհետև,—գրում է Պասկևիչը,—գանձարանը ևս անկարող է օգնել, ուստի դարձեալ

Ներսէսին և հայ հոգևորականութեանն է մնում հնար ու միջոց գտնել գաղթականներին սովամահ լինելուց ազատելու համար» *)։

Ընթերցողի առաջն եմ դնում Լազարեանի մի այլ նամակը գրած մայիսի 21-ին Նախիջևանից՝ Արաքսն անցած և արդէն ուսուցս սահմանը մտած գաղթականների վիճակի մասին։

Այս նամակը Լազարեանը գրել է ի թիւս այլոց նաև Թաւրիզի անգլիական դեսպանատան քարտուղարի այն հրապարակական կշտամբանքից յետոյ, որ նա արել է գաղթականութեան ղեկավարներին՝ նրանց դատապարտելի և անխիղճ անտարբերութիւնը անձամբ տնձին տեսնելով Արաքսն անցնելիս։

Ի.

«Արաքսն անցնող գաղթականների խղճալի դրութեան մասին՝ Մոյից եկողների միջոցաւ ինձ հասած տեղեկութիւնները, թէ նրանք առանց հացի են մնացել և բաց երկնքի տակ,—ինձ ստիպեցին շտապով գնալ այնտեղ—Նախիջևան։

«Որքան էլ որ,—շարունակում է Լազարեանը,—ինձ հասած լուրերը չափազանցեցրած էին, այնուամենայնիւ եթէ հայկական նահանգական վարչութիւնը շուտափոյթ և կարուկ միջոցների չդիմէ, գաղթականները անհրաժեշտ թշուառութիւնների կենթարկուեն։

*) Акты, VII. եր. 615, № 582։

«Հայկական կոմիտեի բաժանմունքը, որ այստեղ (Նախիջևանում) բացված է շտապ-կապիտան Նէվէրովսկի 2-րդի նախագահութեամբ՝ հնայած այս մարդասէր սպայի ցանկութեանն ու եռանդին՝ ոչ մի միջոց և հնարաւորութիւն չունի գաղթականներին Նախիջևանի գաւառում տեղաւորելու և հետզհետէ եկող խմբերին՝ միւս գաւառներն ուղարկելու։

«Ընդ սմին՝ այստեղի կառավարութիւնը գաղթականներին տեղ չի յատկացնում բնակութեան համար՝ ասելով թէ զիւղերը պատկանում են կամ այստեղի Էքսան խանին և կամ նրա ազգականներին, և թէ ամբողջ գաւառում միմիայն երեք զիւղ կայ, որ արքունի են։

«Մեր կառավարութեան կամքը, որ Ձեր պայծառափայլութիւնը ծանուցած էր ինձ, թէ գաղթական քրիստոնեաները վեց տարի ժամանակաւ ազատուած են ամեն տեսակ հարկերից և բեգեառներից՝ այստեղ չէ գործադրւում և ամեն մարթուած կենդանու համար այստեղի կառավարութիւնը մի ռուբլի է ստանում, որպիսի հարկ ռուսական ոչ մի նահանգում գոյութիւն չունի *).

«Համարձակւում եմ խնդրել Ձերդ պայծառափայլութիւնից՝ բարեհաճել միջոց ցոյց տալ հայկական նահանգների վարչութեանը և կոմիտեին, որ գաղթականներին տեղաւորեցնելու տեսակէտ Ձեր արձակած հրամանները ճշտութեամբ

*) Акты, VII, եր. 629:

կատարեն, որպէսզի Ռուսաստանի այս նոր և աշխատասէր հպատակների դրութիւնը փոքր ինչ բարւոքի **)։

ԻԱ.

Գաղթականների ցաւալի դրութեան մասին մի այլ նկարագիր է տալիս Պասկեվիչին ուղղած իր № 368 զրութիւնում իշխան Մովսէս Երկայնաբազուկ-Արղութեանը, որ նոր էր նշանակւած գաղթականական կոմիտեի աւագ անդամ։

— «Գաղթականների բնակած տեղերը շրջելուց յետոյ, — գրում է իշխանը, — ես կատարեալապէս համոզւեցայ, որ չնայած զանձարանից նրանց տրւած նպաստին, գաղթականները այնուամենայնիւ ամենամեծ կարօտութեան մէջ են գտնւում։

«Նախ և առաջ՝ մեծ կարիք կայ սերմացուի հայկական նահանգում, ուր արդէն 6500-ից աւելի զերդաստան են տեղաւորւել։ Առաջիկայ 1829 թւականում սովի առաջն առնելու համար ամենաանհրաժեշտ է առնւազն 12 հազար չետվերտ ցորեն և գարի։ Մի չետվերտի գինը միջին թւով 6 ռուբլի հաշւելով, կանի 72,000 ռուբլի։

«Երկրորդ՝ գաղթականների մէջ 2500 զերդաստան կայ, որոնք ուտելու ոչինչ չունին։ Ուրեմն անհրաժեշտ է զրանց հաց տալ։ Ամէն մի զերդաստանին կերակրելու համար՝ պէտք է

**) Акты, VII, եր. 627, № 596.

տալ 3 չետվերտ պրօսսօ, որի գինը 2 ռուբլի հաշուելով կանի 15,000 ռուբլի։ Ընդամենը ուրեմն 87,000 ռ.։

«Այս գումարը, որ Ձեր պայծառափայլութիւնից ես խնդրում եմ, ամենաանհրաժեշտն է և ամենաչափաւորը։ Առանց այս գումարի՝ անհնարին է ազատ մնալ այլ և այլ անախորժ դէպքերից.

«Եթէ դրութիւնը այսպէս շարունակի,— աւելացնում է իշխան Արղութեանը,—անշուշտ գաղթականների մի մասը յընթացս երկու տարուայ յետ կը դառնայ իր նախկին հայրենիքը *)։

«Միւս մասը, որի հաւատն ու սէրը դէպի Թագաւոր Կայսրը աւելի հաստատուն է, անպատճառ զոհ կը գնայ իր այս ազնիւ զգացմունքին։

«Իսկ երրորդ մասը, որ իր նախկին հայրենիքի առաւելութիւններով գուցէ չի շլանալ և տոկունութեամբ կը տանի իր այս նոր հայրենիքի դառնութիւններին,—այդ մասն էլ՝ երկար

---

*) Թիւրքմէնչայի դաշնագրի զօրութեամբ՝ ցանկացողները յընթացս 2 տարուայ կարող էին մի երկրից միւսը գաղթել։

Բայց վերջերում Գրիբոէդով դեսպանը («Խելքից պատուհասը»-ի յայտնի հեղինակը) բացատրեց և Պասկեվիչը ի պաշտօնէ յայտարարեց, որ մի անգամ ուրացած երկիրը մնողը՝ այլևս իրաւունք չունի յետ դառնալու։ (Акты, VII, եր. 645, № 619)։
շատ երկար սպասելու ստիպուած կը լինի։

«Ի վերջոյ պարտք եմ համարում յայտարարելու Ձեր պայծառափայլութեանը, որ գաղթականների օգտին խնդրածս՝ այստեղ ինձ հասուցանելի նախօրօք, այն է՝ առաջիկայ սեպտեմբեր ամսւայ ընթացքում. ի հակառակ դէպս՝ ես անկարող կը լինեմ արդարացնել Ձեր ընտրութիւնը *)։

ԻԲ.

Լազարեանի, Արղութեանի, Գրիբոէդովի ևս և ուրիշ կողմերից ստացած այս դառն նկարագրութիւնները կարդալով Պասկևիչը, ուր ուրեմն հետևեալ № 141 գրութիւնը ուղղեց Պետերբուրգ կոմս Դիպիչին։

«Գիտնալով թէ որքան դժւարին գործ է բազմաթիւ ժողովուրդ մի տեղից միւս տեղ փոխադրել, մանաւանդ առանց նախապատրաստութեան ու միջոցների և տեղափոխել ժողովրդին մի այնպիսի երկիր, որ սեփական միջոցներ չունի, ընդ նմին պատերազմի պատճառաւ աւերւած էլ է,—ես չէի կարող չնախատեսնել այն ամեն զրկանքները, որոց կարող էին ենթարկուել Ատրպատականից մեր կողմերը գաղթող միքանի հազար զերդաստաններ։

Երևանի նուաճելուց յետոյ՝ կարգադրւած և հաւաստիացւած էր **), որ ներկայ գործում ա-

*) Актъ, VII, եր. 645, № 619:

**) Ներսէս արքեպիսկոպոսի հաւաստիացումներն է ակնարկում։

ռանձին դժուարութիւն չի լինել, և որ քրիստոնեաների գաղթը բացի Ռուսաստանին անպայման օգտակար լինելուց, կառավարութեանը առանձին հոգս չի պատճառիլ և ծախսի տակ չի ձգիլ։ Ի վերայ այսր ամենայնի ես այս գործում (գաղթի) մանրամասնութիւնների մէջ չըմտայ, մինչև որ հայ հասարակութիւնները իրենք—Ատրպատականը մեր գրաւելուց յետոյ—յատուկ հաւատարմատարներ էին ուղարկել ինձ մօտ *), որոնք Դէյ-Կարխանում ներկայանալով խնդրեցին ինձ թոյլ տալ գաղթելու մեր նոր նուաճած երկիրը, առանց որևէ պահանջի, առանց որևէ պայմանի, այլ միայն իբրև շնորհ և ողորմութիւն **)։

---

*) Ինչպէս միշտ՝ այս անգամ ևս այս հաւատարմատարները ներշնչած ու վարձած մարդիկ էին։

**) Պասկևիչը երևի մոռացել էր, որ գաղթականութիւնը յաջողեցնելու համար Լազարեանին ինքն էր բերել։ Ինքն էր հայ սպաներին հայաբնակ վայրերը ղրկել, որ հայերին գաղթեցնեն։ Ինքն էր, որ Ներսէսից պահանջում է գաղթի հակառակ Իսրայէլ եպիսկոպոսին կարգադրելի անել։ Վերջապէս Պասկևիչը ինքն էր, որ գրում էր Նախարարին (Ներսէսի հետ խոսելուց յետոյ) որ «եթէ մինչև 7000 հայ ընտանիք Պարսկաստանից մեր սահմանն անցան,—այդ ոչ թէ Ներսէսի կարծեցեալ ազդեցութեանը պէտք է վերագրել,—այլ գաղթականութեան համար իմ նշանակած սպաների ժրութեանն ու եռանդին և նամանաւանդ այն դրամական օգնութեանը, որ ես վճռեցի տալ գաղթականներին» (Акты, VII, 260:

«Ժողովրդի թախանձանքն լսելով և միևնոյն ժամանակ համոզված լինելով, որ նորանուաճ, անմայի երկիրն այս ժողովրդի նման հոլ, աշխատասէր և ըստ կրօնի մեզ նուիրված տարրերով լեցնելն կարող Ռուսաստանին մեծ օգուտ բերել,—ես ժողովրդի հաւատարմատարներին փաղաքշելով իրաւունք տի զաղթել, բայց բնաւ երբէք ես նրանց չյուսադրեցի, թէ իրենց որևիցէ առանձին օժանդակութիւն կամ այլ օգուտ կը լինի, բացի որոշեալ ժամանակ հարկերից նրանց ազատ թողնելը։

«Չնայած այս ամենին, չնայած պարսիկների կողմից կատարված հակառակ գործողութիւններին, քրիստոնէից զաղթը Ատրպատականից դէպի մեր երկիրը,—ինչպէս ստացածս տեղեկութիւնները ցոյց են տալիս,—արագ կերպով է ընթանում։ Եւ մինչև այսօր Ղարաբաղում տեղաւորել են 279 գերդաստան, իսկ Երևանի նահանգում 948 գերդաստան։ Գալով զաղթականների ընդհանուր թիւին՝ 5000 գերդաստանից աւելի է»։

Ապա թուելով զաղթման յաջողութեանը նպաստող պարագաները՝ Պասկևիչը շարունակում է՝ «Զաղթման այս յաջողութիւնը տեսնելով և դրանից սպասելի ակնյայտնի օգուտները մեր տէրութեան համար գնահատելով հանդերձ, ես միևնոյն ժամանակ չեմ կարող չնախատեսնել *)

*) Էլ ինչ նախատեսնել, երբ արդէն կատարված իրողութիւն էր։

ապագայ դժուարութիւնները և խոշոր ծախքերը, որոնք անխուսափելի կը դառնան գաղթականներին տեղաւորելու ժամանակ։

«Որովհետև հարկ կը լինի դրանց կերակրել ի հաշիւ արքունի գանձարանի ոչ թէ միայն մինչև այս տարւայ հունձը, այլ նաև մինչև գալ տարւայ հունձը։

Բացի դրանից՝ պէտք կը լինի գաղթականներին սերմացու տալ, իսկ այդ ինձ համար շատ և շատ դժուար է հետևեալ պատճառներով։

Առաջին՝ Երևանի և Նախիջևանի գաւառները, որ գաղթականների տեղ է յատկացրած, անցեալ պատերազմի երեսից բոլորովին աւերած լինելով հացի բաւարար պաշար չունին։

Երկրորդ՝ եղած պաշարն էլ ես յատկացրել եմ ի սնունդ զօրքին, որ իմ ուշադրութեան ամենագլխաւոր առարկան է։

Երրորդ՝ տաճկական պատերազմը արդելք է դառնում հարևան տաճիկների գաւառներում գնել, թէև այն տեղերում մեծ պաշար կայ։

Վերջապէս չորրորդ՝ պարսիկները նոյնպէս ակամայից և դժգոհութեամբ են թոյլատրում իրենց երկիրներում հաց գնել» *)։

Այս ամենից յետոյ՝ Պասկևիչը խնդրում է գաղթականների համար յատուկ նպաստադրամ բաց թողնել արքունի գանձարանից։

---

*) Акты, VII, եր. 628, № 597:

ԻԳ.

Մինչդեռ այս ապարդիւն գրագրութիւններն էին լինում բարելաւելու համար գաղթականների վիճակը,—վերջիններս այստեղ և այնտեղ թափուած, մերկ, քաղցած տապում ու տառապում էր բաց երկնքի տակ։

Նրանց ընդհանուր թիւն հասաւ, ինչպէս ասել ենք, 8249 տան կամ 45,000 հոգու։

Պասկևիչի միջնորդութեան վրայ կառավարութիւնն էլ իր նպաստը հասցրեց ընդամենը 90,000 ռուբլի, ուրեմն միջին թւով ամեն մի հոգուն երկու ռուբլի, այն էլ 10 տարուց յետոյ վերադարձնելու պայմանաւ։

Այսպիսի նպաստն ու խնամատարութիւնը բնական է, որ ոչ իր նշանակութիւն չունէր գրեթէ։ Ուստի նրանք ճանճերի նման կոտորւում էին։

Կառավարութեան կատարած վիճակագրութիւնից երևացաւ, որ ամենակարճ ժամանակում 8249 գերդաստանից մնացել էին 6946 գերդաստան։ Պակասել էր 1303 գերդաստան կամ 10,000 հոգի։

Այսպէս թէ այնպէս՝ գաղթականներին մի կերպ տեղաւորեցին՝ 7—8 հարիւր գերդաստան Երևանում, Նախիջևանում և Օրդուբաթում, իսկ մնացեալը Արարատեան դաշտի գիւղերում։

Այդ տեղաւորումն էլ ի հարկէ առանց նեղութիւնների, զրկանքների և զոհողութիւնների չկատարուեցաւ։

Այդ ամենի մասին մի թեթև գաղափար տալու համար՝ քաղում եմ Զուբարեով ռուս պաշտօնէի Պասկևիչի ներկայացրած տեղեկագրի հետևեալ տողերը։

ԻԴ.

«Հայերը մի ժողովուրդ են,—գրում է Զուբարեովը 1830 թ. ապրիլի 30-ին,—որ այս երկրում (խօսքը Ղարաբաղի մասին է) ամենից շատ են հաւատարիմ մեր տէրութեանը և, կարելի է ասել, նրանք ամենաազնիւն են գտնէ հասարակ ժողովրդի մէջ։ Պարսկաստանից գաղթած հայերը նշանաւոր են օրինակելի աշխատասիրութեամբ, նոցա մեծ մասը արհեստաւոր է, շատ օգտաւէտ և շատ հազուագիւտ Կովկասում։

«Դժբաղդաբար,—գրում է Զուբարեովը,—այս օգտակար ժողովուրդը չափից դուրս ճնշւում է Ղարաբաղում։

«Ղարաբաղի տեղական (ռուս) իշխանութիւնը հայերի դէմ մի ինչ որ նախապաշարմունք ունենալով՝ աննեբելի կերպով նեղացնում է նրանց և մինչև այժմ նրանք չունին հաստատ բնակութիւն։ Նրանց տուել են շատ անբերրի հողեր, իսկ բերրի տեղերն էլ շատ քիչ են։

«Ապացոյց առ այն թէ՝ ինչ թշւառ դրութեան մէջ են գաղթականները՝ յիշեմ հետևեալը։ Տեղական իշխանութեան կարգադրութեամբ՝ Մարաղայի հայերը սկզբում բնակութիւն ստացած էին այժմ աւերակ Բերդա (Պարտաւ.) քաղաքում։

Այս տեղը, որ մի դաշտ է Կուր գետի մօտ, ամառը սաստիկ շոգ է և անտառներում վխտացող զանազան թունաւոր սողունները այստեղը կատարեալ գերեզման էին դարձնում։ Զով և առողջ կլիմայի սովոր Մարազացիք չկարողանալով տանել արեգակի խանձող տապը՝ հիւանդանում էին շարունակ։

«Ժողովրդի ամեն ազաչանքն ու թախանձանքը՝ թոյլ տալու իրենց լեռնային կողմերը քաշելու՝ ապարդիւն անցաւ։

«Ուստի և առանց ջրի, առանց կերակուրի, բաց երկնքի և կիզիչ արևի ճառագայթների տակ մեռելով դժբաղդ գաղթականները շարունակ մեռնում էին։

«Երեք ամառնային ամիսներում նրանցից 1012 հոգի մեռաւ։

«Այդ դեռ բաւական չէր։ Շրջակայ քոչող թուրքերը գաղթականների հիւանդութիւնից և կուելու անզօրութիւնից օգուտ քաղելով՝ թալանեցին նրանց գոյնն ու տաւարը։ Ի զուր էին հայերը իշխանութեանը դիմում։ Ծեծելով նրանց ճանապարհ էին ձգում։

«Առհասարակ հայերը այստեղ վերին աստիճանի նեղւում են թէ թուրք նայիբներից և թէ տեղական իշխանաւորներից։ Եւ եթէ այդ թշառներից մէկն ու մէկը Ղուշի էր գալիս խնդրամատոյց լինելու,—նրան չարաչար գանակոծութեամբ էին պատասխանում»*)։

*) Акты, VII, եր. 460—405, № № 411 և 413:

Իե.

Ղարաբաղ գաղթողների վիճակից աւելի վատթար են նկարագրում ռուս պաշտօնեաները՝ Երևանի և Նախիջևանի կողմերում բնակեցրած գաղթականների վիճակը։

Այս խեղճերն էլ երկար ամիսներ բաց երկնքի տակ մնալուց յետոյ՝ մասամբ տեղաւորուեցան թուրքարնակ գիւղերում։ Սակայն թուրքերի համար ծանր էր այդպիսի հարևանութիւնը, ուստի և նրանք սկսեցին տրտնջալ։

Երկիւղ կրելով թուրքերի արտունչներից՝ ռուս իշխանաւորները՝ հիմա էլ գաղթականներին այդ գիւղերից քշում էին այնպիսի վայրեր, որոնք անհամապատասխան էին գաղթականների մեծագոյն մասի պէտքերին։

Այս մէկ կողմից։

Միւս կողմից տեղական իշխանաւորները ոչ միայն փչացած կաշառակեր մարդիկ էին, այլ նաև միանգամայն անընդունակ, անհամապատասխան իրենց կոչմանն ու պաշտօնին

Ռուս պաշտօնեաների տգիտութիւնն ու ընդունակութիւնը այն աստիճան աչք էր ծակում, որ երբ 1828-ին լիազօր դեսպանի պաշտօնով Դրիբօէդովը Թէհրան էր գնում՝ հայկական նահանգի գաղթականների վրայ կարգած այդ ռուս պաշտօնեաներին տեսնելով և նրանց կատարած գործերի հետ անցողակի ծանօթանալով՝ ի պաշտօնէ խորհուրդ տուեց Պասկեվիչին՝

«Թիֆլիզի Հայոց Ներսիսեան դպրոցի աշակերտներիցը» միքանի պատանիներ բերել տալ այս կողմը և պաշտօնակատարներ նշանակել։

ԻԶ.

Ներսէս արքեպիսկոպոսին, իբրև Հայկական նահանգի կառավարութեան անդամի, շատ լաւ յայտնի էր գաղթականների վիճակը։ Բացի պաշտօնական թղթերից, որ կառավարութեան մէջ կարդում էր Արևին՝ ժամանաւոր նամակներ էլ շատ էր ստանում գաղթականների քահանաներից, սակայն ոչ մի օգնութիւն չէր կարողանում հասցնել։ Ամենաշատը՝ նա կարող է դիմել Պասկևիչին և խնդրել։ Սակայն Նրա յարաբերութիւնը Պասկևիչի հետ այդ ժամանակ զրեթէ խզուած էր և Նրանք միմեանց հետ, այսպէս ասած, խռոված էին։

Դրա պատճառը շուտով մենք կիմանանք։ Առայժմ պէտք է ասեմ, որ ռուս հրամանատարի և հայ արքեպիսկոպոսի խռովութիւնը ներքուստ էր, դրսից դեռ չէր երևում։ Եւ Պասկևիչը դեռևս շահագործում էր Ներսէսին, միայն ոչ անմիջապէս, այլ Լազարեան գնդապետի միջոցաւ, որի հետ Ներսէսը գրագրութիւնն էր սկսել յօգուտ ազգի։

Ներսէսի խնդիրները Լազարեանը հաղորդում էր Պասկևիչին և նրա պատասխանները՝ Ներսէսին։ Լազարեանը Պասկևիչի պատասխանները Ներսէսին հաղորդելով աւելացնում էր՝

«զոր ինչ գրեալ էիք ինձ վասն սիրելի մեր ազգին, ես նորին բարձր գերազանցութեան (Պասկևիչին) խօսեալ եմ, որ ասաց ինձ թէ՝ միտքն և դիտաւորութիւն իւր Կայսերական Մեծութեան նոյն է։ Նա ևս, նորին բարձր գերազանցութիւնն, հետևելու է այս բանին լաւագէս կատարել»։

«Եւ ես,—շարունակում է Լազարեանը,— իմոյս կողմանէ՝ ինձ առաջին և սուրբ պարտաւորութիւն կը համարիմ, այն է՝ որ լինիմ օգուտ ազգին իմոյ»։

Իսկ ազգի օգուտը, Լազարեանի կարծիքով, առայժմ նրանումն էր կայանում, որ Ներսէսը 1500 կամ 2000 հոգուց բաղկացած մի զօրախումբ կազմէ հայերից, որոց և յանձնէի նորանուաճ Աբաս-Աբադի, Սարդար-Աբադի և Երևանի բերդերի պահպանութիւնը։ Որովհետև այդ բերդերի պահակ ռուս զինուորները՝ չկարողանալով ամառուայ տօթերին դիմանալ՝ մահանում էին։

Եւ բացի դրանից շուտով սկսելու էր ռուս-տաճկական պատերազմը։ Եւ ռուս զինուորներն պատերազմի դաշտն էին գնալու դարձեալ։

Եւ որպէսզի պարսիկների կողմից յարձակումն տեղի չունենայ վերոյիշեալ բերդերի վրայ, - Պասկևիչը ռուս-տաճկական պատերազմի ծրագրի մէջ մտցրել էր՝ Աբբաս Միրզային իրեն դաշնակից վերցնելով ընդդէմ տաճկաց,—նրան տանել իր հետ Տաճկաստան։ Եւ ի տրիտուր այդ

ծառայութեան՝ Պասկևիչը խոստանում էր Արբաս Միրզային Վանը և Մուշը *)։

Ընթերցողը ի հարկէ հասկացաւ, որ հայկական նոր զօրագունդ կազմելը Լազարեանի միտքը չէր, այլ Պասկևիչի թելադրութիւնը նրան։

Եւ որպէսզի կարելի լինի Ներսէսին հեշտութեամբ զրաւել,—Պասկևիչը նրա համար Ս. Աղեքսանդր Նևսցու առաջին աստեճանի շքանշան ևս բերել տուեց **)։

Եւ հէնց այդ շքանշանի առթիւ Ներսէսին շնորհաւորելիս՝ Լազարեանը խօսք բաց արաւ հայկական նոր զօրախմբի մասին՝ զրելով հետեւեալը՝ «յոյժ հարկաւոր համարիմ ասել Ձեզ, զի կայսրն տայ զգալ, որ ազգս Հայոց ի նշան շնորհակալութեան իւրոյ զողորմածութենէ իւրոյ, ի հարկէ արդէն կազմեալ է գոնէ 2000 կամ 1500 զօրս, և այնու եղեալ է արժանի ապագայ ողորմածութեանց նորա»։

Լազարեանի այս նամակը կարդալով Ներսէսը իրեն յատուկ ոգևորութեամբ՝ թերևս այս անգամ ևս հայկական զօրախումբ կազմէր, սակայն Լազարեանն նամակի վերջին մասը ***) վերջապէս նրան գլխի ձգեց, որ Պասկևիչը իրեն

---

*) Акты, VII. եր. 691, № 763.

**) Акты, VII. եր. 252, № 205.

***) Պասկևիչը կամենալով Ներսէսի ձեռքով նրա բարեկամ գիներալ Կրասովսկուն տապալել,—առաջարկել էր, որ Ներսէսը նրա զէմ բողոք գրէ։ Ներսէսը ի հարկէ այդպէս բան չարաւ։

ձեռք է առել և խաղացնում է։ Ուստի և Պասկևիչի առաջարկութիւնը չլսելու աւեց և Լազարեանի նամակին էլ չպատասխանեց։

Եւ այսպիսով հարկաւ Ներսէսը աւելի գրգռեց Պասկևիչին իր դէմ։

Վերջինս այնուհետև ինքը ուղղակի՝ առանց Ներսէսի օգնութեանը Կրասովսկուն քշելով՝ ձեռնամուխ եղաւ Ներսէսի իրեն և նրա պաշտպանած ազգային շահերի տապալմանը։

ԻԷ.

Պասկևիչի մեղադրանքը Ներսէս արքեպիսկոպոսին բովանդակւում են հետևեալ կէտերում, որոնց կողքին ես դնում եմ նրանց համապատասխան բացատրութիւնը իմ կողմից։

Առաջին՝ «Գենեռալ Բենդենդորֆի բանակը, —գրում է Պասկևիչը Դիբիչին — արտասահման ուղևորելուց առաջ՝ նա (Ներսէսը) հաւատացնում էր, որ զօրքերն այնտեղ մի ամուսգեանի բերք կը գտնեն և թէ այդ մասին զօրքին կօգնէ Էջմիածնի վանքը»։

Ճիշտ է՝ 1826 թ. Ներսէսը այս բաները ասել էր ռուս իշխանութեանը և չէր տալ կամ խաբել։ Բայց Ներսէսը, իբրև մի կղերական և անփորձ, չէր կարող գուշակել, որ նախ քան ռուսաց բանակի Արարատեան դաշտ հասնելը՝ պարսիկները կարող էին դաշտի գիւղերը քարուքանդ անել, ժողովրդին քշել, պաշարներն ու

մթերքները այրել և վանքը թալանել, ինչպէս որ յայտնի է արդէն ընթերցողին։

Այս հանդամանքը ամենից առաջ պէտք է նախատեսնէին դեներալ Բենդենդօրֆը կամ կովկասեան կառավարչապետը—դեներալ Երմոլովը։

Երկրորդ՝ «Ներսէս արքեպիսկոպոսը պնդում էր,—շարունակում է Պասկևիչը,—որ Երևանի շրջակայքում կլիման առողջարար է և Վրաստանի շոգին սովոր զօրքերի համար անվնաս։

Ներսէսի այս վկայութիւնն ևս սուտ չէ։ Բանը նրանումն է միմիայն, որ կարճ ժամանակ Վրաստանում ապրող զինուորները դեռ այդ երկրի կլիմային վարժած չէին, ուր միայն թէ Երևանի կլիմային, այն էլ ամառնային ժամանակ։

Սակայն ներկայ դէպքում մանաւանդ շատ զարմանալի, եթէ ոչ ծիծաղելի է Պասկևիչի մեղադրանքը։

Ռուս զինուորական իշխանութեանը կարծես թէ դժուար բան էր առանց Ներսէսի վկայութեանը իմանալ, կամ ստուգել, թէկուզ աշխարհագրութեան գրքերից, Երևանի կլիմայական յատկութիւնները։

Երրորդ՝ «Ներսէսին ենք պարտական,—շարունակում է Պասկևիչը,—Օշականի պատերազմը, որովհետև նա յատկապէս մարդ էր ուղարկել Կրասովսկուն ամենախիստ թախանձանքներով, թէև բերանացի և ոչ գրաւոր, համոզելու, որ շուտով հասնի Էջմիածինն ազատելու և այդ-

պիսով սաիպեց Կրասովսկուն այն տարօրինակ գործը բռնելուց։

Պասկևիչի այս մեղադրական կէտը արժանի է փոքր ինչ աւելի լուսաբանութեան։

ԻԸ.

Երևանի բերդի պաշարումը գեներալ Կրասովսկուն յանձնելով՝ Պասկևիչը գլխաւոր բանակը վերցրած գնաց և առանց պատերազմի տիրեց Նախիջևանին, որ պարսիկները անպաշտպան թողնելով՝ իրանք կենդրոնացել էին Արաս-Աբաղ բերդում։

Նախիջևանից՝ Պասկևիչը մտադիր էր Թաւրիզի վրայ շարժուել և ջախջախելով Աբբաս Միրզային՝ տիրել Ատրպատականի մայրաքաղաքին։ Սակայն բանից դուրս եկաւ, որ Աբբաս Միրզան իր 30,000-նոց բանակովը կանգնած է Օշական գիւղում և առաջարկում է Ներսէս արքեպիսկոպոսին և Էջմիածնում գտնուած ռուսական մի վաշտի հրամանատարին՝ անձնատուր լինել՝ խնայելով այն 1500 հոգի հիւանդ ռուս զինուորների կեանքը, որոնց խնամում և կերակրում էր Ներսէսը և միաբանութիւնը վանքի շինութիւնների մէջ։

Ներսէսը և ռուս հրամանատարը մերժեցին Աբբաս Միրզայի առաջարկը։ Ուստի վերջինիս կարգադրութեամբ Իւսուֆ խանը սկսեց ռմբակոծել վանքը։

Այդ միջոցին՝ գեներալ Կրասովսկին՝ շոգերի

պատճառաւ՝ Երևանի պաշարումը վերցնելով բարձրացած էր Արայի լեռան ստորոտը, ուր յանկարծ նրա ականջին հասան Էջմիածնի շուրջը որոտացող թնդանօթների ձայները։

Միաժամանակ Կրասովսկին լուր ստացաւ Ներսէս արքեպիսկոպոսից և հայ մելիք Սահակ Աղամալեանից թէ Աբբաս Միրզան շտապում է Էջմիածինը քանդելով անցնել գնալ Վրաստան։ Ուստի և օգնութիւն էին խնդրում։

ԻԹ.

Օգոստոսի 16-ին Կրասովսկին իր բանակի մէջից վերցնելով 1800 հոգի հետեակ, 500 հեծելազօր, 12 թնդանօթ, 100 հեծեալ էլ հայկական գնդից և մի քանի հարիւր պաշարէդէնով բեռնաւորուած սայլ՝ ճանապարհ ընկաւ դէպի Էջմիածին։ Եւ անվնաս հասնելով Քասախ գետի ձախ ափը սկսեց առաջ գնալ, առանց իմանալու և նկատելու, որ գետի աջ ափովն էլ զուգընթացաբար՝ ընթանում են և պարսիկները։ Վերջապէս ռուսաց զօրքը մտաւ մի նեղ և քարքարոտ ձոր, ուր յանկարծ ինքզինքը շրջապատած գտաւ պարսիկներով։

Սկսեցաւ սարսափելի ջարդ։ Բաջութեամբ մեռնում էին ռուս սպաներն ու զինուորները, իսկ կենդանի մնացածները՝ ձորից դուրս գալու համար՝ սուիններով էին ճանապարհ բաց անում։

Կրասովսկու տակ ձին երկու անգամ սպանուեցաւ։ Ինքն էլ ձախ թևից վիրաւորուեցաւ։

Այնուամենայնիւ գեներալը շարունակ կուու էր զինուորներին խրախուսելու համար։

Ուր ուրեմն կոտորածից ազատուած ռուս զինուորներն ձորից դուրս գալով՝ սկսեցին էջմիածնի դաշտն իջնել, ուր, դժբախտաբար, նրանց մի այլ հարուած էր սպասում։

Ծարաւութիւնից սաստիկ տանջուած, յոգնածութիւնից էլ հազիւ հազ շարժուել կարողացող զինուորները՝ իրանց առաջ մի պտղոր առու տեսնելով՝ ագահաբար վրայ թափուեցան։ Եւ ահա հէնց այդ բռպէին նրանց վրայ յարձակուեցան պարսիկները և նորից սկսուեցաւ ռուսների ջարդը։

Վերջիններս այն աստիճան յոգնած, թուլացած էին, որ անդադար գլորում. վայր էին ընկնում։ Եւ ուրեմն՝ ոչ մի ընդդիմութիւն չէին կարող ցոյց տալ թշնամուն։

Այդ օրը,—օգոստոսի 17-ին,—Կրասովսկու բանակը կորցրեց,—վիրաւորուածներին և 200 գերի տարուածներին չհաշուելով,—24 սպայ և 1150 զինուոր։

Բայց ռուսների կորուստը անհամեմատ աւելի շատ կը լինէր եթէ մի հայ մարդ, անսպասելի կերպով օգնութիւն հասած չլինէր ռուսներին։

Այդ հայը Երևանցի Յակոբ Յարութիւնեանցն էր։

Լ.

Յակոբ Յարութիւնեանցը պարսկահպատակ էր և վաղուց ի վեր ծառայում էր Սարդարի թնդանօթաձիգների շարքում։

Նա յայտնի էր որպէս հմուտ ռմբաձիգ։ Այս պատերազմում նրան մի անգլիական թնդանօթ էին յանձնել։

Սկզբում նա հաւատարմութեամբ կատարում էր իր գործը, բայց կռի ժամանակ տեսնելով քրիստոնիայ զօրքի—ռուսների պարտութիւնը և գիտենալով, որ այդ զօրքը էջմիածինը ազատելու է գնում,—յանկարծ թնդանօթի բերանը շուռ տուեց և փոխանակ ռուսներին՝ սկսեց պարսիկներին կոտորել *)։

Այսպիսով Յակոբ Յարութիւնեանցը հնարաւորութիւն տուեց ռուսական մի վաշտի՝ անվնաս էջմիածին հասնել։

Եւ այդ վաշտի ազատումն էր գլխաւորապէս, որով Յակոբի գործած յանցանքն յայտնուեցաւ։

Իսկոյն ևեթ կալանաւորեցին նրան։ Եւ թէպէտ յաջողեցաւ փախչել, սակայն բռնեցին դարձեալ։

Սարդարի հրամանաւ՝ Յարութիւնեանցի աչքերը փորեցին, քիթը, շրթունքները, ականջները և ոտքերի կրունկները կտրեցին և վայր ձգեցին դաշտում դիակների մէջ։

*) Акты, VII, էջ. 491։

Ժամեր անցնելուց յետոյ՝ այս խոշտանգուած ու այլանդակուած մարդը ուշքի եկաւ, և ձեռքերի վրայ սողալով մի կերպ ինքզինքը վանքը ձգեց։

Յակոբ Յարութիւնեանցի արածները՝ ռուսական վաշտի ազատելն՝ ստուգելուց յետոյ՝ Պասկևիչը կարգադրեց նրան միանուագ 10 ոսկի (31 ռուբլի) տալ։ Տարեկան 100 ռ. էլ թոշակ՝ մինչև իր մահը։

Յակոբ Յարութիւնեանցի շնորհիւ պարսիկների ձեռքից ազատուած վաշտի խուսափումը տեսնելով՝ Էջմիածնում եղած զօրքերը ընդառաջ գնացին նրանց օգնելու նպատակաւ։

Խուսափող ռուս վաշտին հետապնդող պարսիկները այդ բանը տեսնելով և ենթադրելով, որ Էջմիածնում շատ զօրք կայ,—վախեցան և յետ դարձան։

Այսպիսով ինչպէս վանքն ու վանականները, նոյնպէս և առողջ ու հիւանդ ռուս զինուորները ազատուեցան անխուսափելի կոտորածից ու աւերմունքից։

ԼԱ.

Շարադրելով՝ «Զրաւականանալով,—շարունակում է Պասկևիչը իր մեղադրանքները,—հայոց եկեղեցու վրայ ունեցած իր ազդեցութեամբը՝ Ներսէս արքեպիսկոպոսը կամենում է տարածել այդ ազդեցութիւնը նաև աշխարհական գործերի վրայ, ձգտելով ներկայացնել իրեն որպէս գլուխ

և պետ ընդհանուր հայոց ազգի *)։ Նրա փառասիրութիւնը այս մասին այնտեղը հասաւ, որ սկսեց կոչեր հրատարակել արտասահմանի հայերին և յարաբերութիւններ սկսեց վրացի տաճիկ մեծաւորների հետ» **)։

Արտասահմանի հայերին Ներսէսը, արդարև, մի քանի անգամ կոչեր ուղղել է։ Բայց ամեն անգամ նա այդ արել է կուսակալների և զօրքերի հրամանատարների յատուկ խնդրանօք, այլ ոչ ինքնագլուխ։

Յիշենք այդ կոչերից, օրինակի համար, 1) այն կոչը, որ 1826-ին Թիֆլիզում Երմոլով կուսակալի նախագահութեամբ կազմուած զինուորական ժողովի որոշմամբ ու խնդրանօք Ներսէսը ուղղեց Երևանի և Նախիջևանի խանութիւնների հայերին, յորդորելով նրանց դիմադրել պարսիկներին։

2) Այն կոչը, որ Ներսէսը՝ Պասկևիչի իրան խնդրանօք՝ ուղղեց Աբաս-Աբադի հայերին, յորդորելով ռուսներին անձնատուր լինել։

3) Այն կոչը, որ Ներսէսը ուղղեց, դարձեալ իրեն Պասկևիչի խնդրանօք, պարսկահայերին, յորդորելով նրանց գաղթել ռուսաց նորանուաճ երկիրը — Երևան և Ղարաբաղ։

---

*) Եփրեմ կաթողիկոսին հրաժարեցնողը և նրա ազգապետական իրաւունքներն Ներսէսին տալ տուողը կառավարութիւնն ինքն էր։

**) Акты, VII, եր. 254, № 211:

4) Այն միքանի կոչերը, որ Ներսէսը ռուս զօրավարների խնդրանօք դարձեալ, ժամանակ առ ժամանակ, ուղղել է այս և այն տեղերի հայերին, յորդորելով նրանց օգնել ռուսաց բանակներին՝ ճանապարհներ ցոյց տալով և մատակարարելով հաց, գարի, եզներ, օղի կայն ինարկէ փողով, այլ ոչ ձրի։

Եւ Ներսէսի այդ ամեն տեսակ կոչերն էլ ունեցել են իրենց բարերար արդիւնքը ռուսաց համար։

Դառնալով այն մեղադրանքին՝ թէ Ներսէսը յարաբերութիւններ է անում դրացի տաճիկ մեծաւորների հետ՝ Պասկեվիչը իբրև փաստ՝ նախարարութեանը ներկայացրել է Ներսէսի մի նամակը՝ ուղղուած Մազաս բերդի Շէրիֆ աղային, որ Կարսի գաւառի նշանաւոր պաշտօնեաներից և կալուածատէրերից մէկն էր։

Նամակը Պասկեվիչի ձեռքն է անցել Կարսը ռուսաց ձեռքն անցնելուց յետոյ։

Ահա այդ նամակը։

ԼԲ.

«Բարեկամական ողջոյնս մատուցանելուց յետոյ,—գրում է Ներսէսը Շէրիֆին,—հաղորդում եմ ձեզ, որ թէ և մենք մինչև այսօր ձեզ հետ բարեկամական յարաբերութիւն չենք ունեցել և ես լսել եմ որ դուք թշնամութեամբ էք վերաբերւում ամենքին, որոնք հպատակւում են ռուսաց տէրութեանը, բայց այժմ ձեզ մօտիկ

դրացի դառնալով՝ որովհետև գետի մի կողմը ես եմ գտնուում, իսկ միւս կողմը դուք,—վասն որոյ որքան որ մեծ լինի վնասը դարձեալ պէտք է պահպանել դրացիութեան պարտաւորութիւնները։ Այդ պատճառաւ ես հարկաւոր համարեցի գրել քեզ, որ Մաստարա գիւղի բնակիչները, որոնք Էջմիածնի գիւղին են պատկանում, երկու մեծ տէրութիւնների մէջ բացուած պատերազմի պատճառաւ իրենց բոլոր ունեցած հացը,—ցորենը և գարին տարել են Ղոշայ վանքը, իսկ հիմայ լսում եմ թէ փաշան այդ հացը նըւիրել է Զաֆար խանին։

Եթէ որ այդ ճշմարիտ է,—այն ժամանակ խնդրեմ աշխատել յետ առնել այդ հացը և տալ վանքապատկան գիւղացիներին ըստ պատկանելոյն։ Իսկ եթէ անկարելի է այդ, գոնէ տալ նըրանց գարնան ցանքի համար հարիւր սօմար (Կարսի սօմարի չափով) գարի կամ բրինձ պատշաճաւոր գնով։ Եւ եթէ կամենաք ինձանից ստացէք արժէքը։

Այսպէս թէ այնպէս՝ պատերազմ կը լինի թէ խաղաղութիւն,—յամենայն դէպս մեր ձեզ հետ դրացի լինելու պատճառաւ, ձեզ համար օգտաւէտ կը լինի, մանաւանդ եթէ ցանքը լինի Մաստարա գիւղում» *)։

Այս նամակի բովանդակութիւնը, առանց բացատրութեան իմ կողմից, պարզապէս արդա-

*) Акты, VII, եա. 256:

բացնում է Ներսէս արքեպիսկոպոսի վարմունքը։ Նա պարտաւոր էր մի ամբողջ և մեծ հայարնակ գիւղ սովի չմատնելու համար՝ հարևան տաճիկ կալւածատիրոջը այն առաջարկութիւնը անել, ինչ որ արդէն արել է։ Սա Ներսէսի հովւապետական ամենասուրբ պարտականութիւնն էր։ Եւ միմիայն Պասկևիչի նման նեղսիրտ, բծախնդիր բիւրօկրատները կարող են քաղաքական նշանակութիւն տալ այսպիսի անմեղ բովանդակութեամբ թղթերին։

ԼԳ.

Հինգերորդ «Ներսէս արքեպիսկոպոսը բազմիցս արտայայտած է ձգտումն շտապցնել Էջմիածնի վանքիե կամուտները և կալւածները, թէ և այդ լինի ի վնաս տէրութեան»։

Պասկևիչի այս մեղադրանքն ևս ոչ մի հիմք չունի։ Եւ թերևս արդիւնք է նրա անտեղեկութեանը Էջմիածնի կալւածական վիճակին։

Բայց եթէ Պասկևիչին յայտնի չէին թէ ինչպիսի և որքան կալւածներ ունի Էջմիածինը, Ներսէսին հօ լաւ յայտնի էին։

Ուրեմն նա կատարեալ իրաւունք ունէր հետամուտ լինելու և պահանջելու, վաւերաթղթերով և սուլթանների ու շահերի ֆարմաններով, ռաղամներով, դսպալաններով հաստատած վանական կալւածները,—գիւղեր, այգիներ, վարելահողեր, ջրաղացներ, ձեթհանքեր, տիզեր, ուխտատներ, նախրատներ, իշատներ, մարգներ,

շիրախանաներ լճակներ, ծովակներ *),—մի խօսքով մի ընդարձակ և կանոնաւոր տնտեսականութիւն, որ Մայր Աթոռի անվիճելի սեպականութիւնն էր մահմէտական իշխանութիւնների տիրապետութեան ժամանակ, այժմ,—քրիստոնեայ իշխանութեան տիրապետութեան ժամանակ չխլուին, չհեռացնին։

Էլի շնորհակալութիւն Եփրեմ կաթողիկոսին, որի առանձին թախանձանքին զիջանելով, Նիկողայոս Ա. Կայսրը՝ հաճեցաւ ժամանակաւորապէս վանքի տիրապետութեան տակ թողնել զէթ այն հինգ գիւղերն **), որոցմով համայն հայութեան Մայր Աթոռը մի կերպ պահպանում է իր խղճուկ գոյութիւնը։

ԼԴ.

Վեցերորդ՝ Պասկևիչի գլխաւոր մեղադրանքներից մէկն էլ,—եթէ ոչ առաջինը՝ հայ զինուորների հարցն է, որի էութիւնը այս է։

Ընթերցողին յայտնի է, որ Պասկևիչի թելադրանքով զնդապետ Լազարեանը խնդրում էր Ներսէսին 2000 կամ զէթ 1500 զօրք ժողովել հայերից պարսիկներից գրաւած բերդերի պահպանութեան համար։ Յայտնի է նմանապէս, որ

---

*) Էջմիածնի անշարժ կայքերի մանրամասն ցուցակը տես «Ջամբռ» գրքի 164—210 և 294—301 երեսներում։

**) Акты, VIII, եր. 290, № 217.

Ներսէսը այս անգամ անուշադրութեան մատնեց Պասկեւիչի առաջարկը։ Եւ վերջինս աշխատեց իր ցանկութիւնը գլուխ բերել առանց Ներսէսի ա-ջակցութեանը։

Այս լսելով Ներսէսն էլ, իր հերթում, կարգադրեց էջմիածնական հայ գիւղացիներից զօրք հաւաքել Մայր Աթոռի պահպանութեան համար։

Տէրութիւնից օրինակ վերցնելով Ներսէսը ևս կարգադրել էր, որ Մայր Աթոռը իր պահպան զօրքին ոռճիկ վճարէ։ Զինուորների ծառայութեան միջոցը 25 տարի էր լինելու։

Այս նպատակի համար արդէն 100-ի չափ զինուոր վանքը վերցրած էր և զինավարժութեան մէջ նրանց կրթում էր։

Սակայն Պասկեւիչը խաբանեց այդ բանը։ Եւ խաբանեց զինուորների իրենց ձեռքով, որոնք — յայտնի չէ ումից թելադրած — բողոքեցին Ներսէս արքեպիսկոպոսի դէմ։ Եւ ահա այդ բողոքը առիթ բռնած՝ Պասկեւիչը հաւաքած զինուորներին ցրուեց և նորից զօրահաւաք լինելը խստիւ արգելեց։

Դեռ այդ բաւական չէր։ Պասկեւիչը իր ամբաստանագրումը Ներսէսի յիշեալ գործողութեանը քաղաքական մեծ նշանակութիւն տուեց նախարարութեան գրելով — «Վերջապէս ես չը-պիտի լռեմ նաև Ներսէսի մշտական հակամիտութեանը մասին՝ գաղտնի դաւադրութիւններ լարելու»։

ԼԵ.

Շարունակ լսելով այսպիսի ամբաստանութիւններ Ներսէսի մասին՝ մինիստրները կասկածի մէջ ընկան, մի գուցէ նա, յիրաւի, ձգտում է ապստամբութիւն յարուցանել տէրութեան դէմ, այն ևս այնպիսի խառնակ ժամանակ, երբ տէրութիւնը պատերազմ է մղում տաճիկների դէմ։

Սակայն մի այսպիսի ծանր մեղադրանքի համար կառավարութեանը հարկաւոր էին ծանրակշիռ և անհերքելի փաստեր, որոնք սակայն Պասկեիչի անորոշ, մութ ամբաստանագիրներում չէին երևում։

Ուստի իրողութիւնը ստուգելու համար՝ կոմս Դիբիչը յունիսի 6-ին հետևեալը գրեց Պասկեիչին։

«Ձեր գրութիւններից Թագաւոր Կայսրը քանիցս անգամ բարեհաճեց նկատել, որ Ներսէս արքեպիսկոպոսի գործողութիւնները շատ անգամ հակառակ են մեր տէրութեան նպատակներին և օգտին, որին ապացոյց է այն բողոքը, որ սրբանից առաջ մատուցել էին Ձեզ հայոց կամաւոր զօրքի 25 հոգի զինուորները, որոնց Ներսէսը ինքնակամ պարտաւորեցնում էր 25 տարի ծառայել Էջմիածնի վանքում և այդպիսով ժողովրդի մէջ շփոթ էր յարուցանում։

Այս բոլորը տեղիք է տալիս եզրակացնելու թէ գուցէ Ներսէսը որևէ գաղտնի մտքեր և

ձգտումներ ունի Ռուսաստանի հետ նոր միաւորուած երկիրների վերաբերութեամբ։

«Վասն որոյ Նորին Մեծութիւնը կամենում է գիտենալ Ձեր կարծիքը՝ արդեօք արդարացի՞ էր համարում դուք վիրոզրեալ եղբակացութիւնը Ներսէսի վարքի մասին թէ ոչ» *)։

Պասկևիչը հիմա միայն զգաց, թէ որքան նա յափշտակուել էր Ներսէսի դէմ ունեցած զրպարտութիւնների մէջ։

Պնդել թէ Ներսէսը ապստամբ է և դաւաճան տէրութեանը,—պէտք էր ապացուցանել։ Իսկ ապացոյցներ չունէր Պասկևիչը իր ձեռքին։ Մնում էր ուրեմն ոլոր մոլոր բացատրութիւններով՝ որոշ ձև տալ գործին։

Ճիշտ այդպէս էլ վարուեց Պասկևիչը՝ յուլիսի 10-ին Դիպիչին գրած իր պատասխանով, որ է այս։

Լ.Զ.

«Ներսէս արքեպիսկոպոսի վարքը և նրա գործերը,—գրում է Պասկևիչը,—մինչև այսօր չեն ցոյց տուել, որ նա ունեցած լինի մեր տէրութեան դէմ ինչպիսակար մտքեր կամ որ և է գաղտնի դիտաւորութիւն այն երկիրների վերաբերութեամբ, որ նոր են միացրած Ռուսաստանի հետ»։

«Ընդհակառակը թէ Պարսից պատերազմի

*) Акты, VII. եր. 253, № 209.

սկզբում և թէ պատերազմի ժամանակ Ներսէսը միշտ պատրաստակամութիւն է յայտնել ծառայելու յօգուտ մեր և անձնուիրութիւն է ցոյց տուել Ռուսաստանին»։

«Այս մասին,—շարունակում է Պասկևիչը,—կատարեալ իրաւունք տալով նրան—այնուամենայնիւ ես չեմ կարող չյիշել, որ փառասիրութիւնը, փչտակում անց է կացնում նրան իր կոչման և աստիճանի պարտաւորութիւնների սահմանից և թէ նա ոչ միայն հոգևոր, այլ եւ աշխարհական գործերումն էլ կամենում է*) անսահման իշխանութիւն բանեցնել»։

«Հայոց ծայրագոյն պատրիարք Եփրեմի խորին ծերութիւնը և հիւանդութիւնը Ներսէսին միջոց տուեց ձեռք առնելու հայոց եկեղեցւոյ վարչութեան դէկը։

«Արդէն իմ ականջիս հասած էին մանաւոր բողոքներ թէ նա անհաշիւ գործ է դնում եկեղեցական եկամուտները, բայց ես այդ մասին կանոնաւոր քննութիւն չիազմեցի, որովհետև ստացած տեղեկութիւնները պաշտօնական չէր»։

Այս տողերից յետոյ՝ Պասկևիչը առաջ է բերում Ներսէսի կոչերի պատմութիւնը և Մազաբերդի Շէրիֆ աղայի նամակի պատմութիւնը, որոց հետ ես արդէն ընթերցողներին ծանօթացրի վերևում։

Ապա Պասկևիչը շարունակում է՝ «ընդ սմին

---

*) Այս բառերի միտքը քիչ յետոյ ես կը պարզեմ։

կցորդում եմ տեղեկութիւններ Ներսէսի առաջ-
այ վարքի մասին, որոնք պարզում են այս հոգե-
որականի բնութիւնը և յատկութիւնները, թէ
և ես չեմ կարող բոլորովին երաշխաւորել թէ
այդ տեղեկութիւնները ճիշտ են *)։

Այսպէս ահա բացատրելով իմ կարծիքը Ներ-
սէս արքեպիսկոպոսի մասին՝ ես ճշմարտութիւ-
նից դրդուած պարտք եմ համարում վճռական
կերպով կրկնել, որ թէև նրա կողմից մեր տէ-
րութեան դէմ որ և է մնասակար ձեռնարկու-
թիւն սպասել կարելի չէ, բայց մի և նոյն ժամա-
նակ, որքան ինձ յայտնի են նրա յատկութիւն-
ները, պատիւ ունիմ ներկայացնել Ձեր բարե-
հայեցողութեանը՝ թէ ինչ հետևանքներ կարող
են առաջ գալ, եթէ Ներսէսի փառասիրութիւնը
և նրա անտեղի կողմնապահութիւնը հայոց գոր-
ծերում նեցուկ կամ պաշտպանութիւն կը գտ-
նեն այս ազգի (հայոց) միւս նշանաւոր ան-
ձինքների խորամանկութիւնների մէջ,—մի ազ-
գի, որի հաստատապէս ձգտումն եղել է, և է,
որքան կարելի է խոյս տալ մեր օրէնքի ազդե-
ցութիւնից և ներգործութիւնից։ Եւ ինչ դրու-
թեան մէջ կը լինի այստեղի գլխաւոր վարչու-
թիւնը, որ ստիպուած պիտի լինի անդադար դի-
մադրել բոլոր այն խորամանկութիւններին և
նենգութիւններին, որոց միակ նպատակն է դար-

*) Այս բառերի միտքը քիչ յետոյ ևս կը պարզեմ դարձեալ։

ձնել այդ ազգը, որի բոլոր բարորութիւնը կախված է Ռուսիոյ զօրութիւնից և հովանաւորութիւնից, դարձնել,—ասում եմ ես.—այդ ազգը առանձին արտօնութիւնների տէր մի դասակարգ, որ ամեն կերպ օգուտ լինի քաղում մեր վարչութիւնից, բայց մի և նոյն ժամանակ՝ չկամենայ ստորադրուել ոչ Ռուսիոյ ընդհանուր կանոնադրութիւններին, ոչ էլ այն պարտաւորութիւններին, որ կատարում են Նորին Կայսերական Մեծութեան միւս հպատակները*)։

Լէ.

Մի կողմ թողնենք Պասկևիչի այն տողերն, որոցմով նա նախատում և վիրաւորում է ամբողջ հայ ազգը, չյիշենք այն արտօնութիւններն, որ իբրև թէ վայելելիս են եղել հայերը Պասկևիչի ժամանակ, և որոց վախճանական նպատակը եղել է ոչ թէ այդ ազգի իրան, այլ դարձեալ կառավարութեան օգուտն ու շահերը։

Այլ բացատրենք Պասկևիչի այն տողերն, որոցմով նա ամբաստանում է Ներսէս արքեպիսկոպոսին աշխարհական գործերի միջամտելու համար, նոյնպէս և այն տեղեկութիւնների համար Ներսէսի անցեալ վարքի մասին, որոց ճշտութիւնը երաշխաւորելուց հրաժարւում էր Պասկևիչը։

Առաջին կէտի վերաբերութեամբ Պասկևիչը

*) Акты, VII, եր. 254, № 211.

երկու դէպք աչքի առաջ ունի։ Նախ՝ Ներսէսի միջամտութիւնը «հայկական նահանգների կառավարութեան» գործառնում։ Բայց չէ՞ որ Պասկևիչը ինքն էր կարգել նրան յիշեալ կառավարութեան անդամ։ Բայց երբ տեսաւ, որ Ներսէսը, ըստ ամենայնի այնպէս չի շարժում ու գործում, ինչպէս որ հաճելի էին իրան Պասկևիչին,—այն ժամանակ նա նրան հրաժարեցրեց անդամակցութիւնից,—«ամենամաղամավարի ձեռով և ամենեւին չդիպչելով նրա պատիւն*), ինչպէս որ նա ինքը հաղորդում է նախարարութեանը։

Ներսէսի երկրորդ միջամտութիւնը աշխարհական գործերում ըստ Պասկևիչի՝ այն կարծիքն է, որ Արևին յայտնել էր Թիւրքմանչայի հաշտութեան դաշնագրի մէկ կէտի մասին։

Ահա բանն ինչումն է։

ԼԸ.

Դաշնագրի նախագծի զօրութեամբ Ռուսաց նոր սահմանը՝ Նախիջևանի սկսած գնում հասնում էր նոր գծով մինչև Արաքս գետը՝ պարսիկներին վերադաձնելով Մանկուի խանութիւնը, որ սուր անկիւնի նման մտնում էր Ռուսաց հողի մէջ։—Ներսէսի կարծիքով պէտք չէր Մակուի խանութիւնն վերադարձնել պարսիկներին, և սահմանի գիծը տանել ոչ թէ Արաքսի վրայով, այլ

*) Актъ, VII, եր. 258, № 214.

ուղիղ գծով, լեռնաշղթաների վրայով տանել հասցնել մինչև տաճկաց սահմանագլուխը։

Այս կարծիքն, որ ինքն ըստ ինքեան խելացի է, Ներսէսը գրաւոր կեպով հրաղորդել էր իր բարեկամ գեներալ Կնասովսկուն։ Սա էլ իր պաշտօնական գրութեամբ ներկայացնել էր ի բարեհայեցողութիւն Պասկիչին։

Վերջինս սաստիկ գայրացաւ ինչպէս Ներսէսի, այնպէս և Կրասովսկու վրայ, որի մասին և գրեց նախարարութեանը թէ՝ «եթէ գեներալ-լէյտէնանտ Կրասովսկին՝ Ներսէսի այս կարծիքը պաշտօնապէս ինքը հաղորդած չլինէր,—նրա յայտարարութիւնը ես կատակ կը համարէի։ Որովհետև դժւարանում եմ երևակայել, որ գեներալ Կրասովսկին և Ներսէս Արքեպիսկոպոսը խելքներին զօռ տային պաշտօնապէս խորհուրդ տալ ինձ թէ ես ինչ տեսակ հաշտութիւն պիտի կայացնեմ։ Մինչդեռ այդ պատուին ես արժանացել եմ Թագաւոր Կայսեր արտօնութեամբ։ Այդ պատճառաւ էլ չկամենալով իմ իշխանութեան մէջ հասարակապետական կանոններ թոյլ տալու,—ես գեներալ Կրասովսկուն յանդիմանութիւն գրեցի՝ իրան չվերաբերեալ գործում միջամտելու համար։

ԼԹ.

Դառնալով Ներսէսի անցեալ վարքի մասին եղած տեղեկութիւններին *) կասենք, որ դրանք

*) Акты, VII, եր. 255։

կազմել է՝ Պասկևիչի պահանջմամբ՝ Սերոբէ վարդապետը, որին գնդապետ Լազարեանը հետը բերել էր Իրրև թարգման պարսկահայերի գաղթականութեան ժամանակ և որը ի հաճոյս Պասկևիչին, միշտ հակառակ դիրք էր բռնել զէպի Ներսէսը։

Սերոբէի կազմած տեղեկագրի ամեն մի տողում ու բառում ատերն ու զրպարտութիւնները առաջին տեղն են բռնում։ Աշտարակեցուն վատ մարդ դուրս բերել, պատմական փաստերն աղճատել, շուռ ու մուռ տալ, ռուս քաղաքականութեան զործած խառնակութիւններն, պառակտում ու աքսորանքներն՝ Ներսէսին վերագրել, նրան վերագրել նմանապէս և բացառապէս այն խաղերն ևս, որ պարսից և ռուսաց քաղաքականութիւնը խաղաց Եփրեմ կաթողիկոսի դէմին և այլն,—ահա Սերոբէի կազմած և Պասկևիչի ձեռքով նախարարութեանը ներկայացրած տեղեկագրի բովանդակութիւնը։

Պասկևիչը, չնայած իր ատելութեանը զէպի Ներսէսը, անշուշտ հասկանում էր, որ իրան պատիւ չի բերել մի այդպիսի պարսաւագիր ներկայացնել իշխանութեանը, ուստի և շշտեց, որ այդ տեղեկութիւնների ճշմարտութիւնը ինքը չէ կարող երաշխաւորել։

Ա.

Թէ Նիկողայոս Ա. Կայսրը և թէ նրա մինիստրները շատ լաւ ծանօթ էին երիտասարդ

Պասկևիչի բնաւորութեանը։ Գիտէին, որ իր միքանի լաւ յատկութիւնների հետ, միևնոյն ժամանակ, շատ փառասէր է, նախանձոտ, ոխակալ, վրէժխնդիր։ Թէ իր այս վերջին յատկութիւններից մղած՝ Պասկևիչը իրանից հեռացրել էր Մադաթեանին, Կրասովսկուն, Լազարեանին, Մուրավեօվին և հեռացրել էր ամեն մէկի վրայ մի բիծ կպցնելով, մի արատ գտնելով և նոյնիսկ հնարելով։

Վերջին հանգամանքը այն աստիճան աչքի էր ընկել, որ կայսրը մի մասնաւոր նամակ գրրեց, որով մի խրատախսան յանդիմանութիւն գրելով հրաւիրում էր նրան. իր գործակիցների և ստորադրեալների նկատմամբ լինել միշտ արդարադատ, վեհանձն, համեստ, ներողամիտ, և այլն։

Արդ՝ երբ Պասկևիչի յուլիս 10 թուակիր բացատրութիւնը Ներսէսի գործունէութեան մասին՝ Պետերբուրգում կարդացին՝ միամտեցան՝ որ Արևելոյ գործողութիւնների մէջ անբարեյուսութեան, կամ դատարդութեան նշոյլ անգամ չլինելն՝ ամբաստանող Պասկևիչը իր բերանովն է խոստովանում ու վկայում։

«Ի վերայ այսր ամենայնի՝ հետեւելով աւանդական կարգապահութեանը Պետերբուրգում, ինչպէս որ Պասկևիչի քմահաճոյքներին զոհ էին բերել վերոյիշեալ գեներալներին, այսպէս էլ որոշեցին զոհել նաեւ Ներսէս արքեպիսկոպո-

սին», որի հեռացումն էր պահանջում Կովկասից Պասկևիչը իր վերջին գրութիւնների մէջ։

Դէպքը այնպէս բերեց, որ Արևելոյ հեռացումը պատուաւոր կերպով և կառավարութեան համար օգտակար նպատակով պիտի կատարուէր։

ԽԱ.

Այն օրերում երբ Պասկևիչը հետամուտ էր Ներսէսին Կովկասից հեռացնել՝ Մոլդավիայի, Վալախիայի և Բեսարաբիայի առաջնորդ Գրիգոր եպիսկոպոսը մեռաւ։ Եւ նրա մահը ամենայարմար առիթ եղաւ Պետերբուրգի արքունիքի համար՝ թէ Պասկևիչի կամքը կատարելու և թէ Ներսէսի իրեն յարմար պաշտօն տալու և թէ Ներսէսից նոր մէկանց օգտուելու։

Ի դէպ՝ Ռուսաստանը արդէն կազմ և պատրաստ էր Օսմանեան տէրութեանը պատերազմ յայտարարելու։ Եւ նրան անհրաժեշտ էր Բեսարաբիայում ունենալ մի կտրիճ, գործունեայ հայ եպիսկոպոս, որ կարողանար Արդութեան Յովսէփ արքեպիսկոպոսի նման ռուսական ազդեցութիւնը տարածել Բալկանեան թերակղզու հայ ժողովրդի, և նրա միջոցաւ նաև տեղացիների վրայ։

Այս պատճառաւ՝ 1828 թ. ապրիլի 13-ին մինիստր Բենկենդորֆը մի-մի նամակ գրեց Պասկևիչին, Եփրեմ կաթողիկոսին և Ներսէսին։ Նամակների բովանդակութիւնը նոյն է։ Եւ բոլորը միասին Պասկևիչին է ուղարկւած, որ կարդայ,

և եթէ ինքն ևս համամիտ կը լինի մինիստրին՝ յանձնէ ըստ պատկանելոց։

Նամակներէ մէջ շեշտուած է, որ ամենայարմար թեկնածուն Ներսէսն է։ Բայց եթէ ծերութեան կամ առողջութեան տեսակէտով նա չկամենայ գնալ,—ապա անհրաժեշտ է մի այնպիսի հայ հոգևորական ընտրել, «որ լինի ընդունակ, ժողովրդի վստահութիւնը գրաւած, և տեղեակ երկրին ու տաճիկ լեզուին»։

«Որ կարողանար,—շարունակում է Բենգենդօրֆը,—օգնել բարեկարգելու այնտեղի հայոց վիճակը ըստ օրինակի իշխ. Երկայնաբազուկ Աղուրեան Յովսեփ Կարողիկոսի»։

Բենգենդօրֆը Եփրեմ կաթողիկոսի նամակը վերջացնում է հետևեալ առոգերով «իր ծանօթութեամբ ազգային գործերի հետ և իր ջերմեռանդութեամբը, յայտնի և ձեր հաւատարիմ պետ. խորհրդ. Խաչատուր Յովակիմեան Լազարեանը, որ կայսերական հրամանաւ ինձ մօտ պաշտօնեայ է, որպէս առաջ, նոյնպէս և այժմ հաղորդում է ձեզ մանրամասնութիւնները։ Նա այսուհետև ևս կը շարունակէ բանակցել կարևոր գործերի վերաբերմամբ»։

ԽԲ.

Նախարարի այս գրութիւնները Պասկևիչը անմիջապէս հասցրեց Եփրեմ կաթողիկոսին և Ներսէս արքեպիսկոպոսին՝ վերջինիս խնդրելով

տեղեկացնել թէ «հանգամանքները և Ձեր առողջութիւնը թոյլ տալիս են ձեզ արդեօք այս ճանապարհորդութիւնը կատարելու, թէ զուցէ Բեսարաբիա կը նշանակի մի ուրիշ հովտապատ, որ բարձրագոյն կամքը կատարելու համար՝ պէտք է անմիջապէս ուղևորուի այնտեղ»։ Ներսէսը, իհարկէ, հասկացաւ որ իրան Կովկասից հեռացնել են ուզում։ Եւ միևնոյն ժամանակ, Բեսարաբիայումն էլ ուզում են դարձեալ նրան իրանց քաղաքական նպատակներին ծառայեցնել։ Ուստի մայիսի 28-ին հետևեալ պատասխանը ուղղեց Պասկևիչին՝ «Ձեր մայիսի 21-ի գրութեանը պատիւ ունիմ պատասխանել, որ առաջիկայ յունիսի 4-ին ես դուրս կուգամ Էջմիածնից և Արարատի վրայով կուգամ Թիֆլիզ»։

Իսկ ինչ կը վերաբերի բարձրագոյն հրամանաւ իմ Բեսարաբիա ուղևորելուն,—ես իմ պարտքն եմ համարում նախ անձամբ տեսնել Ձեր պայծառափայլութեանը հետ եւ ընդունել Ձեր խորհուրդները ի բարութիւն հայոց ազգին։ Ուստի խնդրում եմ հաղորդել ինձ՝ թէ որտեղ կարժանանամ ես Ձեզ հետ տեսնելու, եթէ որ Ձեր պայծառափայլութիւնը մինչև իմ դալս արդէն բարեհաճած կը լինէք ուղևորելու Թիֆլիզից դէպի Օսմանեան սահմանները» *)։

---

*) Акты, VII, եր. 254:

ԽԳ.

Ներսէսի այս պատասխանը ոչ միայն չբաւականացրեց Պասկևիչին, այլ մինչև անգամ զայրացրեց նրան։

Ներսէսը բացայայտ կերպով չէր գրում թէ՝ կամենում է արդեօք գնալ Բեսարաբիա թէ ոչ, այլ կանխապէս ուզում էր տեսնել իրան,— Պասկևիչի հետ հայոց ազգի բարօրութեան համար խօսակցելու նպատակաւ։ Եւ որովհետև Ներսէսի հետ տեսակցելու ոչ ժամանակ ունէր Պասկևիչը, ոչ էլ ցանկութիւն,— ուստի պատասխանեց, որ եթէ Արևին օգոստոսի 8-ին 9-ին կարողանայ հասնել Գիւմրի, այն ժամանակ գուցէ դէ իրան այնտեղ գտնի, բայց միթէ այնքան նշանաւոր են,—շարունակում է Պասկևիչը,— այն պատճառները, որոնք պիտի կարողանան ուշացնելու Բարձրագոյն հրամանը՝ ձեր ամենափոյթ ուղևորութեան մասին ի Բեսարաբիա, եթէ միայն համաձայն էք այդ ճանապարհորդութիւնն անելու, և արդեօք աւելի լաւ չէք համարել, որ հայոց ազգի բարօրութեան վերաբերեալ մտքերը գրաւորապէս հաղորդէք ինձ։

Այս գրութեան հետ՝ Պասկևիչը կարգադրեց Թիֆլիզում արքունի գանձարանից Ներսէս արքեպիսկոպոսին 300 ոսկի ճանապարհածախք տալ։

Դառնալով այն հարցին թէ հայոց ազգի բարօրութեանը վերաբերեալ ինչ հարց կար Ներ-

սէսի և Պասկեիչի մէջ,—դժուար է դրական և ստոյգ բացատրութիւն տալ։

Պատմութիւնից յայտնի է միմիայն հետեւեալը։

ԽԴ.

Ներսէս արքեպիսկոպոսը՝ մինչև իր կենաց վերջին բոպէն ձախ ծոցի գրպանում մի թուղթ էր պահում, որից գիշեր և ցերեկ չէր բաժանուում։ Եւ ամեն անգամ երբ Պասկեիչի և անցած գնացած բաների մասին, մասնաւոր մըտերմական շրջանում խօսք էր լինում,—Ներսէսը ձեռքը ձախ ծոցի վրայ էր դնում և ասում՝ *ահա այստեղ է կրաշկանդած Պասկեիչը։*

Այս թղթի գոյութեան մասին՝ տեղեակ էին այն ժամանակւայ Կովկասեան կուսակալները,—իշխ. Վօրոնցովը, Մուրաւեովը և իշխան Բարեատինսկին։ Բայց ոչ ոք չգիտէր թէ ինչ է թղթի բովանդակութիւնը։ Ներսէսը ոչ ուրիշին էր ցոյց տալիս յիշեալ թուղթը, ոչ էլ հրատարակում։

Ենթադրաբար ասում էին իբրև թէ յիշեալ թուղթը Պասկեիչն է տուել Ներսէսին նախ քան պատերազմը և նրանում մի խոստմունք է արել հայոց ազգին։

Միևնոյն միտքը յայտնում է և Պէրպէրեան պատմիչը *) Պասկեիչի «խոստումը» լուսաբանելով այնպէս, որ եթէ Ներսէսը աշակից լինի

*) Պատմ. Հայոց, կ. Պոլիս. 1871, եր. 283։

ռուս բանակին Երևանի և Նախիջևանի խանութիւնները պարսիկներից առնելու, այն ժամանակ այդ երկիրը իբրև մի ժամանակ դրութիւն է համարվում՝ ռուսաց հովանաւորութեան և պաշտպանութեան ներքոյ։

Պէրպէրեանը այս էլ է գրում, իբրև թէ Պասկևիչի տված թղթի Նիկողայոս Ա. կայսրն էլ է սառորագրել,—որ, ի հարկէ, անհնարին բան է։

Աւելի հաւանական է այն տարածված կարծիքը թէ Պասկևիչի գրաւոր խոստումն եղել է կայսեր կողմից։ Պէրպէրեանը գրում է նաև, որ երբ Ներսէս Աշտարակեցին, վերջերում, իբրև կաթողիկոս՝ կայսեր ներկայացաւ՝ Պասկևիչի տված թղթի մասին Ներսէսը խօսք բաց արեց. առ որ կայսրը այս է պատասխանել՝ «այժմ քաղաքականութիւնն Եւրոպացւոց ընդդէմ ելանէ այսմ կարգադրութեան, և ոչ յաջողի բնաւ և ազգ ձեր տեսանէ վնաս յամենայն կողմանս, ուր և ցրուեալք իսկ են։ Եթէ ողորմութեամբ Աստուծոյ՝ ի գլուխ տարայց զԱրևելեան խնդիրն ազատութեան Քրիստոնէից, յայն ժամ դիւրաւ յաջողի և այդ խնդիր ձեր»։

Ներսէսի տեսակցութեան ժամանակ կայսեր հետ՝ չենք կարծում թէ՝ Պասկևիչի թղթի մասին խօսք բացված լինի, բայց եթէ լինի էլ,—կայսեր պատասխանը այն կարող էր լինել, ինչ որ Ներսէսը դուրս է բերել իր կոնդակում, որ մեր բացատրութիւններով և կարծիքներով հրա-

տարակել ենք արդէն *)։ Ըստ այդ կոնդակի կայսրը յուսադրել է Ներսէսին՝ «վասն ամբառնալոյ զԱթոռն Էջմիածնի յարժանաւոր գիտակցութիւն, վասն զօրացուցանելոյ զհոգևորականն (հոգևորականութիւնը) հայոց և վասն ապահովելոյ զամենայն զրնակիչսն այն կողմանց Կովկասու, և վասն այլոց բազմաց»։

Կայսրը իր այդ խոստումները կատարեց և նախարարութեանը հրահանգ տուեց Էջմիածնի նշանակութիւնը բարձրացնելու օտարահպատակ հայերի աչքում, հայ հոգևորականութեան ազդեցութիւնը ժողովրդի վրայ՝ զօրացնելու, իսկ Կովկասեան ժողովրդի կեանքն ու գոյքը ապահովելու։

Եւ այս ամենը արաւ ռուս կառավարութիւնը՝ բացառապէս իր քաղաքական շահերից հարկադրուած։

Այդ քաղաքականութիւնը այժմ, մեծ մասամբ, փոխուած է, բայց դեռ խպտաս խոտուած, մի կողմ ձգուած չէ։ Եւ առժամանակ մի չի էլ ձգի, քանի որ «հայկական հարցը» տակաւին մնում է քաղաքական հորիզոնի վրայ։

Խե.

Վերադառնալով Պասկեիչի թղթին՝ ես ընդունում եմ, որ Ներսէսի մօտ մի այդպիսի

*) Պատմ. Բաղուածներ, «Հովիտ» 1911, №№ 11—12։

թուղթ կար։ Եւ թէ՝ այդ թղթով Պասկևիչը խոստացած էր Երևանի և Նախիջևանի խանութիւններից հայկական մի դքսութիւն կազմել ռուսաց հովանաւորութեան և պաշտպանութեան ներքոյ։

Բայց եթէ Ներսէսն ու նրա ժամանակի հայ քաղաքական գործիչներն՝ չէին հասկանում, որ հայկական դքսութիւնը բնաւ տևական չէ կարող լինել,—այժմ հօ ամեն մի հայ մարդու համար էլ,—որ փոքրի ի շատէ գիտէ քաղաքականութեան ինչ լինելը,—շատ պարզ է, որ հայկական ինքնուրոյն իշխանութիւն կազմելու միտքը՝ հէնց իրանք,—այդ մտքի հեղինակներն ու պաշտպանները՝ իրանց ձեռքով տապալեցին։ Դրանք են՝ «հայկական հարցի» բոլոր շրջանների բոլոր քաղաքական գործիչները, անխտիր։

Մանաւորապէս Յովսէփ Երկայնաբազուկ Արզումեան արքեպիսկոպոսը, որ ի շնորհս իր մտերմութեան վրաց թագաւորների և իշխանազունների՝ այնքան աշխատեցաւ իր կողմից ևս Վրաստանը միացնելու Ռուսաստանի հետ։ Եւ յաջողեցաւ էլ։

Եւ իր այդ յաջողութեամբ մի անգամ ընդ միշտ թաղեց հայկական ինքնուրոյն իշխանութեան գաղափարը, որ Արևին անկեղծօրէն սիրեց ու փայփայեց այնքան, մինչև որ իր կրծքի վրայ խեղդեց, մահացրեց ի հարկէ անգիտակցաբար։ Նոյնը արաւ և Ներսէս Աշտարակեցի արքեպիսկոպոսը, որ Պասկևիչի սին ու անբո-

վանդակ ստորագրութեան վրայ յոյսը դրած մեռած ու թաղած գաղափարին կենդանութիւն էր ուզում տալ։

Ուստի և Բեսարաբիա գնալու առաջարկն ընդունելով մասամբ, շատ ուրախ եղաւ և ժողովրդի հետ ինքն էլ կարծում էր, որ Բեսարաբիա ուղևորուելն՝ իրեն համար խիստ բարեպատեհ առիթ է ընծայում անձամբ ներկայանալով կայսեր՝ մանրամասն խօսել այն ամեն խնդիրների մասին ինչ որ հայոց ազգի բարորութեանն է վերաբերում։

Ներսէսի մտիկ անձնաւորութիւնները՝ իրանց լաւատեսութեան մէջ դեռ աւելի հեռու էին գնում։

ԽԶ.

Նրանք կարծում էին, որ իբր թէ Արշին Բենգենդօրֆի նամակը լաւ չէ հասկացել, որ նրան Կովկասից չեն հեռացնում, այլ թէ ներկայ Օսմանեան պատերազմի ժամանակ տէրութիւնը շատ կարևորութիւն ունենալով իր ներկայութեանն ու օգնութեանը Բեսարաբիայում ժամանակաւորապէս հրաւիրում է նրան գնալ այնտեղ։ Թէ պատերազմը վերջանալուց յետոյ՝ Ներսէսը դարձեալ պիտի վերադառնայ Կովկաս՝ աւելի մեծ ղեր խաղալու կամ գործ կատարելու «հայոց ազգի բարորութեանը համար»։

Բենգենդօրֆի գրութեան այն տողերը, թէ

Ներսէսը «իր բացակայութեան միջոցին բոլոր գործերը յանձնէ մի ընդունակ յաջորդի»,—իբր թէ հաստատում էին վերոյիշեալ ենթադրութիւնը։

Հետևաբար,—պնդում էին Ներսէսի բարեկամները,—Արևին Բեսարաբիա գնալով՝ վերապահում էր իրան՝ Վրաստանի առաջնորդութիւնը և Էջմիածնի գերագոյն վարչութեան կառավարութիւնը, և նրա իշխանութիւնը պիտի տարածուի Բեսարաբիայից մինչև Արաքսի ափը։

Արևոյ մտերիմների այս մտքերը Ներսէսը ինքն ևս ունուցանում և փայփայում էր և նա՝ միանգամայն վստահ էր, որ կայսեր և նրա աւագանուոյն ներկայանալով պիտի կարողանայ իր նպատակին հասնել,—1828 թ. օգոստոսի կէսին Կովկասեան լեռներն անցնելով՝ ուղում էր դէպի Ռուսաստան ուղղել իր ճանապարհորդութիւնը և ահա հրաման ստացաւ, որ Քիշնևի զնայ, այլ ոչ ոքիշ տեղ։

Այս հրամանի ստանալն Ներսէսը Ստաւրոպոլից Թիֆլիզի իր մի բարեկամին հաղորդելով՝ աւելացնում էր հետևեալ տողերը՝ «քանզի որչափ մտածեմ, հատարեմ սուուգիւ զինուորութեան սատանայի ի ձեռն իւրոյ արքանեկաց յարուցեալ ընդդէմ մերումս հոգևորական կառավարութեանց, ըստ որոյ հարկաւորի զգուշանալ՝ մինչև զայն պատահարն չարին խորտակեցէ Իսքն Տէր»։ Եւ Ներսէսին հարկաւոր եղաւ

զգուշանալ ամբողջ 14 տարի Քիշնևում անգործ նստելով։

Մի կողմ թողնելով Արևելյան գործունեության նկարագիրը Բեսարաբիայում,—դա իմ ծրագրին չէ վերաբերում,—ես կանցնեմ ռուս-տաճկական պատերազմին։

Խէ.

1828 թ. յունիսի 14-ին Պասկևիչը Գիւմրիի մօտով (որ այժմեան Ալէքսանդրոպոլի տեղումը մի գիւղ էր) իր մեծ բանակով մտաւ տաճկաց սահմանը։ Կարսի, Բայազետի և Ախալցխայի փաշայութիւնների միջով սկսեցան Թուսաց արշաւները։ Այդ երկիրների բնակիչների մեծագոյն մասը՝ հայեր էին։ Այսպէս՝ Բայազետի փաշայութեան մէջ, պատերազմից առաջ, 3200 տուն հայ կար և միմիայն 550 տուն տաճիկ։ Կարս քաղաքում 2500 տուն հայեր էին ապրում և միմիայն 360 տուն տաճիկ։ Իսկ նրա շրջակայքում տարածւում էին 248 գիւղ, որոց բնակիչների կէսը հայեր էին, կէսը տաճիկներ, այն է՝ 1850-ական տուն։ Նոյնն էր գրեթէ և Ախալցխայի փաշայութեան մէջ։

Գիւմրիի մօտով սահմանն անցնելով Պասկևիչը իր բանակը Կարսի բերդի վրայ շարժեց յատկապէս հայ գիւղերով, նրանցից օգտուելու միակ նպատակաւ ի հարկէ։ Բայց նրա յոյսը ի դերև ելաւ։

Որովհետև, ինչպէս երկու տարի առաջ պարսիկներն էին արել, այժմ էլ նոյն բանը արին և

տաճիկներն։ Հայերից խլելով բորոբ զէնքերը, նոյնիսկ բահերը, կացիններն ու դանակները՝ տաճիկները բոլոր զիւղացիներին քշել տարել էին Բասենի կողմերը։

Այնպէս որ սպասուած համակրութեան օգնութեան փոխարէն՝ ռուսաց բանակը Տաճկաստան մտած օրից ի վեր՝ իր հանդէպ միմիայն հայկական զիւղերի աւերակները տեսաւ։ Եւ Պասկեվիչը գրեց կայսեր՝ «այս երկիրը լիքն էր հայ ազգաբնակութեամբ, իսկ այժմ կատարեալ անապատ է դարձել, որովհետև տաճիկ կառավարութիւնը բնակիչներին քշել է հեռաւոր տեղեր» *)։

Զայրացած, որ չկարողացաւ այս անգամ ևս օգտուել ինչպէս հայ ժողովրդից, նոյնպէս և հայ հոգևորականութիւնից,—Պասկեվիչը մի այլ գրութեան մէջ **) սկսեց զրպարտել հայերին գրելով «թէ հայերը իբրև ճիշտ տեղեկութիւններ չեն հաղորդում տաճիկ զօրքերի մասին, այն ինչ շնորհիւ հայ լրտեսների և էջմիածնի հոգևորականութեան անխոնարհմիտների թշնամին տեղեակ է թէ ինչ է կատարւում մեր բանակում»։

ԽԸ.

Գալով Կարս քաղաքի հայերին՝ տաճիկ կառավարութիւնը թէպէտ և նրանց էլ զիւղացիներ-

---

*) Актъ, VII. եր. 747, № 753.

**) Актъ, VII, եր. 753, № 756.

ի նման տեղահան չարեց, սակայն նրանց էլ գէնք բաժանելով՝ ստիպում էր տաճիկ սպաների հսկողութեան տակ կուել ռուսերի դէմ։ Հայերը չէին կռում, այլ կռվել էին ձեւացնում։ Ընդհակառակը բերդի պաշարման ժամանակ՝ նրանք օգնում էին ռուս զինուորներին բերդի պատերի վրայ բարձրանալու, և որիշ այլեւայլ օգնութիւններ էին անում, որոնք մեծապէս նպաստեցին Պասկեւիչին, ամենակարճ ժամանակում,—յունիսի 23-ին անառիկ բերդին տիրանալու։

Այս բանը շատ լաւ հասկացաւ թէ տաճիկ ժողովուրդը և թէ կառավարութիւնը, որ Կարսի անկումը վերագրեց տեղացի հայերի դաւաճանութեանը *) և բերդապահ փաշայի կաշառած լինելուն, մի հանգամանք, որ Պասկեւիչը ինքն էլ չէ թաղցնում։ Այսպէս՝ նրա 1829 թ. յունւարի 11-ին կայսեր մատուցած ընդարձակ տեղեկագրից երևում է, որ ինքը վաղօրօք իր կողմն է գրաւած եղել ինչպէս Կարսի, Նոյնպէս և Մուշի ու Բայազէտի փաշաներին **)։ Եւ հէնց այս է պատճառը, որ Կարսի անկումից յետոյ Պասկեւիչը հետզհետէ տիրեց և այդ փաշալիքներին։

---

*) Ինչպէս 1828, Նոյնպէս և 1855—1877 թւերում կարսեցի հայերը մեծապէս օգնել են բերդի անկմանը։ Դրանց թւում էր վերջին անգամ վանեցի Գրիգոր վ. Աղուանանը, որին եպիսկոպոս ձեռնադրելը պահանջելով պահանջում էր փոխարքայ Մեծ Իշխանը։

**) Акты, VII, եր. 775, № 775։

Կարսին տիրելուց յետոյ՝ ռուսները առանց առանձին դժուարութեան տիրեցին Ախալքալաքի և Խրթվիզի բերդերին *) և ապա անցան պաշարեցին Ախալցխան, որտեղ տաճիկները կենդրոնացրել էին իրանց ոյժը։ Բացի տէրութեան զօրքից՝ ռուսներին դիմադրելու հարկադրւած էին նաև տեղական ազգաբնակութիւնը՝ հայերն ու վրացիները, որոց ընտանիքներին ապահով վայրերում պատսպարելով՝ տաճիկ կառավարութիւնը ազամարդկանցը զինաւորել էր գրեթէ կանոնաւոր զօրքի հաւասար։

Սակայն զինւած ժողովուրդը, մեծ մասամբ, չէր կռւում, կամ ռուսաց բանակն էր փախչում։ Անճարացած կառավարութիւնը ժողովրդից յետ վերցրեց բաժանած զէնքերը և առանձին հսկողութիւն նշանակեց ժողովրդի վրայ։

ԽԹ.

Ախալցխայի պաշարումը մի քանի օր տեւեց։ Պաշարւած տաճիկ զօրքի և տաճիկ ժողովրդի ցոյց տւած ընդդիմութիւնը՝ միանգամայն զարմացրեց ռուսներին։ Մինչև այժմ նրանք այդպիսի դիմադրութեան հանդիպած չէին։ Տաճիկ կնանիքն անգամ զէնքը ձեռքին՝ կռւում էին ռուսների դէմ։

Տեսնելով որ կռւով անկարելի է քաղաքին

*) Акты, VII, եր. 754 և 759։

տիրելու, ռուսները քաղաքի զանազան մասերում կրակ ձգեցին, հրդեհեցին։

Դրանից 4000 հոգի խանձուեցան, այրուեցան, փողոցները դիակներով լեցնելով։ Հրդեհը վերջանալուց յետոյ՝ ռուսները յաղթական կերպով քաղաք մտան և սկսեցին անխնայաբար կոտորել ու կոտորել կենդանի մնացած ժողովրդին—առանց խտրութիւն դնելու մեծերի և փոքրերի մէջ։

Սարսափելի էր մանաւանդ,—ասում է պատմիչը,—հայոց թաղի կլաձն ու տեսածը»:

Վերջապէս օգոստոսի 15-ին Ախալցխան անձնատուր եղաւ *)։

Քաղաքի և շրջակայի համար կառավարիչ նշանակուեցաւ իշխան Վասիլ Բէհրութովը,—հայազգի։

Գիտենալով որ Ախալցխային տիրելուց յետոյ, ռուսները Արդահանի վրայ են յարձակուելու, և այդ քաղաքի ու նրա շրջակայ հայ գիւղացիները, կամայ թէ ակամայ, օգնելու են ռուսերին,—տաճիկ կառավ. կարգադրութեամբ այդ բոլոր գիւղերի բնակիչներին բռնութեամբ սկսեցին հշել տանել դեպի Աշրոում—Պարին։

Պասկեվիչը մի վաշտ զօրք ուղարկեց թշուառ հայերին տգատելու համար։

Օգոստոսի 18-ին ռուսց վաշտը հասաւ փա-

---

*) Акты, VII, եր. 760, № 766։

խստականներին՝ որոնք շրջապատած էին 4000 տաճիկ քիւրդ հեծելազօրքով։

Վերջիններիս և ռուս վաշտի մէջ տեղի ունեցաւ կռիւ ու քաշքռտոց։

Ռուսները աշխատում էին հայերին յետ դարձնել, իսկ տաճիկները առաջ քշել։ Այս մարդկային հօտը՝ քանիցս անգամ մէկ այս կողմն անցաւ, մէկ այն կողմ։

«Աղէտալի է,—գրում է պատմիչը,—այդ տարագրած հայերի դրութիւնը, որովհետև սակաւաթիւ ռուս զօրքը չէր կարողանում կատարելապէս պաշտպանել նրանց։ Զինուորական պատմութեան մէջ շատ սրտաճմլիկ կերպով է նկարագրած հայերի այդ մրքանի ժամայ կրած տանջանքն ու տառապանքը»։

Վերջապէս երբ տաճիկներն ու քիւրդերը տեսան որ հայերը ամեն կերպ ուզում են որսներին հետևել,—ուստի ձանձրացած այդ կռուից ու կոտորածից՝ թողին ժողովրդին և հեռացան։ Տարագրւած հայերը 23 գիւղի բնակիչներ էին թւով մի քանի հազար հոգի, որոց փոխանակ իրանց գիւղերը վերադարձնելու՝ ռուսները հետևերը վերցրին և տարան Կարս, ուր այդ ժամանակ տարածւած էր ժանդախտը-չուման։

Ը.

Մինչդեռ Արդահանի շրջակայ հայ գիւղացիներն Կարսի՝ չումայի բերանն էին տար-

լում,—Արդահան քաղաքի հայերն,—որ ազգաբնակութեան ամենամեծ մասն էին կազմում,—եկեղեցական հանդէսով դիմաւորում էր քաղաքին մօտեցող ռուս զօրքին և բերդի բանալիները զօրավարին տանում յանձնում։ Որովհետև բերդապահ տաճիկ զօրքը հեռացել էր և Սողանլուի լեռներով դէպի Արզրում մեկնել իր հետ քշելով Սողանլուի շրջակայ [33 հայ գիւղերի բնակիչներին եւս ոչնչէս զի շօվնեն ոսներին։

Պասկևիչը դեռ Արդահանում էր, երբ լուր առաւ, որ իշխան Զաւչավադզէն Բայազէտի փաշայութիւնը նուաճել է *)։

Այս խոշոր նուաճման մէջ՝ ռուներին մեծապէս օգնեցին հայերը՝ բանակին հաց մատակարարելով, թշնամու թափ և դրութեան մասին՝ ճշգրիտ տեղեկութիւններ ռուներին հաղորդելով, նրանց ճանապարհներ և անցքեր ցոյց տալով, քրդերի մեծաւորներին ռուսաց կողմը գրաւելով և վերջապէս 500 հոգուց հայկական մի հեծելագունդ կազմելով։

Իսկ այս ամէնի փոխարէն քրդերն էլ սկսեցին իրանց ձեռքն ընկած հայերին մորթոտել, իրանց ճանապարհներին հանդիպած հայ գիւղերը թալանել, բնակիչներին լլկել, շարշարել եւ նրանց հազարաւոր եւ տասնեակ հազարաւոր խաշներն ու տաւարները քշել, տանել։

Բայազէտի քրդերի օրինակից խրախուսե-

---

*) Акты, VII, եր. 767—770։

լով Վանի վիճակի քրդերն ևս ոտքի ելան և պակասը լրացրին։

Էլ զարմանալի չմնաց, որ Նրանք չաեիին հայերի դիմին։

Այդ միջոցին ռուսաց մի փոքրիկ գունդ տակաւին Խոյ և Սալմաստ պարսից գաւառումն էր գտնուում, որպէս զի պարսկահայ գաղթականների վերջին խումբին մինչև ռուսաց սահմանն ուղեկցէ։

Ռուս զօրքին Պարսկաստանում տեսնելով Վանի քրդերը այնպէս կարծեցին թէ՝ Խոյ և Սալմաստն ևս ռուսաց սեպհականութիւն են դարձել։ Ուստի և կատաղաբար հանցան յիշեալ գաւառները եւ սկսեցին տեղական, գաղթելու պատրաստող հայ ժողովրդին յկել, սպանել, կողոպտել։ Իսկ ոմանքը, իրանց սակաւութիւնից ստիպւած թերևս, լոկ հանդիսատես էին լինում այդ տեսարաններին և միմիայն իրանց ապահովութեան մասին հոգում։

ԾԱ.

Բայազէտի ՆաՀանումից յետոյ Զաուչավազդէի կարգադրութեամբ հայկական հեծելագունդը գընաց և առանց արիւնահեղութեան մտաւ Դիադին *), ուր սիրալիր ընդունելութիւն գտաւ տեղացի հայերի կողմից։

*) Բայազէտի փաշայութեան մէկ գաւառը։ Մնացեալներն են Խամուր և Ալաշկերտ։

Գալով Խամուրի հայերին՝ նրանք եկան Բայազէտ և իրենց բերդի բանալին ռուս զորապետին յանձնեցին։

Բայազէտի փաշայութեան առնելուց յետոյ՝ Արզրումի սարասքէրը (հրամանատարը) զօրք ուղարկեց Ալաշկերտ ռուսաց առաջխաղացման առաջն առնելու, նախապէս կարգադրելով որ այդ գաւառի բոլոր հայերին քշեն հեռացնեն Անատոլիայի խորքերը։

Բայց մինչև այդ՝ իշխան Զաւշավաղէն, հայերի օգնութեամբ, Թոփրաք-գալէ նշանաւոր բերդին տիրեց։ Դրանից կառաղած՝ տաճիկները մի հայկական մեծ գիւղ հրոյ ճարակ տին և բնակիչներին իրանց ապրանքի հետ քշեցին տարան Գարափափախ կոչած թուրքերը։

Թոները դրանց ետևից ընկան հայ հեծելազօրքի հետ միասին, բայց քիչ յետոյ՝ յետ դարձան, որովհետև Գարափափախների մեծաւորը դրականօրէն յայտարարեց, որ եթէ հայ հեծելազօրքը շարունակէ իր հետապնդումը, ինքը տարագրած այդ հայերին բոլորին էլ սրի կանկացնէ։

Մասամբ այդ, բայց առաւելապէս պաշար չունենալու պատճառաւ՝ Զաւշավաղդէն դադարեցրեց յարձակումը։ Եւ իսկոյն մի վաշտ զօրք ուղարկեց Մուշի կողմերը, որտեղ Սօֆիքեանդ կոչած գիւղից 1000 բեռ հաց բերին և 200 տուն էլ Մուշի հայերին գաղթեցրին։

Մի այլ վաշտ որ նոյնպէս պաշարի համար

Մանազկերտի կողմերն էր գնացել, հայաբնակ Բատնոս գիւղացիների օգնութեամբ դարձեալ մի խոշոր բեռ ցորեն ճարեց և 160 տուն Բատնոսի հայերին աւարեց և Բայազէտի կողմերը բերեց։

ԾԲ.

Վրայ հասած ձմրանից ստիպւած ոսները պատերազմական գործողութիւնները դադարեցրին։ Պասկեիչը անցաւ գնաց Թիֆլիզ՝ բանակի ընդհանուր հրամանատարութիւնը զեներալ Բանդրատին յանձնելով։

Բայց դեռ ձմեռը չանցած՝ տաճիկներն ու աջարացիները ահագին քանակութեամբ Աջարայի լեռներից իջնելով թափեցան Ախալցխայի շուրջը գտնւած հայ գիւղերի վրայ, սկսեցին կողոպտել և աւերել։

Շրջանի կառավարիչ իշխ. Վասիլ Բէհբուտովը՝ սիրտ չարաւ գիւղացիներին օգնութեան հասնել։ Բացի դրանից նա հարկ չհամարեց քաղաքը ևս պահպանելու մասին հոգալ։ Այլ քաղաքի կնանիքներին և երեխաներին բերդը հաւաքելով տղամարդկանց պարտաւորցրեց, որ իրանց տներն իրանք պահպանեն քաղաքում։

Գիւղերն աւերելուց յետոյ՝ աջարացի և տաճիկ՝ 20,000 հոգուց բաղկացած՝ ամբոխը Ահմէտ փաշայի առաջնորդութեամբ Ախալցխայի

վրայ թափեցաւ և անգին աւերածութիւն գործեց։

Քաղաքի տաճիկ ազգաբնակութիւնը թշնամու կողմն անցաւ և նրա հետ, ձեռքի տակ, սկսեց կոտորել քրիստոնեաներին։

Այդ արտաքիրքները շարունակ 12 օր տևեցին, որի ժամանակ բերդից ձգված 8698 թընդանոթի ռումբերն, 1354 ձեռքի ռումբերն և 72,880 հրացանի գնդակներն՝ թշնամուց աւելի՝ տեղոյն քրիստոնեաներին էին կոտորում և նրանց շարժական ու անշարժ կայքերն փչացնում, այրում։ Այնպէս որ առաջւայ չէն Ախալցրխան,—համանուն փաշայութեան կենդրոնը,—այժմ աւերակների մի մեծ կոյտ էր ներկայացնում։

Անմէջ փաշան շատ աշխատեց բերդին տիրելու՝ ջրի ճանապարհը գոցելու և 3 ականներով բերդը յօդս ցնդեցնելու,—սակայն նրա բոլոր ձեռնարկութիւններն ապարդիւն անցան, վասն զի քրիստոնեաները քաղաքից միշտ բերդապահին նախօրօք իրազէկ էին կացուցանում փաշայի ձեռնարկութիւնների մասին։

Այսպիսով քաղաքի քրիստոնեաները, այս կամ այն կերպով, օգնում էին բերդապահին, բայց նա ոչ մի օգնութիւն չէր հասցնում նրանց։ Բերդում վճռել էին ոչ մի դէպքում բերդից քաղաք զօրք չիջեցնել։

Այդ էր ահա պատճառը՝ որ Ախալցխայի 25,000 ազգաբնակութիւնից՝ կենդանի մնացին

միմիայն 750 քրիստոնեայ ընտանիքը,—Նրանք, որոնք բերդումն էին պատսպարված նախօրօր։

Վերջապէս մարտի 4-ին Վրաստանից մի փոքրիկ գունդ Ախալցխային օգնութեան հասաւ այն ժամանակ, երբ Ահմէտ փաշան իր հրոսակախմբովը արդէն թողել հեռացել էր քաղաքից։

ԾԳ.

Ահմէտ փաշայի հեռանալովը՝ Ախալցխայի թշւառութեանը վերջ չտրւեցաւ։ Ընդհակառակը այնուհետեւ երեան եկաւ մի այլ և ահռելի թշնամի։ Դա ժանդախան էր—չումման, որ դեռ նախընթաց տարւանից սկսեալ իր առատ հունձերն էր անում Բայազէտում և Արդահանում։

Զինուորական իշխանութեան բոլոր աշխատանքը ուղղված էր զօրքի պահպանութեան վրայ, իսկ ազգաբնակութիւնը թողնված էր սեփական կամքին։ Ամենուրեք սահմանված կարանտինաներն՝ անկարող էին ախտի տարածման առաջն առնելու։

Երկրի կառավարիչ իշխան Բէհբութովի բացարձակ անընդունակութիւնը ազէտի առաջն առնելու, ակնյայտնի էր։

Իր բոլոր ուշադրութիւնը զօրքի վրայ դարձնելով և ազէտ ժողովրդին իր կամքին թողնելով, —Բէհբութովը, վերջ ի վերջոյ, կարող էր զօրքի վարակմանն ևս առիթ դառնալ։

Ուստի նրան փոխեցին և նոր կառավարիչ

նշանակեցին գենեռալ-մայոր Բաոն Օստէն-Սաքէն։

Սա Ախալցխայ ժամանեց յուլիսի 23-ին և անմիջապէս ձեռնարկեց ժանտախտի դէմ կռուելու։ Եւ ի պատիւ նրան, շատ լաւ կուեց։

Օստէն-Սաքէնի գործադրած խելացի միջոցներն՝ մանրամասնաբար նկարագրուած են նրա այն յայտարարութիւնում, որ նա ուղարկել է Պասկեվիչին 1829 թ. յուլիսի 30-ին № 383 *)։

Դժբախտաբար մինչև Օստէն-Սաքէնի գալն Ախալցխայում կենդանի մնացած 750 ընտանիքից՝ արդէն 450-ը զոհ էին գնացել չումային։ Նոր կառավարիչը կարողացաւ կենդանի մնացած 300 ընտանիքի կեանքը միմիայն փրկել։

ԾԴ.

Մինչդեռ Օստէն-Սաքէնի շնորհիւ Ախալցխայի և նրա շրջակայքի քրիստոնեաները սկսեցին փոքր ինչ ազատ շունչ քաշել և ահա հայ ժողովրդի գլխին նոր փոթորիկ բարձրացաւ Բայազէտի և Մուշի կողմերում։

Այս կողմերի քրդերի գլխաւորներին Պասկեվիչը 10,000 ոսկով կաշառել էր նախօրօք, որպէս զի նրանք իրանց տեղերումը հանգիստ մընան։ Եւ նրանք մնացել էին։ Սակայն երբ տաճիկ կառավարութեան ականջին հասաւ իր հը-

---

*) Акты, VII. եր. 813, № 807։

պատակ քրդերի կաշառելը՝ 2 միլիոն դուրուշ էլ իր կողմից նրանց առաջարկեց։ Ստանալով այդ գումարը քիւրդ ցեղապետները՝ իրանց հրոսակախմբերով՝ Խամու գաւառի հայ գիւղերի վրայ թափւելով՝ սկսեցին անխնայօրէն ասպատակել և կողոպտել։

Մի այդպիսի ելուզակային ասպատակութիւն էլ սկսւեցաւ միաժամանակ՝ նաև Արդահանի շրջակայ հայ գիւղերում։

Այդ ասպատակութիւնները Կարսի ամբողջ փաշայութիւնում այսպիսի սարսափ ձգեցին բոլոր հայկական գիւղերի վրայ, որ ոչ ոք չէր համարձակւում իր գլուխը տանից դուրս բերելու։

Այդ պատճառաւ էլ գարնանային վարուցանները դաշտերում չէր կատարւում։

Եւ որովհետև 1829 թ. գարունքը շատ անձրևային էր և ցուրտ, ուստի և ռուսները չէին կարողանում պատերազմական գործողութիւնների ձեռնարկելու, մինչդեռ տաճիկները՝ իրանց հպատակ այլևայլ վայրենի ցեղերի միջոցաւ՝ միանգամայն ոտատակ և քարուքանդ արին հայկական բոլոր գիւղերը իրանց բնակիչներով։

Վերջապէս մայիսի 19-ին Պասկևիչը հասաւ Արդահան, այնտեղից անցաւ Կարս և յունիսի 20-ին Սօղանլուի լեռներում տաճիկ բանակը ջարդելով որ իր քայլերը դէպի Արզրում ուղղեց՝ Բասենի վրայով, ճանապարհին եղած հայ գիւ-

դերը թալանելով և գիւղացիներին Արզրում քըշելով։

Ծե.

Բասենի վիճակի հայ գիւղացիները եկեղեցական թափօրներով դիմաւորելով ռուսերին՝ նրանց ընծայ էին բերում իրանց կենդանիներից և պաշարներից։

Շատ ժամանակ չանցած Պասկևիչը մտաւ Հասան-Ղալա, որի տաճիկ բնակիչների փախըստեան պատճառաւ՝ մնացած 80 տուն հայերն եկեղեցական թափօրով դիմաւորեցին ռուսերին։

Պասկևիչը կանգ առաւ Արզրումի հանդէպ։

Նրա հետն էին այդ ժամանակ՝ կաթողիկոս-թիւնից դարձած Սէրոբէ հայ վարդապետը և մի յայտնի ու ազդեցիկ տաճիկ Մամիշ աղա անունով։

Վերջինիս միջոցաւ Պասկևիչը յաջողեցաւ՝ Արզրումի նշանաւոր, ազդեցիկ տաճիկներին կաշառելու։ Իսկ Սերոբէ վարդապետը Կարնոյ վիճակի առաջնորդ Կարապետ եպիսկոպոսի հետ էր բանակցում թագուն։

Վերջինիս անունով Պասկևիչը հետը բերում էր Եփրեմ կաթողիկոսի կոնդակը, որով նա պատւիրում էր առաջնորդին՝ օգնելու ռուս բանակին, երբ նա Արզրումի վիճակն հասնի։

Եփրեմի այդ կոնդակը տաճիկ ոստիկանութիւնը բռնեց։ Կարապետ եպիսկոպոսը զինւորական ատեանի առաջ տարուեցաւ բացատրու-

թիւն տալու։ Թէպէտ նրան արդարացրին և բաց թողին, սակայն տաճիկ խուժանը և լաչերը չափազանց գրգռուեցան ինչպէս եպիսկոպոսի, նոյնպէս և հայ ժողովրդի դէմ, որոնք ստիպւած եղան թագչել ստորերկրեայ վայրերում և գետնափոր նկուղներում տաճիկ բարեկամ և բարի մարդկանց տներում։

Ինքը առաջնորդը թագ էր կացել Մանէօղլեան ազգանունով մի հայի գէճ ու խոնաւ նրկուղում։

Հէնց այդ նկուղիցն էր, որ Կարապետ եպիսկոպոսը մի գիր գրեց Պասկեիչին և մաքսատան բեռնակերներից Ֆարման անունով մի հայի տրեխներում հասցրեց ռուսաց բանակը։

Նամակում եպիսկոպոսը ցոյց էր տալիս թէ որ ճանապարհից և որ կողմից պէտք էր Արզրումի վրայ յարձակուել և յատկապէս որ դիրքի վրայ։

Սակայն Մամիշ աղայի միջոցաւ Արզրումում ցրւած ռուսական ոսկիների շնորհիւ, պատերազմական գործողութիւններ տեղի չունեցան։

Այլ ռուսական բանակը՝ Արզրումից 4 վերստ հեռու եղած Ս. Նշան (Թօփ դաղ) բլրի վրայ կանգ առնելով Արզրումի ազդեցիկ տաճիկների ձեռքից ստացաւ Անատոլիայի այդ մայրաքաղաքի դռների բանալիներն։

Միքանի բոպէից յետոյ՝ Արզրումի ներքնաբերդի վրայ՝ մահեկի փոխարէն քրիստոնէական դրօշակն սկսաւ ծածանուել։

Այնուհետև Պասկևիչը ձեռնամուխ եղաւ մի շարք տոնախմբութիւնների և զօրահանդէսների, որոց ժամանակ հայերը միշտ ներկայ և մասնակից էին լինում։

ԾԶ.

Յոյս չունենալով որ Արզրումին այդքան հեշտութեամբ կը տիրէ՝ Պասկևիչը այդ քաղաքի վրայ արշաւելիս՝ զօրքի մի մասը իր ձեռքի տակն էր կենդրոնացրել։ Իսկ մինչև այդ ժամանակ տիրած վայրերի պահպանութեան համար մի մի վաշտ զօրք էր թողել։

Բացի ռասկան այդ վաշտերից՝ Բայազէտում կազմւած էր նաև մի հայկական գունդ։ Դրանց հրամանատարը՝ գեներալ Պապովն էր։

Արզրումում տեղի ունեցող հանդէսներից մի քանի օր առաջ էր, որ տաճկական մի մեծ բանակ, 12 թնդանօթներով, Վանի կողմից յանկարծ յարձակւեցաւ Թօփ-Գալէի հայկական թաղի վրայ, աւերեց, քարուքանդ արաւ, բնակիչների մի մասին կոտորեց, մնացածներին՝ տաւարների և խաշների հետ՝ գերի վերցնելով՝ Բայազէտի վրայ ուղղեցաւ։

Թօփրագ-Գալէի բերդի ռուս պահապան զօրքը, սակաւութեան պատճառաւ, ոչ մի օգնութիւն չկարողացաւ հասցնել հայերին, այլ լոկ հանդիստատես էր բերդիցը քաղաքի հայերի և նրանց ապրանքի ոչնչացմանն ու գրաւման տա-

ճիկ զօրքի ձեռքով, հրամանատարութեամբ Վանայ փաշային *)։

Բայազէտի ռուս պահակ զօրքի թիւը՝ 1500 էր, իսկ վանայ փաշայի զօրքի թիւը՝ 15,000 որով պաշարուեցաւ քաղաքը։

Սկսուեցաւ սարսափելի արիւնահեղութիւն և կոտորած։

Թէպէտ և ռուսերը քաջութեամբ էին կռուում, սակայն թշնամու բազմութեանը չկարողացան դէմ դնել։ Իրիգնապահին տաճիկները տիրեցին քաղաքին։

Կենդանի մնացած սակաւաթիւ ռուս զինուորներն, նրանց հետ և հայկական գունդը, բերդը քաշուեցաւ։

Այդ տեսնելով քաղաքի տաճիկ ազգաբնակութիւնը տաճիկ զինուորների կողմն անցաւ և նրա հետ միասին սկսեցին կոտորել տեղական հայերին։

Վերջապէս զիշերը վրայ հասնելով կոտորածին վերջ տուեցաւ։ Թէպէտ և միևնոյն ժամանակ, ողջ զիշերը ճիչ ու աղաղակների ձայներն անպակաս էին հայկական թաղում, ուր տաճիկ քաղաքացիները ցրուած իրանց ծանօթ հայերի տներում թալանում, պղծում, սպանանում էին անխտիր ամեն տեսած, պատահած ու բռնած հայ մարդու։

---

*) Акты, VII, եր. 806—807։

Ծէ.

Հայ ազգաբնակութեան հետ տեղի ունեցած այս գիշերային եղեռնական դրաման այլևս չը-կարողացաւ տանել Բայազէտի հայկական գունդը։

Ուստի հէնց որ լուսացաւ նա պահանջեց և թոյլտուութիւն ստացաւ յարձակողական դիրք բռնելով՝ թշնամուն դուրս քշել քաղաքից։

Ցիշելով այն ազէսները, որ նախընթաց գիշերը իրանց գերդաստանների հացրին թշնամու կողմն անցած իրանց տաճիկ դրացիները, հայկական գնդի ամեն մի զինուորը մի-մի առիւծ էր դարձել և տաճիկների տների վրայ յարձակւելով՝ փոխադարձաբար կոտորում էր ամեն մի տեսած, պատահած ու բռնած տաճկի։

«Հազարից աւելի դիակները,—գրում է ռուս ականատես պատմիչը,—թափած փողոցներում վկայում էին թէ որպիսի կատաղութեամբ և չարաչար պատժեցին հայերը՝ իրանց դաւաճանած տաճիկ դրացիներին։ Հայկական գնդի այդ կրուից յետոյ տաճիկ զօրքը թողնելով քաղաքը՝ խոյս տուեց և գնաց կանգնեցաւ լեռների գլխին, այնտեղերից ամբողջ քաղաքը ռմբակոծելու դիտաւորութեամբ։

Բարեբաղդաբար տաճիկների այդ դիտաւորութիւնը գլուխ չեկաւ։

Փաշան հրաման ստացաւ անմիջապէս յետ դառնալ դէպի Վան և նրա պաշտպանութեան

մասին կարգադրել։ Որովհետև Արզրումի անկումամբ՝ Պասկեվիչը կարող էր այն կողմ շարժել իր բանակը։

ԾԸ.

Բայազէտի գլխին եկած փորձանքը Պասկեվիչին հաղորդելով գենեռալ Պապովը հաստատում էր, որ բոլոր չարիքները պատճառողը քրդերն էին և յատկապէս նրանց ցեղապետ Սուլէյման աղան, որին Պասկեվիչը ոսկիով գրաված ունէր իբրև թէ։

«Գալով հայերին,—շարունակում է Պապովը,—պէտք է յայտնեմ, որ նրանք շատ օրինակելի են և հոգով նուիրված ռուսերին և հնազանդ իշխանութեանը»։

Պասկեվիչին շատ անհաճոյ թուաց Պապովի նկատողութիւնը քիւրդ ցեղապետի նկատմամբ, ուստի և հետևեալը գրեց Պապովին։ Բոլոր Բայազէտի դատաճաններին,—տեղւոյն տաճիկներին,—բանտարկեցէք։ Սակայն քուրդ ցեղապետներին ձեռք չտաք, որ չլինի թէ գրգուին մեր դէմ նրանց հպատակ քրդերն։ Իսկ հայերի պնդնիբութեանը մի հաւատաք, վասնզի դա նրանց երկչոտեան հետևանքն է»։

Որքան որ գենեռալ Պապովը, իբրև զինուոր, գիտէր և ճանաչում էր իր, իբրև ատորագրեալի, պարտաւորութիւնը դէպի բանակի ընդհանուր հրամանատարը, այնուամենայնիւ նա, իբրև

մարդ, չկարողացաւ տանել Պասկեվիչի այն մեղադրանքը, որ նա բարդում էր հայերի վրայ ուստի և հետեւեալ տողերն ուղղեց Պասկեվիչին՝ «հայերը ամենավտանգաւոր ժամանակում այնքան անձնուիրութիւն ցոյց տուին մեզ, որ ես պարտք եմ համարում միջնորդել նրանց մասին Ձեր առաջ,—հայերը արժանի են, որ դուք լաւ կարծիք ունենաք նրանց մասին»։

Թերևս այս, չեմ ասում հայասիրութեան, այլ հշմարտասիրութեան համար էր, որ պատերազմը վերջանալուց յետոյ, Պապովը ստիպած էր հեռանալ Պասկեվիչի մօտից, Կովկասից։

ԾԹ.

Պասկեվիչը մի կողմից Բայազէտի հայերի անձնուիրութեան անկեղծութեանը չէր հաւատում, միւս կողմից Արզրումի մէջ՝ Մնուս քաղաքի հայ պատգամաւորութեանն էր ընդունում, որոնք իրանց ձեռքով իրանց բերդի բանալիները ռուս զօրքի հրամանատարին էին յանձնում։

Բանալիներն ընդունելով Պասկեվիչը մի վաշտ Մնուս ուղարկեց բերդին տիրելու։ Բայց մինչև այդ՝ Մնուսի շրջակայ քրդերը թալանեցին հայ գիւղերը, ժողովրդի մի մասին կոտորեցին, միւսներին դէպի Մուշ քշեցին։

Մնուսից ռուսներն անցան Բաբերդ, որին, հայ և յոյն ազգաբնակութեան աջակցութեամբ՝ ձեռաց տիրեցին։

Այդ օրերումն էր, որ Արզրումի տաճիկ ժողովուրդը խորհուրդ խորհեցաւ մի գիշերուայ մէջ յանկարծակի յարձակուել հայերի և ռուսերի վրայ և կոտորել։

Բարեբաղդաբար հայերը շուտ իմացան և ռուսերին զգուշացրին։

Դաւադիրների գլխաւորները 12 նշանաւոր տաճիկներ էին, որոնք Երևան ուղարկուեցան։ Դաւադիրների որոշմունքն այն էր, որ Արզրումի տաճիկ ազգաբնակութիւնը տեղւոյն հայերի և ռուսերի վրայ պիտի յարձակուէր, իսկ Մուշի և Վանի փաշաները՝ ռուսական բանակի վրայ։ Եւ թէպէտ, ինչպէս ասացի, այդ բանը գլուխ չեկաւ։ Սակայն հայերի աշալրջութիւնն էլ անպատիժ չմնաց։

Արզրումի շրջակայ հայ գիւղերը քրդական հրոսակներից լաւ կողոպտուեցան ու աւերուեցան, առանց որևէ օգնութիւն ստանալու ռուսերի կողմից։

Դեռ այդ բաւական չէ։ Պասկևիչի հրաւիրանօք՝ Արզրումի հայերից մի գունդ կազմուեցաւ, որոց վրայ պարտք դրուեցաւ քաղաքի անդորրութեան և տաճիկների գործունէութեան վրայ հսկելու։

Հայկական այդ գունդը սպիտակ դրօշակ ունէր։ Եւ մէն մի զինուոր իր ձախ կրծքի վրայ կարմիր մահուդից շինած խաչ էր կրում։

Բնական է, որ Արզրումի հայերի այդ, և դրա նման մի քանի աչք ծակող ռուսասիրու-

թիւնը տաճիկներին դիւր չէր գալիս, և նրանք շարունակ ատաՅեր էին կրճտացնում հայերի դէմ։ Սակայն վերջիններս ոչ մի ուշադրութիւն չէին դարձնում տաճիկների և նրանց հոգեբանութեան վրայ։ Որովհետև իրանք համոզած էին, որ Արզրումը այլևս ռուսերի ձեռքիցը դուրս չէ գալու։

Սակայն 1829 թ. սեպտ. 2-ին կայացած Ադրիանապոլի դաշնագիրը եկաւ սառը ջուր ածելու հայերի գլխին։ Ցաւանի է, որ այդ դաշնագրի զօրութեամբ Արզրումը յետ էր դարձելու տաճիկներին։ Եւ ռուսերը պարտաւորում էին դատարկել այդ քաղաքը։

Այդ լուրը կայծակնահար արաւ Արզրումի հայերին, մանաւորապէս և տաճկահայ ժողովրդին ընդհանրապէս։ Ահա թէ ինչու։

Կ.

Մենք տեսանք, որ տաճկահայ ժողովուրդը պատերազմի բոլոր տեղութեան միջոցում բացի այն՝ որ ռուսերին առաջնորդում էր, նրանց անցքեր ու ճանապարհներ էր ցոյց տալիս, բացի այն՝ որ ռուս բանակներին խաչ ու խաչվառով էր դիմաւորում և իրան խաչերն ու եղները նրանց առաջ մատաղ անում, բացի այն՝ որ նրան պաշար էր մատակարարում թէ իրանց և թէ օսմանեան տէրութեան ամբարներից սրանց տեղերն ու ճանապարհները ռուսերին ցոյց տա-

լով, բացի այն որ բանակների հայ կապալառուներն՝ միևնոյն ժամանակ լրտեսների պաշտօն էին կատարում յօգուտ ռուսների,—այլ նաև տաճկահայ ժողովուրդը՝ կանոնաւոր գնդերով ու խմբերով զէն ի ձեռին ռուսների հետ կուում էր օսմանցիների,—իր տիրապետողների դէմ։

Եթէ այս ամենի վրայ աւելացնենք Արզրումում տեղի ունեցած ցոյցերն նոյն իսկ տաճիկների կրօնային զգացմունքներին հասցրած վիրաւորանքներն տաք գլուխ երիտասարդների ձեռքով,—այն ժամանակ շատ հասկանալի կը լինի թէ ռուս զօրքի յետ քաշւելուց յետոյ տաճկահայ ժողովրդին ինչ էր սպասում, թէ ինչ և քանի տեսակ վրէժխնդրութիւնների զոհ պիտի դնար այդ ժողովուրդը,—գէթ նրա մեծ մասը։ Եւ ահա թէ ինչու տաճկահայ ժողովրդի սրտի և հոգու մէջ առաջ եկաւ մի անյայտելի ցանկութիւն, մղում գաղթելու որքան կարելի է շուտ։

Ռուսական քաղաքականութեան ուղածն էլ հէնց այդ էր։

Պասկեիչը տակաւին 1828 թւականին գրում էր մինիստրին, որ Ախալքալաքի կողմերում շատ պատաւական հողեր կան որոնք թէ ըստ կլիմայի և թէ ըստ իրանց միւս յատկութիւնների շատ յարմար են հայ գաղթականներ բերելու և բնակեցնելու։

Հէնց այս նպատակաւն էլ էր, որ Ադրիանապոլի դաշնագրի մէջ յատուկ յօդած էր մտցրած, որով երկու տէրութիւնների հպատակնե-

ին իրաւունք էր տրւում, յընթացս մէկ ու կէս տարւայ, գաղթելու։

Նախ քան Ադրիանապօլի հաշտութեան կընքելին տաճկահայերից շատերը, ապագայ չարիքները նախատեսնելով, ուզում էին Ռուսաստան գաղթել, սակայն Պասկեվիչը ամէն կերպով խանգարում և խարանում էր, որովհետև քրիստոնեայ տարրի գաղթմամբ ռուս զօրքերը այնուհետև ոչ միայն զրկւում էին նրանց մատուցած ծառայութիւններից, այլ նաև շրջապատւած կը լինէին թշնամի տաճիկ ազգաբնակութեամբ և եթ։

Իսկ այժմ, երբ յարմար ժամանակն եկաւ, Պասկեվիչը ինքը առաջինն եղաւ գաղթականութեան հարցը բարձրացնողն ու առաջ մղողը ի հարկէ ոչ եթէ յանուն քաղաքականութեան, այլ իբրև թէ յանուն կարեկցութեան և մարդասիրութեան։ Ահա այն գրութիւնը, որով Պասկեվիչը 1829 թւականի հոկտեմբերի 10-ին դիմեց կայսրին։

ԿԱ.

«Այն խաղաղութիւնը, որ Ձ. Կ. մեծութիւնը բարեհաճել էք շնորհել բարձրագոյն դռանը՝ Ձեր Օգոստափառ անունը օրհնութիւն բերեց այսքան միլիոնաւոր մարդկանց կողմից։ Բայց այստեղ, Ասիայում, ընդհանուր ուրախութեան մէջ այդ բերկրութեան լուրը իրաւացի տրտմութեան մէջ ձգեց ժողովրդի այն մասը, որ արժանի է

մեր կարեկցութեանը թէ շարունակ կրած տառապանքներով ու ռուսական զէնքի յաջողութեանը ցոյց տուած համակրանքով և թէ այն թշուառ ապագայով, որ նրան սպասում է, եթէ Զ. Կ. Մ. հզօր բազկի հովանաւորութեան ներքոյ նա չի գտնիլ ապահով ապաստան ընդդէմ այն հալածանքների, որ նրան սպասում են։ Այն հեռաւոր երկիրներում, ուր քրիստոնէութիւնը լընթացս այնքան դարերի ճնշած է անօրէն լծի տակ, Զ. Կ. Մ. զօրքը վախ չունէր որևէ թշնամական ցոյցից հայ և յոյն ազգաբնակութեան կողմից։ Եւ մինչդեռ այս պատերազմի ժամանակ ենթադրելու էր մեր կրօնակիցների մէջ լոկ անտարբեր զգացմունք շնորհիւ մեր զօրքի օրինակելի վարքին, վեհանձնութեանը և քաղցր վարուեցողութեանը, մենք այդ կրօնակիցներին գտանք մեզ զինակից և եռանդուն աջակից, և այնուհետև որքան որ տարածւում է Ձերդ մեծութեան փառքը, այնքան աւելի շատանում էր այն գերդաստանների թիւը, որոց թէ անձնական և թէ կալուածական ապահովութիւնն այդ պատճառաւ անա անյուսալի էր դառնում»։

ԿԲ.

«Բայազէտում,—շարունակում է Պասկեվիչը, երկու հազար հայեր մեր զօրքերի հետ միասին պատերազմում էին։ Արզրումում քրիստոնեայ ազգաբնակութեան մեծագոյն մասը իր հովուա-

պետի (Կարապետ արքեպիսկոպոսի) առաջնորդութեամբ դիմաւորեց մեր զօրքին։ Կարսում հայերից կազմւած մի վաշտ հետեակ և մինչև 800 հայ հեծելազունդ մեր սահմաններն էին պաշտպանում։

«Այն գերդաստանների թիւը, որոց անխուսափելի վտանգ է սպառնում, մօտ 10,000 է հասնում։ Բարեհաճեցէք, ով ամենաողորմած Թագաւոր, Ձեր կարեկցական ուշադրութիւնը դարձնելու այս դժբաղդ զոհերի վրայ, և մի թողնէք, որ օսմանեան կամայականութիւնը վրէժխնդիր լինի նրանց՝ Ռուսիային ցոյց տւած նրանց համակրութեան համար։ Այս պատճառաւ վստահանում եմ խնդրել Ձ. Կ. Մ. բարեհաճութիւնը, որպէս զի ինձ իրաւունք տրւի այդ գերդաստաններին տանել բնակեցնել Վրաստանում և հայոց նահանգում,—Երևանի կողմերում։ Իսկ եթէ այդ երկիրները չբաւականացան,—Կովկասեան աշխարհում (Կովկասեան լեռների հիւսային կողմերում)։

«Թէպէտ և այս ժողովրդի սկզբնական բնակութիւնը հաստատելու համար՝ բաւականաչափ ծախք է հարկաւոր, բայց անկասկած յետոյ այդ ծախքը առատապէս կը փոխարինուի այն օգուտներով, որ սպասւում է այս աշխատասէր և գործունեայ հասարակութիւնից»։

«Ըստ իմ կարծեաց՝ գաղթողներին իբրև օժանդակութիւն բաւական կը լինի, միջին հաշւով, 25 ռուբլի արծաթ ամեն մի գերդաստա-

նին, որ կանէ 250 հազար ռուբլի արծաթ, կամ մէկ միլիոն թղթադրամ ամբողջ գաղթականութեան համար։

Եթէ ներկայ առաջարկութիւնս կարժանանայ Զ. Կ. Մ. Բարձրագոյն հաստատութեան, — յայն դէպս բարեհաճեցէք իրաւունք տալ ինձ այս բարեգործական օժանդակութեան համար գործ դնել այն 100 հազար ոսկին, որ ինձ տրուած էր քրդերին մեր կողմը գրաւելու համար, և որից ընդամենը ծախս է եղել 10 հազար ոսկի *)»։

ԿԳ.

Այս գրութեանը ի պատասխան կոմս Զերնիշովը նոյեմբերի 10-ին գրեց Պասկևիչին, որ Թագաւոր Կայսրը նրա առաջարկները ընդունում և հաստատում է։

«Միայն, — աւելացնում է մինիստրը, — Նորին Մեծութիւնը Ձեր զեկուցագրից նկատելով որ հայերից շատերը մասնակցել են պատերազմական գործողութիւններին և իրանց քաջութեամբ ապացուցել են ինչպէս իրանց ջերմեռանդութիւնը, նոյնպէս և ընդունակութիւնը զինուորական ծառայութեան մէջ, — օգտաւէտ է համարում, որ այդ հայերի մի մասը բնակւի Ախալցխայում և նրա շրջակայքում, ուր նրանցից

*) Акты, VII, եր. 830, № 818։

մի վաշտ կազմի մեր նոր սահմանները պաշտպանելու համար» *)։

Կայսեր թույլատրությունը ստանալով Պասկևիչը դեկտեմբերի 3-ին Վրաստանի նահանգապետին հրամանագրեց, որ իր նախագահությամբ Թիֆլիզում մի յանձնաժողով կազմի յանձնելով նրան գաղթականներին խնամելու և տեղաւորելու հոգսը, համեմատ այն ընդհանուր հրահանգին, որ Պասկևիչը իր կողմից ուղարկեց նահանգապետին **)։

Այս հրահանգը բովանդակությամբ նոյն է, ինչ որ մի տարի առաջ Պասկևիչը տուած էր պարսկահայ գաղթականների համար։ Այստեղ էլ տուած է, որ ժողովրդին —պէտք է գաղթեցնել խումբ խումբ, բնակեցնել արքունի հողերի վրայ, լեռնային տեղերի գաղթականներին բնակեցնել բարձր տեղերում, դաշտեցիներին դաշտերում, որ գաղթականները վեց տարի արքունի հարկ վճարելուց ազատում են և երեք տարի էլ՝ զօր ու բեգեարից։

Գալով գաղթման պատճառին՝ Պասկևիչը այսպէս բացատրեց նահանգապետին գրած առաջադրությունում՝ «հաշտության լուր առնելով Տաճկաստանի հայերը ցանկանում են գաղթել մեր երկիրները և նրանցից շատերը այդ իրաւունքը խնդրում են որպէս առանձին ողոր-

*) Акты, VII. եր. 831, № 819։

**) Акты, VII, եր. 831, № 820։

ժութիւն ռուսական տէրութիւնից առանց որևէ օժանդակութիւն պահանջելու»։

«Հայերի անսասման անձնիրութիւնը,—շարունակում է Պասկեիչը,—որոնք պատերազմի ժամանակ, բազմաթիւ փորձերով, ցոյց տուին իրանց ջերմեռանդութիւնը դէպի ռուսաց զէնքի յաջողութիւնը, արժանի է որ նրանց վիճակին կարեկից լինենք և պաշտպանենք ապագայում նրանց սպառնացող մահմեդականների հալածանքներից և վրէժխնդրութիւնից»։

ԿԴ.

Վերևում յիշեցինք, որ գաղթեցնելու թոյլտուութիւն տուեցաւ կայսեր կողմից՝ նոյեմբերի 10-ին։ Պասկեիչը թուղթը ստացաւ նոյեմբերի վերջերին։ Բայց նախ քան թոյլտուութեան ստացուիլն ժողովուրդն սկսել էր շարժիլ և նրանց սայլերը, ձմռան բուք ու բորանին Բասէնի ճանապարհով դէպի Կարս էր ընթանում։

Թէ Կարապետ եպիսկոպոսը և թէ ազդեցիկ հայերը շատ աշխատեցան յետաձգել գաղթականութիւնը մինչև գարունք, որպէս զի ճանապարհները բացուին և հնար ու միջոց լինի կալուածները ծախելու ինչպէս որ դաշնագրով նախատեսուած էր,—և ամենանախրաժեշտ կարասին ու պիտանացու իրեղէնքը հեռները վերցնել,—սակայն ժողովրդի մի մասը լսել անգամ չուզեց այդ խորհուրդը և անմիջապէս ճամբայ ելաւ։

Դրանք Կարսի և Բայազէտի հայերն էին գլխաւորապէս։

Սակայն գաղթականների մեծ հոսանք՝ պիտի սկսէր առաջիկայ գարնանը (1830 թ.)։ Գաղթողների թիւն Պասկեվիչը սկզբում 8000 գերդաստան էր հաշուում, սակայն վերջերում այդ թիւը հասաւ մինչև 14,000 գերդաստանի ըստ այսմ։

1) Արզրումի փաշայութիւնից		7298 գ.
2) Արդահանի	»	67 գ.
3) Կարսի	»	2467 գ.
4) Բայազէտի	»	4216 գ.
	Ընդամենը՝	14,044 գ.

Ամեն մի գերդաստան միջին թւով 6 հոգի հաշուելով կանի 90,000 հոգի։

Ամբողջ գաղթականութիւնը բաժանւած էր երեք մեծ խմբերի—կարնեցիք, կարսեցիք և բայազէտցիք։

Նախ քան գաղթելը՝ ճիշտ է Սուլթան Մահմուդը հրովարտակ արձակեց յատկապէս հայերի համար, որ չգաղթեն։ Պոլսոյ պատրիարքարանն ևս մի յատուկ անձն,—Բարդուղիմէոս եպիսկոպոսը,—էր ուղարկել ժողովրդին յետ կանչելու իր մտադրութիւնից, սակայն այդ ամենը ոչ մի հետևանք չունեցաւ գրեթէ։

ԿԵ.

Գաղթականների ստւարութիւնը, նրանց խնամելու անհրաժեշտութիւնը ի նկատի առնելով Պասկեիչը 1831 թ. մարտի 26-ին նորից կայսեր դիմեց գրելով՝ «սկզբում սպասում էինք միմիայն 8000 գերդաստան, բայց երբոր մեր զօրքերը, դաշնագրութեան համար, սկսեցին դուրս գալ մեր նուաճած երկիրներից, այն ժամանակ յոյները և գրեթէ բոլոր հայերը զարմանալի զոհողութեամբ թողնելով իրանց տներ և կալուածները, թողնելով ամեն բան, ինչ որ միայն կապում էր նրանց իրանց ծննդավայրի հետ, եկան իրանց գերդաստաններով մեր զօրքերի յետևից։ Գրեթէ բոլոր առևտրականները և արհեստաւորները, ինչպէս նաև գիւղացիների մեծ մասը թողին Արզրումի և Կարսի փաշայութիւնները նրանց հետ եկան և երկու արքեպիսկոպոսներ, որոնք մեծ ազդեցութիւն ունին ժողովրդի վրայ։ Բայազէտը բոլորովին ամայացաւ»։

Ամենանշանաւոր արտագաղթը կատարւեցաւ յուլիս ամսին։ Ուստի և ժողովուրդը չկարողացաւ իր հունձը ժողովել, իսկ այստեղ էլ ցանքի ժամանակը բաց թողին, և տէրութիւնը չկամենալով նրանց սովամահ անել, պարտաւոր է նրանց կերակրել մի ամբողջ տարի մինչև եկող հունձը, որի համար՝ տեղիս հացի պակասութեան պատճառաւ՝ նշանաւոր գումար է պէտք»։ Հեռաւոր ճանապարհների դժւարութիւնները կը-

բելով, զոհելով այնտեղ իրանց ունեցածը, շատերն էլ քանիցս քրդերից թալանելով,—այս բոլոր գաղթականներին յետին թշուառութեան է մատնել, և նրանց միակ յոյսը, մնացել է ռուսաց ողորմութեանը վրայ»։

Ապա Պասկևիչը յայտնելով որ սկզբում նշանակած գումարը արդէն ծախսել է, դարձեալ 380,000 ռուբլի է խնդրում փոխարինաբար տալու գաղթականներին, որոնք «աշխատասէր են և ընդունակ իրանց ապրուստը հայհայթելու։ Եւ անտարակոյս ժամանակին՝ աւելորդով կը փոխարինեն այժմ իրանց ստացածը։

«Անուշադիր թողնել գաղթականների կարիքը, իմ կարծիքով անկարելի է, ապա թէ ոչ իզուր կանցնին մինչև այժմ մեր արած ծախքերն և հոգատարութիւնը նրանց վրայ»։

«Ես կարևոր եմ համարում աւելացնել գաղթականների վրայ մեր հոգատարութիւնը, որպէս զի վառ պահենք ռուսական տէրութեան այն շահաւէտ ազդեցութիւնը որ ունեցանք ասիական Տաճկաստանում և որի շնորհիւ մի ամբողջ ժողովուրդ գաղթեց մեր երկիրը» *)։

ԿԶ.

Պասկևիչի այս միջնորդութիւնն ևս յարգուեցաւ։ Եւ շնորհիւ նախընթաց և այս վերջին դրա-

*) Акты, VII, եր. 845, № 829։

մական օժանդակութեանը՝ տաճկահայ գաղթականները համեմատաբար քիչ ենթարկուեցան այն աղէտներին ու տառապանքներին, որոնց ենթարկուած էին երկու տարի առաջ պարսկահայ գաղթականները։

Ի վերայ այսր ամենայնի տաճկահայ գաղթականներն ևս զերծ չմնացին այն նեղութիւններից ու տանջանքներից, որոնք նակայն յատուկ են և անխուսափելի այսպիսի շտապ և մեծ գաղթումների ժամանակ առհասարակ։

Այդ նեղութիւնների մէջ ամենից աւելի ցաւալին այն էր, որի մէջ գաղթականներն ընկան իրենց բնակութեան տեղի նկատմամբ։

Պակեսիչի հրահանգով, ինչպէս իր տեղում ասել ենք, գաղթականներին բնակութեան տեղ պէտք է արքունի հողերն յատկացնէին։ Սակայն ոչ ոք չգիտէր թէ արդեօք որոնք և որքան էին այդպիսի հողերը։

Ռուսաց տեղական իշխանաւորները արքունական էին համարել և ընդունել այն ամեն տաճիկների և լեռնականների հողերը, որոնք կամ ինքնաբերաբար, կամ Օսմանեան Կառավարութեան գաղտնի դրդմամբ՝ ռուսերի ձեռքն անցած երկիրներից գաղթեցին Տաճկահայաստան՝ հայերի բաց թողած հողերն զբաւելու։

Այդ ժամանակուան գաղթողների թիւը, ճիշտ է, տաճկահայ գաղթականների թուին չէր հասնում, — այնուամենայնիւ նրանց թողած հողերը բաւականութիւն կուտային տաճկահայ նորեկ

գաղթականներին, եթէ որ արդարև այդ հողերը արքունի դարձած լինէին, ինչպէս որ հաւատացած էին ռուսաց տեղական իշխանաւորները։

Մինչդեռ բանից դուրս եկաւ, որ մահմեդականներից ոմանք՝ դեռ պատերազմի ժամանակ՝ շապել և իրենց հողերը ծախել են մասնաւոր, տեղացի անհատների վրայ։ Շատերն էլ նախապէս գիտենալով, որ եթէ իրենք պատերազմից յետոյ էլ գաղթել կամենան,—հաշտութեան դաշնագրի տրամադրութեամբ,—որոշեալ ժամանակում իրաւունք կունենան իրենց կալուածներն վաճառելու,—երկայնմտութեամբ համբերել էին պատերազմի վերջանալուն և հաշտութիւնը կնքելուն։

Եւ երբ այդ տեղի ունեցաւ՝ սկսեցին այնուհետև հետզհետէ ծախել իրենց կալուածները։ Գնողներ էլ շատ գտնուեցան, հարկաւ այն յուսով, որ Տաճկաստանից գաղթող հայերին տան ի շահեցողութիւն և ի մշակումն։ Զարմանալին և ուշագրաւ կէտը ներկայ պարագայում այն է, որ Ախալցխայի շրջանի կառավարիչ գնդապետ Դրէշէրնը, օրինակի համար, մի կողմից գաղթականների յանձնաժողովին ցուցակ էր ուղարկում թէ Ախալցխայում այսքան ու այսինչ արքունի ազատ հողեր կան, որոց տէրերը Տաճկաստան են գաղթել բոլորովին և այլևս յետ դառնալու չեն, իսկ միւս կողմից՝ այդ հողերի նախկին տէրերի անձնական ներկայութեամբ կամ նրանց հաւա-

տարմաթղթերով տեղի ունեցած վաճառքների թղթերն էր հաստատում և վաւերացնում։

ԿԷ.

Գաղթականական յանձնաժողովը՝ հիմնելով Դրէշէրի նախկին գրութիւնների վրայ, հիմնելով նրա ներկայացրած իբրև թէ արքունի, ազատ հողերի ցուցակների վրայ,—գաղթականների մի մեծ խումբ Ախալցխա ուղարկեց, թւով 1600 գերդաստան։ Դրէշէրը իսկոյն նրանց տեղափոխեց իր և գաղթականների նշանակած հողերի վրայ։ Եւ գաղթականները՝ կառավարութիւնից ստացած նպաստով անմիջապէս ձեռնարկեցին իրենց համար բնակարաններ շինել, արհեստանոցներ հիմնել, տնտեսութիւն կազմել, իրենց տրուած արքունի ազատ հողերը վարել ու ցանել։

Բայց ահա մէկզմէկու ետևից, կարծես նախամտածուած ծրագրով, այդ հողերի իսկական տէրերը լոյս ընկան և Դրէշէրնին ներկայացնելով իր իսկ ձեռքով վաւերացրած կալուածագրերը, պահանջում էին, որ նա կամ նորեկ գաղթականներին գուրս հանէ իրանց պատկանեալ տեղերից և կամ նրանց պարտաւորեցնէ սահմանեալ հարկն ու տուրքը վճարելու կալուածատէրերին։

Օրինաւոր իշխանաւորը,—Դրէշէրնը դիմելով գաղթականներին ստիպում է անշուշտ բաւակա-

նութիւն տալ կալածատէրերի դէմ երկրորդ և և «աւելի արդարամիտ և օրինական պահանջին»։

Գաղթականները մերժում են՝ յայտնելով, որ Կայսեր խոստման համաձայն՝ նրանք վեց տարի արքունի հարկերից և 3 տարի զօր ու բեգեարից ազատ պէտք է լինին։

Դրէշէրնը ուշադրութիւն չդարձրեց և շարունակեց իր սահմանքը։

Սկսեցան բողոքներ, գանգատներ, բանակցութիւններ, գրագրութիւններ։

Ուր ուրեմն Պասկեիչը միջամտեցաւ և Կայսրից թոյլատրութիւն ստանալով՝ կալածատէրերից կրկնապատիկ արժողութեամբ գնեց նրանց հողերը և վերածելով արքունի հողերի՝ յանձնեց գաղթականներին։ Եւ այսպիսով վերջ տուեց նրանց նեղութիւններին այդ կողմերից։

Զանց եմ անում նկարագրել միւս այն բազմապիսի նեղութիւններն ու զոհողութիւնները, որոց ստիպուեցան գաղթականները տանել իրանց նոր հայրենիքի օդի, ջրի և այլ պատահարների ու հարուածների երեսից։ Այդ ամենը սպասելի էր։ Եւ կառավարութիւնը գաղթականների այդ կարգի նեղութիւններն թեթևացնելու համար անում էր, ինչ որ կարող էր և ձեռնհաս անելու։ Արդէն ասել եմ որ այդ կողմից տաճկահայ գաղթականներն՝ բաղդաւոր գտնուեցան պարսկահայ գաղթականների համեմատութեամբ։

Սակայն մի բան, որ յատուկ էր ոչ միայն

պարսկահայ և տաճկահայ դաղթականներին, այլ նաև Անդրկովկասի բոլոր ազգերին անխտիր,— դա այն յոռի, վատթար կառավարութիւնն էր, որով կառավարւում էին այդ ազգերը ռուսական Արծւի հովանւոյն ներքև՝ տասնեհինգերորդ դարու հէնց սկզբից ի վեր։

ԿԸ.

Ահա այդ կառավարութեան թռուցիկ նըկարը, որ երևում է ռուսական պաշտօնական դօկումենտներում դեռ ևս Պասկեվիչի օրերում, նրա սպարապետութեան ժամանակ։

«Ղազախի և միւս բոլոր դաւառների,—գրում է քննիչ Զավիլևսկին,—գիւղացիներն ևս անխտիր ըստ արտաքին ձևին են ազատ, այն ինչ ի մօտոյ քննելով անկարելի է չտեսնել, որ նրանք,—գիւղացիներն ամենադառն ստրկութեան մէջ են գտնւում աղալարների և մելիքների ձեռքին»։

«Մանաւանդ զարմացքի արժանի է, որ հայերը, ճշմարտապէս հաւատարիմ լինելով տէրութեան, և ամենից շատ հակւած լինելով դէպի արհեստները, երկրագործութիւնն ու առևտուրը, և վերջապէս կազմելով ամենաօգտաւէտ և գործունեայ տարրը այստեղի ժողովրդի մէջ, ստրուկ են թուրք ապստամբ աղալարների ձեռքում, որոնք թալանում են նրանց և բոլորովին աւերում միմիայն առ ռուսաց դէմն ունեցած ներ-

մեռանդութեան համար։ Ոչ մի տեղ, բացի Վրաստանից, Պարսկաստանից, Տաճկաստանից, Եգիպտոսից և Աֆրիկեան աշխարհներից, քրիստոնեաները այս ասաիճան ստրկութեան մէջ չեն գըտընում մահմեդականների ձեռքին»։

ԿԹ.

Ահա և մի այլ քննչի,—ընթերցողին յայտնի Զուբարեովի,—մի այլ նկարագիրը։

«Առհասարակ Ղարաբաղում մաղալների նայիբները ճնշում են ժողովրդին և մեծ անկարգութիւններ են անում, բայց Վարանդի մահալի նայիբ պրապորշչիկ Խուդադը՝ գերազանցեց ամենքին։ Ինքը լինելով անբարոյական և հարբեցող՝ շրջում է գիւղերը շրջապատած հարբեցող և յանդուգն ծառաներով և առանց որևէ պատճառի սաստիկ զանազոծում է բնակիչներին։

Նոյնը անում են նաև նրա Միրզան (գրագիրը) և ծառաները։ Միանգամայն առանց որևէ իրաւունքի նա ժողովում է արքունի գիւղերի բնակիչներից ամեն մի գութանից և ամեն մի չութից՝ մի-մի սոմառ ցորեն, առնում է դրամական տուգանք, առնում է կաշառք։ Նոյնը գործում է և նրա Միրզա՝ Ասրի Բաբան գիւղացիներից ամեն մի տարի իրան համար 60 սոմառ հաց ժողովելով»։

«Ես ինքս,—շարունակում է քննիչը,—ականատես եղայ Մելիք Խուդադի հետևեալ ա-

բարքին։ Ես շրջում էի Վարանդի մահալը։ Կաղարծի գիւղում մօտս եկաւ Մելիք Խուդադը, ըստ սովորականին, հարբած։

Այդ միջոցին մի հայ մտադիր էր պսակելու նոյն գիւղացի մի այրի կնոջ հետ, և որովհետև մէջ տեղում ոչ մի արգելք չկար, վասն որոյ նրանք պատրաստւում էին նոյն գիշերն ևեթ պսակելու։ Այս բանը լսելով՝ Խուդադը արգելեց քահանային պսակի խորհուրդ կատարելու և իմ ներկայութեամբ՝ փեսայացուից 20 ոսկի էր պահանջում.

Բացի այդ հարսնացուին իր մօտ կանչելով՝ նրան զգիր առաջարկութիւն արաւ։

«Իրաւունք չունենալով հրամայելու Խուդադին իր անկարգութիւններին վերջ տալ, ես խնդրեցի նրան և մեծ դժուարութեամբ կարողացայ համոզել, որ չարգելէ պսակադրութիւնը։ Վերջապէս քահանան իրաւունք ստանալով՝ եկեղեցի գնաց պսակելու։ Հետաքրքրութիւնից շարժւած ես էլ հետևեցի նրան։ Հազիւ սրբազան խորհուրդն սկսած էր, ահա հարբած Խուդադը եկեղեցի մտաւ և սկսեց գոռգոռալ և ամենանպատկառ բառերով յիշոցներ տալ թէ քահանային և թէ պսակւողներին։ Վերջապէս հրամայեց քահանային շուտով պսակը վերջացնել, որովհետև հարսնացուին նա իր մօտ է տանելու...»։

Հ.

«Մի կերպ ես համոզեցի Խուդադին և հեռացրի եկեղեցուց։ Ինքս էլ տուն գնացի։ Բայց

ահա գիւղից շփոթի և աղաղակի ձայներ եմ լսում։

Պատճառն իմանալու համար մարդ ուղարկեցի, որ յետ գալով պատմեց թէ՝ Մելիք-Խուդադը մի պատուաւոր գիւղացուց,—քէթխուդայից պահանջել է նրան ընծայել իր հրացանը, բայց քէթխուդան բացասել է։ Դրա համար էլ Խուդադը սկսել է փայտով թակել, ջարդել քէթխուդային։ Հետևեալ օրը ես միւս գիւղերը գընացի, իսկ Խուդադը գիւղում երկու օր հարբեցողութիւն անելուց յետոյ մեկնել է միւս գիւղերը և ամեն տեղ առանց պատճառի սաստկապէս գանակոծել է բնակիչներին։ Եւ ինչպէս ինձ պատմեցին, Եմիշեան գիւղումն էլ բռնաբարել է մի հայ կնոջ»։

«Վարանդի բնակիչներն բազմաթիւ խնդիրներ են մատուցել բարձր իշխանութեանը, բայց բաւարարութիւն չեն ստացել։ Որովհետև ազգակցական նշանաւոր կապերի շնորհիւ Խուդադը օրէնքի չէ ենթարկւում»։

«Բնակիչները միաբերան ասում են, որ եթէ իշխանութիւնը այս նայիրից իրանց չազատէ,—ստիպուած կը լինեն գաղթելու այստեղից։ Իմ գրածների ճշմարտութիւնը կը հաստատեն բնակիչները՝ եթէ քննութիւն բացւի, միայն թէ քննիչը Շուշւայ պաշտօնեաներից չլինի և քննութիւն կատարելու պատճառաւ՝ Մելիք-Խուդադը պաշտօնից հեռացնի» *)։

*) Ամենայն Հայ. Կաթ. Ա. եր. 342—344։

ՀԱ.

Ռուս քննչի այս տողերի վրայ պէտք է աւելացնել և այն, որ, իրանց հերթում, ինչպէս մահմեդականները, նոյնպէս և Անդրկովկասի բոլոր միւս ազգերը՝ ամենադառն ստրկութեան մէջ էին գտնւում բիւրոկրատիայի ձեռին՝ կուսակալներից սկսել մինչև յետին պաշտօնեայն։

Որովհետև ինչպէս 1830 թւականում կատարւած սենատօրական քննութիւնից *) երևաց, ռուսների 30 տարեայ տիրապետութիւնից յետոյ էլ՝ Անդրկովկասը տակաւին կատարելապէս իր վրայ էր կրում նախկին իշխողների անհաշիւ, անսանձ, կամայական և անորոշ ձևի կառավարութեան դրոշմը։

Ամեն տեղ կառավարութեան այլևայլ ձևեր, ամեն տեղ իշխանաւորների պարտքերի և իրաւունքների անորոշութիւն, օրէնքի բացակայութիւն։

Մի տեղ ռուսական օրէնքը խառն տեղական օրէնքի և կառավարութեան հետ, մի այլ տեղ ոչ այս և ոչ այն, այլ լի ու լի և ամենակատարեալ կամայականութիւն։

Կայսերական հրամաններն ոչ միայն անգործադիր էին թողնւում, այլ բոլորովին նրանց հակառակ կարգադրութիւններ էին անում։

Արնպիսի իշխանութիւններ և պաշտօնէու-

---

*) Актъ, VII, եր. 1—13, № 1։

թիւններ էին սահմանւում և պաշտօնեաներ էին կարգւում, որոց միայն կայսրը կարող էր սահմանել ու կարգել։

Արքունի կալւածների ոչ տեղն էին իմանում, ոչ չափը և ոչ էլ արժէքը։

Կաշառակերութիւնը գագաթնակէտին էր հասել։

Ժողովրդական տուրքերը բազմազան էին և անթիւ։ Ժողովուրդը տուրք էր վճարում ամեն տեսակ առևտրի և արհեստի համար։

Հարկից ազատ չէին նոյնիսկ կենսական մրթերքները։ Ժողովուրդը հարկ կամ մաքս էր վճարում ոչ միայն տէրութեանը, այլև այն կալւածատիրոջը, որի կալւածի միջով տէրը իր ապրանքը ծախելու էր տանում մի այլ տեղ։

Բեգեառների համար գանձարանից գիւղացիներին հասանելի դրամը յաճախ իշխանաւորների գրպանն էր մտնում։

Բեգեառների ժամանակ այնքան հեռաւոր ճանապարհներ էին քշում, որ խեղճերի կենդանիները ճանապարհին երբեմն սատկում, վայր էին ընկնում։ Եւ այդպիսի դէպքերում փոխանակ թշւառ գիւղացուն ազատ թողնելու, ստիպում էին իր հաշւով նոր կենդանիներ գնել և արքունի բեռը տանել տեղ հասցնել։

Արքունի հարկերի հաւաքումը մասնաւոր մարդկանց էր յանձնում, որոնք իրանց հաւաքած դրամները տեղական իշխանաւորների հետ բաժին էին անում։ Իսկ պաշտօնական մատեաններ-

բումը այդ գումարները ժողովրդի վրայ ապառիկ էին հաշուում և շատ անգամ ստացուում էին կրկին անգամ ի հարկէ, բռնութեամբ։

Անդրկովկասեան աշխարհդ տեղական իշխանաւորները ոչ թէ օրէնքի պահպանման, այլ օրէնքի ոտնահարման տիպարներ էին։ Գողերին բռնելիս՝ նրանք գողացած փողերն ու իրեղէնները նրանց ձեռքից առնելով իրանց էին սեփականացնում։ Նոյնիսկ գողերին և աւազակներին հովանաւորում էին, որպէսզի կրկին և կրկին շահուին նրանցմով։

Աշխարհագիր եղած չէր։

Ժողովրդի թւի ճիշտ ցուցակներ չկային։ Ուստի պետական պաշտօնեաները, երկար տարիների ընթացքում, իրանց գրպանն էին դնում այն հարկերը, որ իրանց ցուցակներից դուրս մնացած ժողովրդից էին հաւաքում։

ՀԲ.

Երմոլով կուսակալը մի տեսակ դատարան էր հիմնել բաղկացած 4 թուրքից կամ հայից Դատարանի նախագահը՝ միշտ զինուորական սպայ էր լինում, որ կոչւում էր կոմենդանտ։

Այս դատարաններն,—աւելի ճիշտը այս դատարանների նախագահներն,—ամեն մի գործի նախնական քննութիւնը իրանք էին կատարում, յետոյ՝ իրանք էին դատաստան տեսնում կամ

դատում և վճռում իրանք իրանց վճիռը ի կատար ածում։ Բողոքելու իրաւունք չկար։

Դատարանների միւս անդամների պարտականութիւնը ոչ այլ ինչ էր, եթէ ոչ անտրտունջ և անպայման հնազանդել իրանց նախագահի կարգադրութիւններին։ Հակառակ դէպքում նախագահը նրանց ևս պատժում էր։ Որովհետև դատաւորները, մեծ մասամբ, անգրագէտ մարդիկ էին լինում, ուստի երբ նրանք մի գործի համար դատարան էին հրաւիրւում՝ դատելուց առաջ՝ մի թերթ սպիտակ թերթի վրայ դնում էին իրանց կնիքները և յետոյ դատավարութեանը ներկայ լինում։ Նրանց գննալուց յետոյ՝ կոմենդանտը կնքւած, սպիտակ թերթի վրայ յետոյ գրում էր դատարանի վճիռը։

Այսպէս ուրեմն՝ յաճախ միմիայն պօրուչիկի ստիճան ունեցող կոմենդանտից էր կախւած ժողովրդի իրաւունքը, նրա կայքը, նրա պատիւը։

Սակայն լինում էին դէպքեր, երբ այս դատարաններն ևս նախանձելի էին դառնում, ուր մեղադրեալը գոնէ խօսելու, բացատրութիւն տալու աւելի էր ունենում։

Երբեմն այնպիսի դէպքեր էլ էին տեղի ունենում, երբ մարդկանց, առանց քննութեան և հարցուփորձի, ուղղակի կեանքից զրկում էին կախելով կամ խեղդելով։

ՀԳ.

Եւ այս գրութիւնը Անդրկովկասում տիրում էր ոչ թէ մի երկու տարի, այլ տասնեկաւոր տարիներ։ Մի տեղական քննութեան հետևում էր ուրիշը, մի սենատորական քննութեան յաջորդում էր երկրորդը, սակայն ժողովուրդը չէր կարող ազատուել իրան վրայ կառավարիչ կարգուած, քրիստոնէի անգոյրով շպարուած խաներից և սարդարներից,—բիւրոկրատիայի այդ սիւներից, որոնք ամենաանխիղճ կերպով կեղեքում և տրորում էին թշուառ ժողովրդին։ Վերջինս էլ ռուսաց լեզին և օրէնքին անտեղեակ 1837 թուին, երբ Նիքոդայոս Ա. Կայսրը Արարատեան աշխարհին այցելեց, տարօրինակ ձևերով էր արտայայտում իր բողոքները։ Նա, ժողովուրդը կայսեր անցած ճանապարհների վրայ չորացած ցախ ու խոտ էր փռում և հէնց Կայսեր աչքի առաջ կրակ տալիս, ուզելով հասկացնել Կայսեր թէ ահա մենք էլ այսպէս ենք այրւում մեր իշխանաւորների ձեռքից։

Սարդարապատցի մի հայ մի նիհար և լերկ աքաղաղ ներկայացրեց Կայսեր։ Երբ զարմացած Կայսրը կամեցաւ պատճառը իմանալ,—նրան բացատրեցին թէ՝ գիւղացին կամենում է ասել, որ Կայսեր պաշտօնեաները ժողովրդին այն աքաղաղի օրին են հասցրել։

Գաւառական ժողովրդի այս ասիական ձե-

ւերով արտայայտւած բողոքներից տարբեր եղաւ Երևանի ազգաբնակութեան բողոքը։

Երևանցիք դրաւոր մի բողոք էին պատրաստել Կայսեր տալու՝ իրանց իշխանաւորների դէմ։ Սակայն ոստիկանութիւնը թոյլ չտւեց։ Բողոքարկուները չվնասեցան սակայն։

Երբ սարդարի պալատում Կայսրը իր շքախմբի անդամների հետ ճաշի նստեց, դրսի ժողովրդի աղմկալի ձայներ լսեցան թէ «վնդիր ունինք տալու, չեն թողնում»։

— «Այս ինչ ձայներ են» հարցրեց Կայսրը։

— «Ժողովուրդը Ձերդ Կայսերական Մեծութեան շնորհաբեր գալստեան պատճառաւ՝ իր ուրախութիւնն է արտայայտում» պատասխանեց կուսակալ բարոն Ռոզէնը, որ Կայսեր սեղանակից էր։

ՀԴ.

Իսկ այս կուսակալի ինչ պտուղ լինելը ցոյց տալու համար՝ բաւական ենք համարում հետեւեալ իրողութիւնը հրապարակ հանել։

Էջմիածնի պահարաններից մէկում մեծ զգուշութեամբ՝ հայրապետական մի խոյր (թագ) էր պահւում թանկագին քարերով զարդարւած։

Բաղդի բերմամբ այդ թանկագին թագը, իր ժամանակին, իշխան Ցիցիանովի և գենեռալ Նէսվէտայեւի ճանկը չէր ընկած, երբ սրանք 1805 թ-ին, Էջմիածնի ամբողջ հարստութիւնը,

—ոսկէզրաքաներն, անօթ ու մասունքներն, թանդարժէք զգեստեղէնքն, վեր առան և տարան իբրև թէ պարսից ճանկը չձգել տալու համար։

Սակայն թանկագին թագի գոյութիւնը ոմանց յայտնի էր։ Սրանց թւում և Ռօզէնին ու իր կնոջը,—պառօնէսա Ռօզէնին։

1833 թւին կուսակալը իր թիկնապահ Եաղիկովսկին մի պաշտօնական յանձնարարութեամբ Էջմիածին ուղարկելիս՝ յանձնարարել էր նրան նաև յայտնել կաթողիկոսին, որ բարոնէսան շատ է ցանկանում Էջմիածնի հայրապետական թագը տեսնել։

Տիկնոջ այդ ցանկութիւնը նրա ջերմեռանդութեանը վերագրելով՝ Յովհաննէս կաթողիկոսը՝ իր մօտ թարգման կարգած Մկրտիչ Քարտաշեան պաշտօնէի ձեռքով թագը Թիֆլիզ կուսակալին ուղարկեց։

Բարոնեսան թագը վեց ամիս իր մօտ պահելուց յետոյ՝ թագի վրայի թանկագին քարերը՝ կեղծ քարերով փոխանակեց և կաթողիկոսին վերադարձրեց։

Այս խարդախութիւնը կատարեցաւ Թիֆլիզեցի Կուսիկեան ակնավաճառի ձեռքով, որ դրա համար կուսակալից ստացաւ ոսկեայ մեդալ վզի, իսկ նրա կնոջից 300 ոսկի աշխատանքի վարձ *)։

Սրանք էին ահա Անդրկովկասեան երկրի

---

*) Ամենայն Հայ. Կաթ. Բ. եր 394։

առաջնակարգ իշխանաւորները, իրանց նման և աւելի վատթար երկրորդ, երրորդ և չորրորդ կարգի իշխանաւորներով, որոց ձեռքին տառապում ու տանջւում էր ամբողջ ազգաբնակութիւնը։

Հե.

Պատմութիւնը աւանդում է թէ երբ 1829 թւին ռուսերը տիրեցին Արարատեան աշխարհին՝ հնդկահայերի ուրախութեանը չափ չկար։

Նրանցից շատ շատերը այն ասպիսան ոգեւորւեցան մայր հայրենիքի ազատութեան լրոյ, որ կամենում էին տեղափոխել այնտեղ։ Միւսները իրանց կտակները պատրաստեցին յօգուտ հայրենիքին։ Եղան այնպիսիներն էլ, որոնք այժմեանից ելեթ ցանկացան իրանց խոշոր դրամագլուխները տեղափոխել Հայաստան՝ տեղւոյն անտեսական վիճակը բարձրացնելու, ծաղկեցնելու նպատակաւ։ Դրանցից էր Յովսէփ Յովհաննիսեան Ամիրխանեանց, որ 1829 թ. հոկտեմբերի 20-ին Ներսէս արքեպիսկոպոսին մի ընդարձակ նամակ գրելով՝ խնդրում էր ծանուցանել իրան թէ՝ «Ռուսիան ինչ մտադրութիւն ունի մեր ազգի վերաբերութեամբ՝ արդեօք ինքը տիրապետելով պիտի կառավարէ Հայաստանը, թէ՞ պիտի դարձնէ Նրան իր տէրութեան մի առանձին անկախ մասը»։

Այնուհետև յայտնելով որ ինքը տարեկան

հինգ լաք ռուբի, (կէս միլիոն ռուբլի) եկամուտ ունի՝ Ամիրխանեանը ցանկութիւն է յայտնում ռուսաց կառավարութիւնից գնել «Ղարաբաղի աշխարհը Փայտակարանի հետ միասին, կամ թէ՝ մի ուրիշ հարկ տալ նրանց տիրելու համար» *)։

Ամիրխանեանցի այս նամակը երկար ժամանակ ճանապարհներին մնալուց յետոյ՝ վերջապէս հասաւ Թիֆլիզ, որտեղից ուղարկուեցաւ Քիշնև։ Աշտարակեցին նամակը ուղարկեց Պետերբուրգ Լազարեանին, իսկ սա էլ ռսերէն թարգմանութեամբ ներկայացրեց ժանդարմիայի շէֆ Բենդէնդորֆ կոմսին։ Սա էլ ներկայացրեց Կայսեր, որ այս էր պատասխանել «Թող նա (Ամիրխանեանը) գայ այստեղ, իսկ նրա պահանջած տեղեկութիւնները ես ինքս կուտամ, երբ իրան տեսնեմ»։

Կայսեր այս պատասխանը Լազարեանը հաղորդեց Ներսէսին, խորհուրդ տալով նրան՝ Ամիրխանեանցին Պետերբուրգ հրաւիրելու։

Թէ այնուհետև ինչ կատարուեցաւ։ Հրաւիրեց արդեօք Ներսէսը Ամիրխանեանցին Պետերբուրգ թէ ոչ։ Եւ ինչ իմաստով կամ բովանդակութեամբ յայտնի չէ։

Այսքան միայն յայտնի է, որ Ներսէսի Բեսարաբիա աքսորելու լուրը՝ հնդկահայերի վրայ վատ ազդեցութիւն ունեցաւ։

Անշուշտ Ներսէսը, որ շարունակ նրանց

---

*) Собр. актовъ, եր. 297։

հետ գրագրութիւն էր ունեցել, Բեսարաբիայից էլ նրանց կը ծանօթացնէր իր «որբացեալ ազգի *) վիճակի հետ...։

Ուստի փոխանակ Յովսէփ Ամիրխանեանցի և այլ հարուստ հնդկահայերի Հայաստան փոխադրուելն իրանց դրամագլուխներով՝ յանկարծ նրանց բողոքագիրը ստացուեց հայոց եկեղեցւոյ կառավարութեան համար 1836 մարտին սահմանուած կանոնադրութեան դէմ (Положеніе).

Հէնց այդ բողոքագրով էլ փակուեցաւ Հայկական հարցի այս չորրորդ շրջանը։



*) Բիշինևից Պասկևիչին ուղղած մի սարքազմով լի նամակում Ներսէսը այսպէս է անուանում հայերին։

[10n]

A 297

ՀԵՂԻՆԱԿԻ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՆՍԵՐԸ

Սպառած են

1. Զէնիաթ—զէնիաթ
2. Գլխագին
3. Ապօրինի զաւակը
4. Գինեղէն
5. Ռաֆֆի «Կայծերը»
6. Կայինը քարին դպաւ
7. Մտորումներ
8. Պատմական Բաղուածներ Ա. պրակ
9. „ „ Բ. „
10. „ „ Գ. „
11. „ „ Դ. „
12. „ „ Ե. „
13. „ „ Զ. „
14. „ „ Է. „
15. Իսրայէլ Օրին և իր քաղաքական ծրագիրը
16. Հայկական հարցի երկրորդ շրջանը
17. Հայկական հարցի երրորդ շրջանը
18. Հայկական հարցի չորրորդ շրջանը

60 կ.

70 կ.

Դիմել՝ Баку, Հայ Գաղթականներին Նպաստող Յանձնախմբին։

ՀԱՅԻ ԳՐԱԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԳՐԱԴԱՐԱՆ ԱԿԱԳԵՄԻԱ